



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՄԻԿՐՈՒԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

### ԴԻԼԻՋԱՆ

Ք. Դիլիջան, Աղավնավանք, Գոշ, Թեղուր, Հաղարծին, Հովք, Խաչարձան  
ՓՈՒԼ 1  
(նախնական)  
ՏԵՔՍԱՅԻՆ ԵՎ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԵՐ

Պատվիրատու՝  
Պատվեր՝

ՀՀ Քաղաքաշինության կոմիտե  
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36

ՏՆՕՐԵՆ՝

Ա.ՀԱԿՈՒՅԱՆ

Երևան 2019-2020

ԳԻՐՔ 1 ՏԵՔՍԱՅԻՆ ՄԱՍ Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	6
<b>ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ .....</b>	<b>6</b>
<b>Գլուխ 1 .....</b>	<b>9</b>
<b>ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ .....</b>	<b>9</b>
<b>1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ .....</b>	<b>10</b>
Պատմաաշխարհագրական ակնարկ .....	11
<b>Կլիմայական պայմաններ .....</b>	<b>11</b>
<b>Բնության հատուկ պահպանվող տարածքներ .....</b>	<b>12</b>
Անտառ .....	14
<b>Կենսաբազմազանություն .....</b>	<b>16</b>
Բուսական աշխարհ .....	16
Կենդանական աշխարհ .....	17
<b>Զրագրություն .....</b>	<b>18</b>
<b>1.2. Բնակչության և ժողովրդագրության վերլուծություն .....</b>	<b>21</b>
<b>Բնակչություն .....</b>	<b>21</b>
<b>1.3. Տնտեսության արդի վիճակը .....</b>	<b>25</b>
<b>Արդյունաբերություն և առևտուր .....</b>	<b>25</b>
<b>Համայնքի զարգացման ծարգիր .....</b>	<b>25</b>
<b>Զբոսաշրջային և հյուրանոցային ենթակառուցվածքներ .....</b>	<b>26</b>
<b>1.3. Պատմության և մշակութային ժառանգություն .....</b>	<b>26</b>
<b>Դիլիջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (Տավուշի մարզ) .....</b>	<b>27</b>
Կիրառական արվեստ .....	35
Գեղանկարչություն .....	37
<b>Կրթական հաստատություններ .....</b>	<b>38</b>
Ավանդություն .....	70
Բնակչություն .....	71
Կլիմա .....	71

Տնտեսություն.....	71
Պատմամշակութային կառույցներ.....	71
Գոշի պատմության և մշակութի անշարժ հուշարձանների ցանկ (Տավուշի մարզ)....	71
<b>Ծագումաբանություն.....</b>	<b>80</b>
Պատմություն.....	80
Ճարտարապետություն.....	80
Սուրբ Գրիգոր եկեղեցի.....	81
Սուրբ Աստվածածին եկեղեցի.....	81
Սեղանատուն.....	81
Ներկա վիճակը.....	82
Տնտեսություն.....	93
Օգտակար հանածոներ.....	93
Պատմամշակութային կոթողներ.....	93
Հասարակական կառույցներ.....	93
Բնակչություն.....	95
Տնտեսություն.....	95
Պատմամշակութային կառույցներ.....	95
<b>Կրթական ենթակառուցվածքներ.....</b>	<b>100</b>
<b>1.4. Միկրոռեգիոնի համայնքների ընդհանուր բնութագիրը.....</b>	<b>100</b>
1.4.1. <b>Համայնքի խնդիրները.....</b>	<b>100</b>
1.4.2. <b>Ռազմավարական նպատակներ.....</b>	<b>101</b>
1.4.2.1. <b>Բնության հատուկ պահպանվող տարածքներ</b> Error!    Bookmark    not defined.	
1.4.3. <b>Կենսաբազմազանությունը /4, 5, 6/.....</b>	<b>102</b>
1.4.3.1. <b>Բուսական աշխարհ.....</b>	<b>102</b>
1.4.3.2. <b>Կենդանական աշխարհ.....</b>	<b>103</b>
1.4.3.3. <b>Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ.....</b>	<b>103</b>
1.4.3.4. <b>Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ.....</b>	<b>104</b>
1.4.4. <b>Տարածքի բնական միջավայրի գնահատումն ըստ տեխնածին ազդեցության     ընկալունակության /7/.....</b>	<b>104</b>
7. <b>Թափոնների կառավարում.....</b>	<b>104</b>
7.1 <b>Աղբավայրեր.....</b>	<b>104</b>
<b>Տարածքի վերլուծություն և համալիր գնահատական.....</b>	<b>106</b>
Շրջակա միջավայրի քաղաքաշինական-էկոլոգիական վիճակի վերլուծություն.....	106

Դիվիզան քաղաքային բնակավայրի քաղաքաշինական զարգացման վերլուծությունը .....	107
Տարածքի գործոնային գնահատականն ըստ բնական պայմանների .....	107
1.1.1. Առողջարանային ռեսուրսներ .....	110
<b>Շրջակա միջավայրի գոյություն ունեցող իրավիճակի գնահատականը</b> .....	112
Շրջակա միջավայրի ներկա իրավիճակը .....	114
Մակերևութային ջրահոսքեր .....	117
Աղտոտում կոշտ թափոններով .....	119
Սննդի արդյունաբերության ձեռնարկությունների արտահոսքեր .....	119
Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը .....	119
<b>Աղբահանություն</b> .....	119
Կոշտ թափոնների հեռացման և ոչնչացման համակարգի մշակումը պահանջում է պետական-մասնավոր գործընկերության վրա հիմնված մոտեցման կիրառում: Առաջին հերթին անհրաժեշտ է ձեռք բերել աղբահանող տեխնիկա և կատարել գործող աղբավայրի սանիտարական մշակում: Ներկայումս քննարկվում է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի հետ համատեղ ծրագիր նախաձեռնելու հնարավորությունը, որի տեխնիկական գնահատումն ու ֆինանսավորումը կիրականացվի գերմանական «KfW» բանկի կողմից: Առաջին նախագծով նախատեսվում է գործող աղբավայրի փակում և կոշտ թափոնների հավաքման ու փոխադրման կայանի կառուցում: .....	121
Արդյունաբերական թափոններ .....	121
Օրգանական ծագման թափոններ .....	121
Այրման գործնթացի ավարտից հետո առաջացաց մոխիրը պարբերաբար հեռացվում է վառարանի հատակից: Մոխրի քանակը կազմում է այրված թափոնների 1/1.15%-ը: Ենթակա են թաղման ՀՀ առողջապահության նախարարության կողմից նախատեսված վայրում: .....	123
1.2. <b>Ֆիզիկա-աշխարհագրական և տեխնաժին պայմանները</b> .....	123
1.2.1. Տարածքի ինժեներատեղարարական պայմանները .....	124
Հանձնարարականներ .....	128



ԳԻՐՔ 2

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Միկրոռեզիոնի առանձին բնակավայրերի.

Հենակետային հատակագիծ (բնակավայրերի փաստացի օգտագործման հատակագիծ) Մ 1 :  
5 000

Ռիսկերի և սահմանափակումների հատակագիծ (Տարածքի համալիր գնահատման  
հատակագիծ) Մ1 : 5 000

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն: Դրա հետ կապված առաջացել է անհրաժեշտություն փաստաթղթերի մշակման նոր տիպի նպատակային ծրագրի, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին և կներառի տարածական պլանավորման հիերարխիական երեք մակարդակ՝ մարզի (տարածքային հատակագծման նախագիծ), համայնքի (գլխավոր հատակագիծ) և բնակավայրի (գոտևորման նախագիծ):

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիրի իրականացմամբ:

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Ք.Դիլիջան, Աղավնավանք, Գոշ, Թեղուտ, Հաղարծին, Հովք, Խաչարձան) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36, 2019թ.) և վերջինիս կողմից տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մշակվող միկրոռեգիոնալ մակարդակի փաստաթուղթն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ: Տարադական պլանավորման մասով նախագծում տրված են առաջարկներ՝ հեռանկարային տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրության, ներդրումների համար նպաստավոր ոլորտների և գոտիների, արտադրության հիմնական ճյուղերի զարգացման, ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, շրջակա միջավայրի բարելավման և պահպանման, ինժեներատրանսպորտային և կոմունալ-կենցաղային ենթակառուցվածքների կատարելագործման, պատմամշակութային ժառանգության պահպանության, տարածքի ինժեներական նախապատրաստման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանն ուղղությամբ:

## ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ: Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական գործընթացի առավել ակտիվ

մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ Հետևաբար, արդի<sup>a</sup> նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով տարածաշրջանի կայուն զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում խթանելու ներդրումային գրավչությունը:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և պետական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:
- Հայաստանի Հանրապետության օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261):
- ՀՀ օրենքը բուսական աշխարհի մասին (1999 թ.23 նոյեմբերի, ՀՕ-22):
- ՀՀ օրենքը Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006 թ. Նոյեմբերի 23, ՀՕ-211-Ն):
- ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը:
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը:
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը:
- Հայաստանի Հանրապետության կառավարության N 855-ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:
- Կարգ բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված 14.05.01 N 408 որոշմամբ):
- Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ):
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 1059-Ա որոշումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը,

պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշումը ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 190-Ն որոշումը «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշումը Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Վերոշյալ նորմատիվ իրավական փաստաթղթերը կանոնակարգում են համայնքների քաղաքաշինական զարգացումը՝ հիմնված հետևյալ հիմնական փուլերի վրա.

- համայնքներում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտում ու վերլուծությունը,

- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու սահմանազատումը:

- առաջնային սպասարկման և սոցիալական ենթակառուցվածքի անհրաժեշտ կազմի առաջադրումը և տեղաբաշխումը,

- համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,

- միասնական քաղաքաշինական միջավայրի ձևավորմանը միտված՝ համայնքների տարածքում կառուցապատման սահմանափակումների և չափորոշիչների համակարգի մշակումը:

Նախագծում հաշվի են առնվել նաև.

- Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատակագծերը: ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ Կառավարությանն առընթեր Ջրային տնտեսության պետական կոմիտեի, ՀՀ Տավուշի մարզպետարանի, Դիլիջան համայնքի բնակավայրերի ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:

- ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կադաստրային քարտեզները:

- «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները:

Նախագծում հաշվի են առնված ՍԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

- Տնտեսության կայուն զարգացում
  - Արդյունաբերություն,
  - Գիտատար արդյունաբերական արտադրություն,
  - Ագրոարտադրական համալիր,
  - Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
  - Փոքր և միջին բիզնես,

- Բնապահպանական միջոցառումներ:
- Քաղաքաշինության կայուն զարգացում՝
  - Բնակելի շինարարություն,
  - Բնակելի-կոմունալ շինարարություն,
  - Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործում,
  - Բնապահպանական միջոցառումներ:
- Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝
  - Տրանսպորտ,
  - Ջրամատակարարում, ջրահեռացում,
  - Էներգամատակարարում,
  - Թափոնների օգտահանում,
  - Բնապահպանական միջոցառումներ:

### **Ակնկալվող արդյունքներ**

- 1) Միկրոռեգիոնի և մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 3) Արդյունաբերության զարգացում
- 4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 5) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
- 6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
- 7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 9) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
- 10) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
- 11) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

### **Գլուխ 1**

## **ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**

Նախագծի շրջանակում միկրոռեգիոնների տարածքները դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված տարածական միավորներ և որպես միասնության անբաժանելի մասեր կազմող վարչատարածքային միավորների՝ համայնքների համախումբ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում, պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջադրում:

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,

- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտատրծումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրարագրերը և դրանց իրականացման գործընթացը:

Դիլիջան խոշորացած համայնքը ընդգրկում է Դիլիջան քաղաքային և 6 գյուղական բնակավայրեր: Դիլիջան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում, որի միջով անցնում է Երևան-Վրաստանի սահման միջպետական մայրուղին: Մայրաքաղաքից հեռավորությունը 99 կմ է: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 63,317 հա է, որից ավելի քան 50 տոկոսը «Դիլիջան ազգային պարկի» անտառային հողերն են: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը կազմել է 26,700 մարդ, որոնց 70%-ը քաղաքային բնակչությունն է, իսկ 30%-ը գյուղական: Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 18670 մարդ, որոնցից 50.8% տղամարդիկ են և 49.2%-ը՝ կանայք: Պաշտոնական գործազրկության մակարդակը կազմում է 6.4%, իսկ իրական գործազրկությունը 15.7% է: 2017 թ. դրությամբ Դիլիջանում գրանցված աշխատողների թիվը 8296 է, որի 33%-ը՝ հանրային ոլորտում: Բնակչության միջին տարիքը ըստ սեռի հետևյալն է. տղամարդիկ՝ 37 տարեկան, կանայք՝ 33 տարեկան: Դիլիջան համայնքի բնակչությունը 2013 թվականի համեմատ աճել է 15%-ով, ինչը պայմանավորված է մի շարք խոշորամասշտաբ նախագծերի իրականացմամբ, մասնավորապես, ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական կենտրոնի, «Դիլիջան ինտերնեյշնլ սքոլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցի և «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցի գործունեությամբ: 2017 թ.-ից գործում է նաև Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը, ինչը նույնպես դրական ազդեցություն կունենա բնակչության թվի վրա:

### 1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

Դիլիջան խոշորացած համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Դիլիջան քաղաք, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարծան գյուղեր: Դիլիջան համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում: Համայնքը հյուսիսից եւ արևելքից 7277մ հատվածով սահմանակից է Ծաղկավան համայնքին, արևելքից 6806մ հատվածով՝ Սեւքար համայնքին, 7843մ հատվածով՝ Ենթավան, 454մ հատվածով՝ Գետահովիտ, 24569մ հատվածով՝ Գանձաքար, 2107 հատվածով՝ Իժաքար, արևելքից 5610մ հատվածով՝ Նավուր համայնքներին, հարավից Գեղարքունիքի մարզին, հարավ-արևմուտքից՝ Կոտայքի մարզին, արևմուտքից՝ Լոռու մարզին:

Դիլիջան առողջարանային քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում Աղստև գետի հովտում, ծովի մակերևույթից 1100-1510 մետր բարձրության վրա, շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիս-արևելյան մասերում նրան հարում են Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Մուրղուզի և հարավ-արևելքից՝ Արեգունի լեռները:

Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով: Քաղաքը բարեկարգ ավտոմայրուղով կապված է մայրաքաղաք Երևանին (99 կմ), Վանաձորի և Իջևանի հետ (35-40 կմ): 1986 թվականից երկաթուղով կապված է Հանրապետության երկաթուղային ցանցին:

Դիլիջանին բնորոշ է մեղմ, լեռնա-անտառային չափավոր զով ամառը, արևաշատ տաք ձմեռը, ամբողջ տարվա ընթացքում չոր և տաք եղանակը: Հուլիսի միջին ջերմաստիճանը +18 է, հունվարինը՝ 0 ից -2: Օդի չորությունը առանձնապես արտահայտվում է ձմռան և գարնան ամիսներին: Օդի հարաբերական խոնավությունը 70% է, տեղումների քանակը՝ 637 մմ, արևափայլի տևողությունը՝ 2091 ժամ:

Դիլիջան, քաղաք Հայաստանի Տավուշի մարզում, մարզկենտրոնից 36 կմ հարավ-արևմուտք, Աղստև գետի ափին: Հեռավորությունը Երևանից՝ 99 կմ: 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Դիլիջանի մշտական բնակչությունը կազմում է 23.8 հազար մարդ:

Արևմուտքից այն սահմանակցում է Լոռու մարզին, հարավ-արևմուտքում՝ Կոտայքի մարզին և հարավից՝ Գեղարքունիքի մարզին: Արևելքից մարզն ընդհանուր սահման ունի Ադրբեյջանի, իսկ հյուսիսում՝ Վրաստանի հետ:

Դիլիջանը հնուց արդեն հայտնի էր որպես լեռնակլիմայական արողջարանային մնակավայր, իսկ Աքսոտաֆայից դեպի Երևան և Ալեկսանդրոպոլ ճանապարհի կառուցումից հետո այստեղ ճալիս էին հանգստացողներ ամբողջ կովկասյան տարածաշրջանից:

1913թ. Դիլիջանում լազարի բժշկական հիվանդանոցի համար մի արողջարան: Նույն ժամանակ, մի շարք ամառանոցներ կառուցվեց Թիֆլիսի, Բաքվի և այլ տեղերում ճործող մեծահարուստների կողմից, որոնք հետագայում պետականացվել էին և վերափոխվել թոքախտային հիվանդություններով տառապողների համար արողջարանների:

1926թ. Դիլիջանը հայտարարվեց որպես քաղաք-առողջարան, իսկ 1928թ. նկարիչ Եսկովի կողմից կազմվեց առաջին գլխավոր հատակագիծը: 1939թ. ճարտարապետ Հ.Իսաբեկյանի կողմից մշակվեց մի նոր գլխավոր հատակագիծ, որտեղ քաղաքի հատակագծային սահմաններում ներառվեցին Շահումյան, Գոլովինո և Պապանինո բնակավայրերը: 1959թ. Դիլիջանը և վերոնշյալ բնակավայրերը պաշտոնապես միավորվեցին և հայտարարվեցին հանրապետական ենթակայության առողջարանային ուղղվածության միասնական քաղաք:

## **Պատմաաշխարհագրական ակնարկ**

Դիլիջանի տարածքում 19-րդ դարի 70-ական թվականներին կատարված հնագիտական հետազոտությունները ցույց են տվել, որ այստեղ մարդը սկսել է ապրել ուշ բրոնզե և վաղ երկաթե դարերից (մթա 2-րդ հազարամյակի վերջ- 1-ին հազարամյակի սկիզբ): Դամբարանադաշտեր են հայտնաբերվել Ռեդկին լագերի, Խրտնանոցի և Պապանինոյի տեղամասերում: Հայտնաբերված նյութերի մեծ մասը Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Թբիլիսիի, Բաքվի և Երևանի թանգարաններում են, մի մասն էլ Դիլիջանի երկրագիտական թանգարանում: Դիլիջանի հիմնադրման բուն տարեթիվը դեռևս հայտնի չէ: Ներկայիս Դիլիջանի տարածքը մտել է պատմական Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի մեջ: 4-րդ դարում՝ երբ Հայաստանը բաժանվել է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, այդ հողերը (պատմական Հովք) մտել են Գուգարքի մարզի Ձորափոր գավառի մեջ և հանդիսացել են հայոց թագավորների հանգստավայր և արքայական որսատեղի: Կապված պատմական իրադարձությունների հետ քաղաքի տարածքի անվանումները և սահմանները մի քանի անգամ փոխվել են: 8-րդ դարում այդ տարածքները մտել են Կայենի գավառի կազմի մեջ, իսկ ավելի ուշ Կուստ-Արցախյան նահանգի մեջ: 15-րդ դարից մինչև Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միավորումը՝ դրանք մտնում էին Գանձակի խանության մեջ: Այնուհետև դրանք մտել են Ելիզավետապոլի նահանգի մեջ:

## **Կլիմայական պայմաններ**

Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակ ամբողջ տարվա ընթացքում: Օդի միջին սեզոնային ջերմաստիճանի տատանումներն ավելի ցածր են, քան Երևանում՝ կազմելով  $-2.0^{\circ}\text{C}$  հունվարին մինչև  $18.2^{\circ}\text{C}$  հուլիսին (Երևանում՝ համապատասխանաբար  $-4.1^{\circ}\text{C}$  և  $26.2^{\circ}\text{C}$ ), սակայն միջին տարեկան ջերմաստիճանն ավելի ցածր է, քան Երևանում (համապատասխանաբար՝  $8.1^{\circ}\text{C}$  և  $12^{\circ}\text{C}$ ): Դիլիջանին բնորոշ է խոնավ լեռնային կլիմա: Տեղումների տարեկան առավելագույն քանակը տատանվում է 35%-ից գարնանը մինչև 12% ձմեռային ամիսներին: Մայիսին տեղումների քանակը հասնում է շուրջ 100 մմ-ի, իսկ հունվարին՝ 12 մմ-ի: Տեղումների միջին տարեկան

քանակը կազմում է 593 մմ՝ երեք անգամ ավելին, քան Երևանում (200 մմ): Արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 2091 ժամ (Երևանում՝ 2480 ժամ), իսկ օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 73%: Ձյունախախտության միջին բարձրությունը 18 սմ է (Երևանում՝ 2,5 սմ), իսկ առավելագույնը՝ 39 սմ (հյուսիսային լանջերին): Գերակայում են արևելյան (17%) և հյուսիս-արևելյան (46%) քամիները՝ 2 մ/վրկ միջին տարեկան արագությամբ (նույնն ինչ Երևանում): Ամպրոպներով օրերի քանակը տարվա ընթացքում կազմում է 15-20 (Երևանում՝ 50 - 60):

### **Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

1931 թվականին դրանք հանձնվեցին Առողջապահության ժողկոմի կուրորտային վարչությանը: Անտառապետությունների հիման վրա 1937 թվականին կազմավորվեց անտառարդյունաբերական տնտեսություն: 1958 թվականի սեպտեմբերին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի թիվ (341) որոշմամբ վերջինս վերակազմավորվեց պետական արգելոցի, որի հիմնական նպատակը կաղնու և հաճարենու խոնավասեր (մեզոֆիլային) անտառների և ռելիկտային տեսակներ՝ հատապտղային կենու և կովկասյան մրտավարդի պահպանումն էր:

Արգելոցը իր հիմնադրման օրվանից ընդգրկվեց «Հայաստան» արտադրական միավորման մեջ, իսկ 1995-ից «Հայաստան» ՊՓԲԸ կազմի մեջ: 1995 թվականի օգոստոսին «Դիլիջան» պետական արգելոց հիմնարկը անցավ ՀՀ Բնապահպանության և ընդերքի նախարարության ենթակայության տակ:

Ելնելով նրանից, որ արգելոցի տարածքում են գտնվում հինգ բնակավայրեր, որոնք օգտագործում են գյուղատնտեսական և այլ հողահանդակներ, իսկ դա հակասում է արգելոցային ռեժիմին, ՀՀ Կառավարության 2002 թվականի փետրվարի (21)-ի թիվ (165) որոշմամբ «Դիլիջան» պետական արգելոցի տարածքում կազմակերպվեց «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը:

Ազգային պարկը տեղադրված է Փոքր Կովկասում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում: Տարածվում է Փամբակի, Արեգունու, Միափորի, Իջևանի և Հալաբի հովտահայաց լանջերին՝ (1070)-(2900) մ բարձրությունների վրա: Պարկի մեծ մասը Արեգունու լեռնաշղթայի հյուսիսային լանջերին է: Պարկի արևելյան հատվածները ընդգրկում են Միափորի լեռնաշղթայի հարավային լանջերը, որոնք խոշոր ժայռային մերկացումներով և սանդղաձև տեռասներով իջնում են Գետիկ գետի հովիտը: Հյուսիսից և հյուսիս-արևելքից պարկին հարում է Իջևանի լեռնաշղթան, որի հյուսիս-արևելյան ուղղությամբ շարունակվում է Հալաբի լեռնաշղթան: Արևմուտքից և հարավ-արևմուտքից պարկը շրջափակվում է Փամբակի լեռնաշղթայի ճյուղավորումներով, որոնք Սևանի լեռնանցքում միանում են Արեգունու լեռնաշղթային: Պարկի ցածրադիր հատվածը Աղստևի հովիտն է, որի աջակողմյան լանջերը ունեն հրաբխային, իսկ ձախակողմյանը՝ նստվածքային ապարային ծագում:

Պարկի համեմատաբար փոքր տարածքում բնական պայմանները բազմազան են: (1200)-(1800) մ բարձրություններում լավ արտահայտված են ուղղաձիգ գոտիականության լանդշաֆտները, ուր տարածվում են կաղնու և հաճարենու սաղարթավոր անտառները: (1900) մ-ից բարձր նոսրաանտառներ և բարձրախոտեր են: Կան բազմաթիվ մեծ ու փոքր ձորեր, որոնցից յուրաքանչյուրում ձևավորվում է յուրօրինակ միկրոկլիմա:

ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող ազգային պարկի տարածքը բաժանված է երեք տարածազործառնական գոտիների՝ արգելոցային, հանգստի (ռեկրեացիոն) և տնտեսական: Պարկի տարածքում իրականացվող գործունեության բոլոր տեսակները պետք է համապատասխանեն մի շարք հստակ սահմանված չափանիշների՝ առկա էկոհամակարգերի հավասարակշռությունը չխախտելու և պահպանվող տարածքի պատմամշակութային կամ բնական ժառանգությունը չվտանգելու նպատակով: Մարդկային գործունեությունը հատուկ պահպանվող տարածքում գլխավորապես սահմանափակվում է գիտական հետազոտություններով և զբոսաշրջությամբ:




Մնացյալ՝ ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում իրականացվող գործունեությունը պետք է լիարժեք համապատասխանի պարկի տարածքում գործող պահպանության պահանջներին:

Պարկի տարածքում աճում են մոտ (51) ծառատեսակներ, հիմնականում՝ կաղնի, հաճարենի, բոխի, հացենի և լորենի, որոնց անտառները զբաղեցնում են պարկի տարածքի (94) տոկոսը: ՀՀ կառավարության 17.01.2007 թ. № 204-Ն որոշմամբ Դիլիջան ազգային պարկի տարածքը կազմում է 33.765 հա և հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցում ստացել է 11.05.2012 թ. №11-0027:

Ազգային պարկը, որի ընդհանուր տարածքը կազմում է 33.765 հա, հայտնի է իր անտառային լանդշաֆտներով, հարուստ կենսաբազմազանությամբ, բուժիչ հանքային ջրերի աղբյուրներով, ինչպես նաև պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններով: Դիլիջանի տարածաշրջանի անտառների ընդհանուր տարածքը կազմում է ավելի քան (34 000) հա: Հարուստ է նաև պարկի կենդանական աշխարհը: Հանդիպում են գորշ արջ, գայլ, կզաքիս, ջրասամույր, լուսան, անտառային կատու, պարսկական սկյուռ, անտառային քնամուկ, ոզնի, այծյամ, ազնվացեղ եղջերու, վայրի խոզ, մարեհավ, լոր, գորշ կաքավ, կասպիական հնդկահավ, վայրի աղավնի, սպիտակագլուխ անգղ, գառնանգղ, թզուկ արծիվ, բերկուտ և բազենների բազմաթիվ տեսակներ: Հայտնի է, որ ազգային պարկի տարածքում իրականացվում են ապօրինի ծառահատումներ և տարածված է որսագողությունը, սակայն պարկի էկոհամակարգի վրա դրանց ազդեցության գնահատմանն ուղղված համապատասխան հետազոտություններ դեռևս չեն կատարվել:

«Ախնաբադի կենու պուրակ (անտառակ)» արգելավայրը գտնվում է Տավուշի մարզում, Միափորի լեռնաշղթայի Ծաղկոտ լեռնաբազուկի վրա, Պոլազ գետի ավազանում, Աղավնավանք գյուղի մոտ, Ախնաբադի եկեղեցու հարևանությամբ: Գտնվում է ծովի մակերևույթից 1400-1700 մ բարձրության վրա: Հայաստանի Հանրապետության 26 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 25 հա տարածք: Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում՝ Միափորի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերին, Ծաղկոտ լեռնաբազուկի վրա, Աղավնավանք գյուղի մոտ, Ախնաբաթի եկեղեցու հարևանությամբ՝ Խաչարձան գետի ավազանում: Ստեղծվել է մնացուկային հատապտղային կենու եզակի պուրակի պահպանության նպատակով: Այստեղ աճում են 25 մ բարձրություն և բնի 70-90 սմ տրամագիծ ունեցող 300-400 տարեկան կենու ծառեր: Կենին բազմանում է բնական ճանապարհով՝ սերմերից: Հատապտղային կենին մշտադալար բարձրահասակ ծառ է՝ մուգ կանաչ կոնաձև սաղարթով: Կենու երկրորդ՝ կարմրածառ անունը պայմանավորված է կարմրավուն բնափայտով: Այն մարդկությանը հայտնի է դեռևս 3000 տարի առաջ, երբ նրանից պատրաստում էին սարկոֆագներ՝ կենու բնափայտի՝ ջրում չնեխելու, սնկերի և միջատների նկատմամբ կայունության շնորհիվ: Ավելի ուշ սկսել են պատրաստել ռազմական գործիքներ, կենցաղային իրեր, հետագայում՝ կահույք

Պարկի տարածքում ավելի բարձր աշխարհագրական դիրքի և տեղանքի առանձնահատկությունների պատճառով սեզոնային ջերմաստիճանների տատանումն ավելի բարձր է, քան Դիլիջանում՝ կազմելով հուլիսին միջինը 21.1°C, իսկ հունվարին -1.3°C, մինչդեռ բացարձակ նվազագույն և առավելագույն ջերմաստիճանները կազմում են, համապատասխանաբար, -26°C և 37°C: Անսառնամանիք օրերի քանակը կազմում է տարեկան միջինը 200 և, թեպետ, ձյան տեսքով տեղումները պարտադիր երևույթ չեն յուրաքանչյուր տարի, առավել ցուրտ տարիներին ձյան ծածկույթը հյուսիսային լանջերին



կարող է հասնել մինչև (70) սմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է (537) մմ-ից նախալեռնային գոտում մինչև (850) մմ՝ բարձրադիր գոտում: Լայն տարածում ունեն սողանքային երևույթները: Խոշոր սողանքներ առկա են Դիլիջանի, Հաղարծինի, Ֆիոլետովոյի և Պարզ լճի մոտակայքում: Տարածված են նաև սելավները, քարաթափումները և հողային էրոզիան:

Պարկի տարածը լայնորեն օգտագործվում է հետիոտն զբոսանքների, արշավների և հեծանվավազքի համար: Պարկն ունի այցելուների տեղեկատվական կենտրոն, մշակվել են մի շարք հետիոտն երթուղիներ: Դրանցից ամենահայտնին գտնվում է Դիլիջանից մոտ (10) կմ հեռավորության վրա՝ ձգվելով Ջուխտակ վանքից դեպի Շամախյան թաղամաս: Արահետն ունի համապատասխան նշագծում, տեղադրված են տեղեկատվական վահանակներ, որոնք այցելուներին ծանոթացնում են տեղի բուսական և կենդանական աշխարհին: Առանձնացված են թվով երեք տարածքներ՝ նախատեսված պիկնիկների անցկացման համար: Ազգային պարկի մնացյալ տարածքները զուրկ են այդչափ զարգացած ենթակառուցվածքից, սակայն օժտված են զբոսաշրջային էական ներուժով: Այդտեղ կարող են մշակվել և առաջարկվել նոր զբոսաշրջային ապրանքներ և ծառայություններ, ինչը կնպաստի տարածաշրջանում զբոսաշրջության, հատկապես՝ էկոտուրիզմի և էքստրեմալ տուրիզմի ընդհանուր զարգացմանը:

**Անտառ**

Ազգային պարկի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառէջ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Սրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տխլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սզնու տարբեր տեսակներ (*Crataegus*), գլեռենի (*Mespilus*

germanica), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած (1500) մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառեջ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (ղաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև (1500) մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև (2000) մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Աբեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ զարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրաճ (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

պարկի ստորին հատվածում (մինչև (1100) մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spinachristi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (*Berberis vulgaris*), չմենի ամբողջատեղ (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փոշնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառազուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)-(1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ-հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակուտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետնայինը (*Poa pratensis*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի

համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոզնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբվածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրազոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

### **Կենսաբազմազանություն** Բուսական աշխարհ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի (1200) տեսակ, որից (977) տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից (51)-ը ծառատեսակներ են, (47)-ը՝ թփեր, (696)-ը՝ բազմամյա խոտաբույսեր, (176)-ը միամյա և երկամյա բույսեր, (7)-ը մակաբույծներ: Նշված տեսակներից (5)-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի (958) տեսակներ (դրանցից (225)-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստև գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելլուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի (17) տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի ֆլորայի (54) տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ (41) տեսակներ ուտելի են:

Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են (480) տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից (320)-ը պատկանում են ագարիկալ սնկերին, (124)-ը՝ աֆիլոֆորայիններին և (36)-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնասունկ (*Lactarius*), սարդոստայնասունկ (*Cortinarius*), թելիկասունկ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունկ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Աբեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից (176)-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*) տեսակը: (38) տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոգանկա), խոսափում են հավաքելուց, և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

Ըստ ՀՀ Ատլասի (2007 թ.) Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքը գտվում է բուսական Կովկասյան պրովինցիայում՝ Իջևանի շրջանում: Դիլիջան քաղաքային բնակավայրում և մոտակայքում բույսերի էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել: Այստեղ տարածված են կաթնափուշ բժավոր (*Sylibum Marianum*) բուսատեսակներ: Դիլիջանում տարածված են դեղաբույսեր՝ ալոճների մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus Atrosanguinea*), գետնամորի անտառային (*Fragaria Vesca*):

## Կենդանական աշխարհ

### Անողնաշարավորներ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների (Mollusca) (69) և հողվածոտանիների (Arthropoda) (1431) տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների (Insecta) դասին: Նշված տեսակներից (7)-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pall-ը:

### Սողուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների (19) տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

Սողեսներ (Lacertilia) – (12) տեսակ.

Օձեր (Serpentes) –(6) տեսակ.

Կրիաներ (Testudines) – (1):

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

### Կաթնասուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների (49) տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ (6) կարգաբանական դասերի.

Միջատակերներ (Insectivora) – (9) տեսակ.

Կրծողներ (Rodenti) – (17) տեսակ.

Նապաստակակերպեր (Logomorpha) –(1) տեսակ.

Ձեռքաթևավորներ (Chiroptera) –(7) տեսակ.

Գիշատիչներ (Carnivora) – (12) տեսակ.

Կճղակավորներ (Artiodactyla) – (3) տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են (7)-ը՝ երկարականջ (ականջեղ) ոզնին, Եվրոպական լայնականջ ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և վայրի կատուն:

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Ծառաթփային բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով՝ նախագծման ընթացքում ջրատարների ուղեգծերը ընտրվել են այնպես, որ նրանք չհատվեն ծառերի հետ:

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարերի կառուցման ընթացքում պայթեցման և ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լրկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին

հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

Ազգային պարկի զարգացման և բնության պահպանության հարցերում էական աջակցություն են ցուցաբերում երեք հասարակական կազմակերպություններ՝ Կովկասի բնության հիմնադրամը (CNF), Վայրի բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) և «Հայաստան ծառատունկ ծրագիրը» (ATP):

1. Ներկայումս CNF-կողմից իրականացվում է Դիլիջանի ազգային պարկի կառավարման պլանի մշակումը: Բացի այդ, WWF-ի հետ համատեղ կատարվում են Դիլիջանի տարածաշրջանի անտառներում ազնվացեղ եղջերուի խիստ սակավաթիվ պոպուլյացիայի վերականգնմանն ուղղված աշխատանքներ:

2. «Հայաստան ծառատունկ ծրագիրը» («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը) հսկայական ջանքեր է գործադրել կենսաբազմազանության առումով հարուստ, սակայն բնապահպանական տեսանկյունից խիստ վտանգված Կովկասյան տարածաշրջանում ընթացող անապատացման դեմ: Տնկվել և վերականգնվել է ավելի քան (4 000 000) ծառ, սեզոնային ծառատունկերի և համանման այլ նախաձեռնությունների շրջանակներում տեղի բնակչության համար ստեղծվել են հարյուրավոր աշխատատեղեր: ՀԾԾ գործունեությունը ծավալվում է երեք հիմնական ուղղություններով՝ ծառերի տնկում քաղաքային և գյուղական տարածքներում, բնապահպանական կրթություն, կայուն զարգացում և աղքատության նվազեցում: ՀԾԾ-ն հենակետ և խոշոր տնկարան է հիմնել Դիլիջանից (15) կմ հեռավորության վրա՝ Ֆիոլետովո գյուղի հարևանությամբ: Կազմակերպությունն իր օգնությունն ու ծառայություններն է առաջարկել Դիլիջանի զարգացման նախաձեռնություններին, ինչպես նաև Դիլիջանի բնության կենտրոնին ազգային պարկի պահպանության հարցում:

3. Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) գործունեությունը Հայաստանում ընդգրկում է գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքների զարգացումն ու դրանց կառավարման համակարգերի կատարելագործումը, նոր պահպանվող տարածքների ստեղծմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, վտանգված տեսակների պահպանումը, էկոհամակարգերի վերականգնումը, կլիմայական փոփոխություններին անտառների հարմարեցումը և բնապահպանական կրթության և իրազեկման բարձրացման ծրագրերին սատարումը: Ներկայումս «WWF-Հայաստանը» ՀՀ բնապահպանության նախարարության հետ միասին և «WWF-Գերմանիայի», CNF-ի և «Օրանժ Արմենիայի» աջակցությամբ իրականացնում է Դիլիջանի ազգային պարկում «ազնվացեղ եղջերուների պոպուլյացիայի վերականգնում» (ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի ստեղծում) ծրագիրը:

## **Ջրագրություն**

Աղստևը Դիլիջանի տարածքով հոսող ամենախոշոր գետն է: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Մինչև Գետիկ վտակին խառնվելն այն հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ, սակայն ապա փոխում է իր ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, հատում հանրապետության սահմանը և խառնվում Կուր գետին: Աղստևի ամենախոշոր վտակը՝ Գետիկը, հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ: Հայաստանի տարածքում Աղստևի երկարությունը կազմում է 85 կմ, իսկ գետավազանի ընդհանուր տարածքը՝ 1704 կմ<sup>2</sup>:

Գետն իր հոսքի ողջ երկայնքով խիստ աղտոտված է արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով: Կեղտաջրերն առանց մաքրվելու գետն են լցվում կոյուղու համակարգերից և չվերահսկվող աղբյուրներից: Օրեկան 18.000 մ<sup>3</sup> հզորությամբ կեղտաջրերի մաքրման կայանը ներկայումս չի գործում:





Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանակլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնայա շերտում, վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

Շրջանի կլիման բարեխառն է: Բնութագրվում է մեղմ ամառներով (բացարձակ մաքսիմումը հասնում է  $+34^{\circ}\text{C}$ ), համեմատաբար ցուրտ ձմեռներով (բացարձակ մինիմումը ոչ ցածր քան  $-23^{\circ}\text{C}$ ): Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է  $5.3^{\circ}\text{C}$ , ամենաշոգ օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը՝  $+20.6^{\circ}\text{C}$ , ամենացուրտ ամսվանը հունվար՝  $-8.5^{\circ}\text{C}$ : Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 109 մմ, նվազագույնը հունվարին՝ 27 մմ: Ձյան տեսքով թափվող տեղումների քանակությունը 67 մմ է: Նոյեմբերի 5-ից դիտվում է կայուն ձնածածկ, որը վերանում է ապրիլի 18-ին: Ձյան ծածկույթի առավելագույն շերտի բարձրությունը 74 սմ է, նվազագույնը 3 սմ:

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 73 %: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 3.1 մ/վրկ:

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից
- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1 Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

ԻԷՇՍՅՍՇ · añíaŸŸ»ñÁ	²ŸÑ³ñՍ³ñ³i»iáóĀúáóŸ
---------------------	---------------------

	ՃՅՊՅՊՅ- ԻՅԻՏՈՒՍՏՈՒՄ	՝ ՊՅՊՅՏՈՒՄ	ԵՅԵՅՏՈՒՄ
1. ՍՅ ԿՅՊՅԵԻԿՅՅԻ, °C	12-14	24-ԿՏ ՍՅՈՒՄ	30-35, 1.5 Ս/ԻՊԻ, 25, 2.0 Ս/ԻՊԻ, -15, 3.5 Ս/ԻՊԻ ՍՅՍՏՈՒՄ ՊՅՍՏՈՒՄ,
2. ՍՅՍՏՈՒՄ ՅՅՅ. ՏՈՒՍՏՈՒՄ, Ս/ԻՊԻ	0.5-3.0	՝ՍՈՒՄ 0.5 ՍՅՍՏՈՒՄ 3.0	5-ԿՏ ՍՅՍՏՈՒՄ ՍՅՅՅՅՅԻԿՅՅԻ ԿՅՊՅԵԻԿՅՅԻ ՊՅՍՏՈՒՄ
3. ՃՅՊՅՊՅՅՅԻԿՅՅԻ ԵՅՅԻՏՈՒՍՏՈՒՄ, %	30-70	30-ԿՏ ՝ՍՈՒՄ 70-ԿՏ ՍՅՈՒՄ	80-ԿՏ ՍՅՈՒՄ

Դիլիջան քաղաքի օդերևութաբանական պարամետրերը վերցված են Հայհիդրոմետի սլավյաներով և բերված են աղյուսակներ 1.2-1.4-ում:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը հունիս-օգոստոս ամիսներին չի գերազանցում 24°C: Գերտաքանցման փաստը Դիլիջանում չի նկատվում ամբողջ տարվա ընթացքում:

12-14°C գերազանցման դեպքերը նկատվում են հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին:

Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից հունվարից-ապրիլ և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները դիտարկվում են ինչպես հարմարավետ, 80%-ից բարձր խոնավություն չի արձանագրվել:

70%-ից բարձր խոնավություն նկատվում է մայիսից-հոկտեմբեր ամիսների ընթացքում: 3.0 մ/վրկ-ից մեծ քամու արագություն դիտարկվում է հունվարից-մայիս և հոկտեմբերից-դեկտեմբեր ամիսներին:

Նոյեմբերից-մարտ ժամանակահատվածում օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտարկվում է -15°C-ից բարձր, սակայն նշված ամիսներին քամու արագությունը գտնվում է 3.3-4.2 մ/վրկ-ի սահմաններում:

ՏՈՒՍՏՈՒՄ 1.2

ՍՅ ՍՅԿՅ ՍՅԵՅԻԿՅՅԻ ՝ ԻՅՊՅԻԿՅՅԻ ԿՅՊՅԵԻԿՅՅԻ

ՍՅՅՅ- ԻՏՈՒՍՅՅՅՅԻ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	ԻՅՏՅ
ՍՅԵԿՅՅԻ ՍՅՏՅՅՅ	-5.1	- 4.4	- 1.3	5.0	9. 4	12. 4	15.1	14. 7	11.5	7.1	2. 2	-2.6	5.3

ՏՈՒՍՏՈՒՄ 1.3

ՏՅԿՅ ՍՅԵՅԻԿՅՅԻ ՝ ԻՅՊՅԻԿՅՅԻ ՍՅ ՍՅՅՅՅՅՅԻԿՅՅԻ ԵՅՅԻՏՈՒՍՏՈՒՄ (%)

ՍՅՅՅԻՏՈՒՍՅՅՅՅԻ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	ԻՅՏՅ
ՍՅԵԿՅՅԻ ՍՅՏՅՅՅ	69	70	70	68	74	77	79	79	77	72	69	69	73

ՏՈՒՍՏՈՒՄ 1.4

ՍՅՍՏՈՒՄ ՍՅԿՅ ՍՅԵՅԻԿՅՅԻ ՝ ԻՅՊՅԻԿՅՅԻ ՅՅՅՅՏՈՒՍՏՈՒՄ (Ս/ԻՊԻ)

ՍՅՅՅԻՏՈՒՍՅՅՅՅԻ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	ԻՅՏՅ
ՍՅԵԿՅՅԻ ՍՅՏՅՅՅ	4.2	3.9	3.3	3.5	3.1	2.6	2.6	2.3	2.5	3.0	3.3	3.9	3.1

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անայիզը ցույց է տալիս, որ Դիլիջան համայնքում 1T, 2T և 3T դասերի 'շոգ' եղանակները բացառվում են, անհարմարավետության շրջան և ջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա չի առաջանում:





- Դիլիջան - 18,701
- Թեղուտ - 1,575
- Հաղարծին - 4,054
- Հովք - 431
- Խաչարձան - 371
- Գոշ - 1,137
- Աղավնավանք – 338
- Բոլոր շրջանների ընդհանուր բնակչությունը՝ 26.607 մարդ:

**ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Անվանումը	2019թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	26766
2. Գրանցված ծնունդների քանակը	197
2.Մահացության դեպքերի քանակը	215
3.Ամուսնությունների քանակը	77
4. Ամուսնալուծությունների քանակը	10
5. Տնային տնտեսությունների թիվը	8355
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	782
7. Կենսաթոշակառուների քանակը	
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	481

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Անվանումը	2019թ.
1. Գրադարանների քանակը	4
2. Արվեստի դպրոցների քանակը	2
3. Երաժշտական դպրոցների քանակը	3
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	8
5. Հանրակրթական դպրոցների քանակը	13
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	3
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	1
9. Մարզադպրոցների քանակը	1

**ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

Անվանումը	2019թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ²)	19435
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	106
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	3514

**ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Անվանումը	2019թ.
1.Հողեր, ընդամենը (հա)	86888.29
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	23572.06

3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	63316,23
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1300
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	543
7. Խոզերի գլխաքանակը	439
8. Գյուղատնտեսական տեխնիկա	
8.1 տրակտորներ (քանակը)	0
8.2 կոմբայններ (քանակը)	0
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	

Տավուշի մարզի տարածքը ներառում է Տավուշի, Իջևանի և Նոյեմբերյանի նախկին վարչական շրջանների 62 համայնքները (որից 58-ը ճյուղական): Մարզի ընդհանուր տարածքը 270.4 հազար հեկտար է, որը հանրապետության ընդհանուր տարածքի 9.1 %-ն է: Անտառային ֆոնդի հողերը 140.3 հազար հեկտար է, որը հանրապետության անտառային ֆոնդի հողերի գերակշռող մասն է՝ (33.4 %): Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 93.6 հազար հեկտար կամ մարզի ընդհանուր տարածքի 34.6 %-ը: Տավուշի մարզի գյուղատնտեսության և ագրոպարենային համակարգում գերակշռող դեր է խաղում անասնապահությունը, որն ապահովում է մարզի համախառն ներքին արդյունքի 40-45 %-ը:

Մարզում կարևոր տեղ են գրավում Բերդի, Այրումի, Դիլիջանի, Իջևանի և Նոյեմբերյանի կաթի վերամշակման և պանրի գործարանները, Այրումի և Տավուշի պահածոների, Տավուշի, Իջևանի և Նոյեմբերյանի գինու գործարանները, Իջևանի և Դիլիջանի հանքային ջրերի գործարանները և այլն: Նշված գործարանները, արտադրամասերն ու կոմբինատները ներկայումս աշխատում են մասնակիորեն, իրենց նախագծային հզորությունների 8-12 %-ի չափով:

Տավուշի մարզում նույնպես գերխնդիր է հողօճառածրման ցածր մակարդակը, ոռոգման համակարգերի վերականգնումը, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումն ու վերագինումը, գյուղատնտեսական մթերքների մթերումներն ու վերամշակումը, սննդի ու վերամշակող ձեռնարկությունների գորգարկումը:

### **Տարածքի համալիր գնահատում**

Դիլիջան համայնքի բնական պայմանները

Դիլիջան համայնքը գտնվում է Տավուշի մարզի հարավ-արևմտյան մասում:

Դիլիջանը հարավից գոտևորված է Փամբակի լեռներով, որոնք հարավ-արևելյան

ուղղությամբ ձգվում են դեպի Արեգունու լեռները: Հյուսիսից պարփակված է Բազումի լեռներով, իսկ հյուսիս-արևելյան ուղղությամբ ձգվում է Մուրգուզի զանգվածը, որը ձևավորում է մի շարք լեռնաճյուղեր, որոնց մեջ գոյանում են խորը, նեղ կիրճեր զառիվեր լանջերով և ժամանակավոր և մշտական հոսք ունեցող արագավազ գետակներով: Դիլիջանի շրջակա լեռները կտրատված են հովիտներով և կիրճերով: Տարածքի միջին թափվածակ բարձրությունը 1256 մ: Ռելիեֆը բարդ է, Աղստև գետի ողողահունը և դարավանդները հարթ են, իսկ լանջերը թեք են, կտրված հեղեղատներով: Տարածքին բնորոշ են մեծ հզորության (10-30 մ) այլովիալ-դեյուովիալ կավեր, կավավազներ, խճեր, խոշոր սահքեր:

Ռելիեֆի հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 0,4 – 0,6 կմ/կմ<sup>2</sup>: Հովտա- ձորակային ցանցի խտությունը՝ 10,0 – 15,0 հատ / կմ<sup>2</sup>: Մակերևույթի թեքության անկյունը տատանվում է 12 - 30<sup>0</sup> սահմաններում: Լանջերի էքսպոզիցիան հիմնականում հյուսիսային և արևմտյան է: Սեյսմիկ վտանգի մակարդակը գնահատվում է 0.2 – 0.3 ց-ով:

Մակերևույթային ջրերը ներկայացված են Աղստև գետով, որի գլխավոր վտակներն են Բլրան, Գետիկ, Հաղարծին, Շտողանաջուր և Հովաջուր գետերը: Դիտարկվող տարածքի ջրային ցանցի խտության ճորձակիցը կազմում է 0,78 կմ/ կմ<sup>2</sup>: Աղստև գետը հոսում է հյուսիս-արևելյան ուղղությամբ և թափվում Քուրը: Աղստևի ջրահավաք ավազանը Հայաստանի

սահմաններում կազմում է շուրջ 1610 կմ<sup>2</sup>: Գետի միջին տարեկան հոսքը կազմում է 6,83 խոր.մ/վրկ, միջին մազմամյա տարեկան հոսքը 346,5 մլն. խոր.մ: Դիլիջանի գոգավորության և համայնքի սահմաններում Աղստև գետը ունի համեմատաբար լայն ողողահուն՝ 50-60 մ, և հոսում է դանդաղ:

Դիլիջանի գոգավորությունում տեղադրված են Պարզ և Գոշ փոքր լճերը, որոնք ունեն բարձր էստետիկական արժեք: Առկա են բուժիչ հանքային ջրերի աղբյուրները, որոնցից առավելապես հայտնի են “Դիլիջան” և “Ֆրոլովա բալկա” հանքային ջրերը:

Հողերը ներկայացված են երկու հիմնական տիպերով՝ գորշ լեռնա-անտառային և գորշ լեռնա-տափաստանային հողերի տեսքով: Անտառային գոտում մոզակ կերպով տեղաբաշխված են նաև հումուսա-կարբոնատային հողերը: Առանձին վայրերում, ուր էրոզիոն երևույթները թույլ են արտահայտված հողի շերտի հաստությունը հասնում է շուրջ 40 սմ:

Դիլիջան համայնքի տարածքը ճրագործությամբ շրջապատված է անտառով: Անտառը գտնվում է 1200-2000 մ բարձրությունների սահմաններում: Անտառի վերին սահմանից սկսվում են լեռնային արոտավայրերը, որոնք ծածկված են լեռնամարգագետնային բուսականությամբ: Դիլիջան համայնքի սահմանամերձ շրջակայքը աչքի է ընկնում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների մեծ բազմազանությամբ:

## **1.1 Բնակլիմայական և սանիտարա-հիգիենիկ հատակագծային սահմանափակումների համակարգը**

Դիլիջան համայնքի գոտիավորման նախագծում սանիտարա-պաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (ծձճծնձ) չափերը ընդունված են համաձայն ՍՆ և Կ 245-71 ‘Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմաներ’: Հաշվի է առնված նաև ՀՀ առողջապահության նախարարության ՊՀՀՏ Դիլիջանի տարածքային կենտրոնի համաձայնությունը:

1. Էլեկտրատեղակայանների ՍՊԳ-ի չափերը (նկատի ունենալով ակուստիկ հաշվարկների և գործիքային չափումների բացակայությունը) ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ II-12-77 ‘Պահպանություն աղմուկից և ԳՕՍՍ ‘Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմաներ և աղմուկային փորձարկումների մեթոդներ’: ՍՊԳ-ների չափը ընդունված է 20 մ:

2. Էլեկտրահաղորդման գծերի (ԷՀԳ) պաշտպանական գոտիների չափերը ընդունված են համաձայն ‘Մինչև 1000Վ էլեկտրական ցանցերի պահպանման կանոններ’-ի հիման վրա՝

Բարձրավոլտ ԷՀԾ՝

- 330 կՎ - 30\* մ

- 220 կՎ - 25\* մ

- 110 կՎ -20\* մ

- 6(10) կՎ - 10 մ

\* - գետնի վրա եզրային լարերի պրոեկցիայի հեռավորությունը:

Հեռուստակենտրոն - 200-300 մ:

3. Արդյունաբերական ձեռնարկությունների ՍՊԳ-ների չափը ելնելով նրանց դասից, ընդունված է 50մ:

4. Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերը ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված, համաձայն ՍՆ և Կ 2.05.06-85 ‘Մայրուղային խողովակաշարեր’:

5. Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերը ընդունված են համաձայն ՍՆ և Կ 2.04.02-84 ‘Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ’

6. Գերեզմանատների համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:

7. Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:

8. Աղստև գետի համայնքին հարող տարածքում (և ոչ միայն) անհրաժեշտ է ջրապահպանական գոտու նախատեսում և տնտեսական օգտագործման հստակ ռեժիմի սահմանում: Ջրապահպանական գոտու չափերը համաձայնեցվում են ՀՀ բնապահպանության նախարարության Դիլիջան քաղաքային ծառայության հետ:

### 1.3. Տնտեսության արդի վիճակը

Համայնքի տնտեսությունը կառուցված է երեք հիմնական բաղադրիչներից՝ փոքր համայնքային ձեռնարկություններ, մեծ և միջին ձեռնարկություններ և գյուղատնտեսություն՝ փոքր ու մեծ ֆերմերային տնտեսություններ: Համայնքի տնտեսությունը, բացի աշխատատեղեր և ընդհանուր բարեկեցություն ապահովելուց, ունի մեկ այլ հիմնական գործառույթ՝ ապահովել բավարար միջոցներ սոցիալական հատվածի համաչափ զարգացման (կրթություն, առողջապահություն և այլն), ենթակառուցվածքների անխափան վիճակի (ճանապարհներ, գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարում և այլն) համար, ինչպես նաև հնարավորություն տալ բարելավելու էկոլոգիական իրավիճակը: Եթե համայնքի տնտեսությունը կարողանում է կատարել զարգացման համար նախատեսված ծախսերը համայնքի ներսում առկա կրթական, առողջապահական հաստատությունների, էկոլոգիական վիճակի, ենթակառուցվածքների կառուցման ու պահպանության վրա, ապա համայնքը զարգանում է որպես մեկ ամբողջական օրգանիզմ: Տնտեսությունը ստեղծում է հավելյալ արժեք, այն ծախսվում է համայնքի զարգացման վրա, իսկ համայնքն էլ ձեռնարկություններին ապահովում է որակյալ աշխատուժով, ենթակառուցվածքներով և այլ ռեսուրսներով:

### Արդյունաբերություն և առևտուր

Դիլիջանը հայտնի է իր բուժիչ հանքային ջրերով, որոնք արդեն իսկ 19-րդ դարի վերջից բազմաթիվ հանգստացողներ են գրավել դեպի քաղաքի առողջարանները: Ներկայումս այդ հանքային ջրերը շշալցվում են «Դիլիջան» հանքային ջրերի գործարանում, որը հիմնադրվել է 1947թ.-ին և հանդիսացել է ոչ միայն Հայաստանում, այլև ԽՍՀՄ ողջ տարածքում հանքային ջուր շշալցող ձեռնարկություններից առաջիններից մեկը: Գործարանը տարեկան արտադրում է ավելի քան 8 մլն. շիշ աղբյուրի հանքային ջուր:

### Համայնքի զարգացման ծարգիր

Ըստ ծրագրով սահմանված համայնքի զարգացման տեսլականի՝

Դիլիջան համայնքը միջազգային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման կենտրոն է, բարձր կենսամակարդակ և զբաղվածություն ունեցող բնակչությամբ: Համայնքը տարածաշրջանային ֆինանսական, կրթական կենտրոն է, որտեղ մատուցվում են հանրային որակյալ ծառայություններ:

Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանել է հիմնական նպատակներ, այն է՝

1. Էկոտուրիզմի զարգացման ենթակառուցվածքների ստեղծում և նոր պրոդուկտների ձևավորում
2. Աշխատուժի հմտությունների զարգացում և համապատասխանեցում շուկայի պահանջներին
3. Զբոսաշրջային պրոդուկտների ներկայացում և առաջնորդում միջազգային հարթակներում

Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը զբոսաշրջությունն է: Գեղեցիկ բնությունը և մեղմ կլիմայի շնորհիվ Դիլիջանը երկար ժամանակ համարվել է պասիվ հանգստի և առողջարանային կենտրոն, սակայն օտարերկրյա զբոսաշրջիկների աճին զուգահեռ սկսել է զարգանալ նաև արկածային, էկո և ագրո տուրիզմի ուղղությունները:

Գործողությունների, աշխատանքների ստեղծման և ներդրումային հնարավորությունների առումով Դիլիջանի տնտեսական ներուժի գնահատումը ցույց է տալիս քաղաքի զարգացման թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների և վտանգների ընդհանուր պատկերը՝ բացահայտելով քաղաքային ենթակառուցվածքների բացերը և կարիքները՝ բարձրացնելով նրա գրավչությունը, մասնավորապես տնտեսության և տուրիզմի զարգացման համար: Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծությունը, հանգեցնում են հնարավոր գործողությունների բացահայտմանը: Հիմնվելով համայնքի տնտեսության վերլուծության վրա, ՏՏՁ պլանի նպատակն է բարելավել բնակչության ապրուստի պայմանները՝ խթանելով համայնքի տնտեսական և տուրիստական զարգացումը: Զարգացնել գյուղական բնակավայրերը, վերածելով գյուղական տուրիզմի կենտրոնների: ՏՏՁ պլանը առանձնացնում է ներդրումային հնարավորություններն այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ տուրիզմը, կրթությունը, ինչը կարևոր խթան կհանդիսանա տեղական տնտեսության զարգացման հարցում: Այս տնտեսական ճյուղերին ինստիտուցիոնալ աջակցությունը համարվում է համայնքի հիմնական զարգացման կայուն ռազմավարություն: Ընտրված ռազմավարական ենթակառուցվածքային ծրագրերի ընտրությունն ու իրագործումն անհրաժեշտ են՝ բարելավելու՝ տուրիզմի զարգացման համար:

### **Զբոսաշրջային և հյուրանոցային ենթակառուցվածքներ**

Զբոսաշրջությունը Դիլիջանում հիմնականում կրում է սեզոնային բնույթ: Քաղաքում զբոսաշրջային սեզոնը տևում է ապրիլի կեսից մինչև հոկտեմբերի կեսը, ընդ որում հունիս, հուլիս և օգոստոս ամիսները համարվում են պիկային: Զբոսաշրջությունն աշխուժանում է նաև դեկտեմբերի 30-ից հունվարի 9-ն ընկած երկշաբաթյա ժամանահատվածում՝ կապված ամանորյա տոների հետ: Ներկայումս Դիլիջանը չունի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն:

Քաղաքում առկա են տեսարժան և զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող մի շարք վայրեր.

- «Թուֆենկյան Հին Դիլիջան» համալիրը՝ վերակառուցված ու բարելավված պատմական թաղամասում: Ներկայումս գործում է որպես հյուրանոց՝ ռեստորանով և փոքր խանութով.
- «Դիլիջան» ազգային պարկը՝ 14 հետիոտն երթուղիներ (տես ազգային պարկին նվիրված գլուխը).
- Աղասի Խանջյանի ամառանոցը, կառուցվել է 1936թ.-ին, մասնավոր սեփականություն է, ներկայումս գտնվում է ավերված վիճակում.
- «Մատինովի աղբյուր» հուշաղբյուրը, կառուցվել է 1880թ.-ին գինեվաճառ Մատինովի կողմից.
- «Անտառի արքա» քանդակը, գտնվում է Ա. Խանջյանի ամառանոցի տարածքում: Քանդակագործ՝ Ա. Սարգսյան.
- Հայրենական մեծ պատերազմում զոհված դիլիջանցիների հիշատակին նվիրված հուշարձանը, ստեղծվել է 1975թ.-ին: Հեղինակներ՝ ճարտարապետ Խ. Վաթինյան, քանդակագործ Ս. Մեիրաբյան.
- Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակին նվիրված հուշարձանը, հեղինակներ՝ Խ. Վաթինյան, Ա. Թարխանյան, Ս. Ավետիսյան.
- Արցախյան ազատամարտում զոհված դիլիջանցիների հիշատակին նվիրված հուշարձանը, ստեղծվել է 2006թ.-ին Արմեն Աբգարյանի հովանավորությամբ:

#### **1.3. Պատմության և մշակութային ժառանգություն**

Դիլիջանի մոտակայքում են գտնվում մի շարք հայտնի պատմամշակութային հուշարձաններ, որոնք դեպի տարածաշրջանն են գրավում բազմաթիվ զբոսաշրջիկների.

- Հաղարծնի վանք, կառուցվել է 12-13-րդ դդ. ընթացքում հիմնականում Բագրատունիների տոհմի հովանավորությամբ.
- Գոշավանք, կառուցվել է 1191թ.-ին, որպես կրոնական կենտրոն ներկայումս չի գործում, հանդիսանում է զբոսաշրջային օբյեկտ.
- Ջուխտակ վանք, կառուցվել է 1201թ.-ին, ունի երկու առանձին եկեղեցի՝ Սուրբ Աստվածածին և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ.
- Մաթոսավանք, կառուցվել է 1247թ.-ին, գտնվում է Ջուխտակ վանքի և հին գերեզմանոցի մոտակայքում:

### **Դիլիջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (Տավուշի մարզ)**

2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 303 հուշարձան (146 միավոր):

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ՊՄՊ Տավուշի մարզային ծառայության պետի տեղակալ Լևոն Սահակյանը և հուշարձանների պահապան Կառլեն Քոչարյանը՝ Դիլիջան քաղաքի և ենթաշրջանի տարածքներ հերթական շրջայցերի ընթացքում խաչքար, տապանաքար և թրծած կավի շրջանաձև հատվածով ենթադրաբար հորի մնացորդներ են հայտնաբերել:

Տավուշի մարզը հարուստ է պատմամշակութային ժառանգությամբ և քիչ չեն դեպքերը, երբ քաղաքացիները իրենց սեփական տան հողամասում շինարարական աշխատանքներ կատարելիս որևէ արժեքավոր օբյեկտ են հայտնաբերում: Նկատի ունենալով այդ հանգամանքը ՊՄՊ մարզային ծառայության պետը հրահանգել էր առավել ուշադիր լինել նմանատիպ աշխատանքների նկատմամբ: Հենց այդօրինակ զգոնության արդյունքում էլ Դիլիջանի Շամախյան թաղամասի բնակիչ Լևոն Ասատրյանի տան հողամասում շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է խաչքար /թվագրվում է 12-13-րդ դդ./ և տապանաքար: Հուշարձանների պահապանների կողմից հայտնաբերված թրծած կավի շրջանաձև հատվածով ենթադրաբար հորի մնացորդներն էլ գտնվում են Դիլիջանի Շամախյան թաղամասում գտնվող տեղական նշանակության, պետական սեփականություն հանդիսացող և օտարման ոչ ենթակա հուշարձանների ցուցակում ընդգրկված հուշարձանի՝ «Մատուռ»-ի /պետ. ցուցիչ՝ 10.3.128. 9-րդ դար/, մոտ:

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը՝ գործող սահմանված կարգի համաձայն, նորահայտ օբյեկտները կներկայացնի լիազոր մարմին՝ օրենքով սահմանված համապատասխան կարգավիճակ տալու համար:



1985 թ-ին ՀԽՍՀ մինիստրների խորհրդի կողմից հաստատվել է «Դիլիջան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը» (հեղինակներ՝ Ավետիսյան, Թելումյան), որտեղ հեղինակների կողմից առաջարկվել էր.

- Պատմամշակութային արգելավայր-թանգարան, որը ընդգրկում էր «Քյարամի քուչա»

- թաղամասը
- Հուշարձանների խմբային պահպանման գոտի
- Կառուցապատման կարգավորման գոտի
- Լանդշաֆտի պահպանման գոտի

Քաղաքի զարգացման ուղիներ՝ Թաղթա և Շամախյան թաղամասերը:

Տարածքում առկա գոյություն ունեցող վանական համալիրներն են Հաղարծնի համալիրը (12-13 դդ.), Գոշավանքի համալիրը (1191 թ.), Ջուխտակ վանքը (1201թ.), Մաթոսավանքը (1205թ.):

### **Հաղարծնի վանք**

Հաղարծնի վանքը կազմավորվել է 11-13-րդ դարերի ընթացքում: Վանքի մասին տեղեկություններ է տալիս Կիրակոս Գանձակեցին: Որպես ուսումնագիտական կենտրոն, հիշատակվում է (Կոստանդին Դ, Ստեփանոս Օրբելյան) 13-րդ դարի առաջատար մշակութային կենտրոնների շարքում: Գտնվում է անտառապատ ձորի հյուսիսային լանջին, Դիլիջան քաղաքից 18 կմ, իսկ Հաղարծն գյուղից 8 կմ հեռավորության վրա: Բնական միջավայրի հետ ճարտարապետական ներդաշնակության հազվագյուտ օրինակ է:

Հաղարծնի համալիրի կազմում են երեք եկեղեցի, երկու գավիթ (մեկը՝ ավերված), սեղանատուն, աղոթարաններ, խաչքարեր: Վանքի տարածքում, հուշարձանների գլխավոր խմբից արևելք, ժայռալանջին աղոթարաններ են, գեղաքանդակ խաչքարեր: Հաղարծնում գտնված բրոնզաձույլ կաթսան (350 կգ, այժմ Հայաստանի պատմության պետական թանգարանում է) գեղարվեստական մետաղագործության բարձրարվեստ նմուշներից է, շուրթի պսակի փորագրությունը նշում է պատրաստման տարեթիվը՝ 1232:

Սուրբ Գրիգոր եկեղեցին վանքային համակառուցի վաղագույն հուշարձանն է: Վանքն իր ծաղկմանն է հասել 12-13-րդ դդ., հարստանալով եկեղեցական և քաղաքացիական նորանոր հուշարձաններով, կազմավորվելով, որպես ամբողջական համակառուց: Թեև պատմական ու վիմագրական վկայություններից զուրկ է, սակայն հետազոտողների կարծիքով թվագրվում է 10-11րդ դդ.: Հաղարծնի վանքը ավերվել է սելջուկների կողմից և



նորոգվել 1184թվականին: Ներսի կրաշաղախով ծածկված պատերի վրա տեղ-տեղ պահպանվել են որմնանկարների հետքեր:

Բացի Սուրբ Գրիգոր եկեղեցուց, բաղկացած է Սուրբ Կաթողիկե, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Աստվածածին եկեղեցիներից, երկու ժամատներից, որոնցից Սուրբ Աստվածածինն ավերված է, սեղանատնից, նրան կից նորահայտ սյունազարդ շենքից, նույնպես ավերակ, տարաբնույթ տնտեսական շինություններից: Սուրբ Աստվածածին խաչազմբեթ եկեղեցի է, եկեղեցու երկու մուտքերն էլ ընդգծված են գեղեցիկ շքամուտքերով, միմյանցից տարբեր լուծումնրով, բոլոր ճակատները լուծված են հարուստ հարդարանքի միջոցներով: Արևելյան ճակատի վերնամասում, ավագ խորանի զույգ լուսամուտներից բարձր, կոտորակալ բարձրաքանդակն է՝ կենտրոնում եկեղեցու մանրակերտը: Եկեղեցու արտաքին ճարտարապետության նկարագիրը լրացնում է որմնակամարներով հարդարված վերաալաց թմբուկը: Այն պսակող վեղարի հետ կատարում է տարածական գերիշխողի դեր վանքային համակառույցում: Սեղանատունը զարգացած միջնադարի քաղաքացիական ու վանքային ճարտարապետության գլոխգործոցներից է: Տեղադրված է համակառույցի արևմտյան կողմում, հիմնական խմբից անջատ: Կառուցվել է 1248թ.ին: Սեղանատան ընդարձակ դահլիճը զույգ ցածր մույթերով բաժանված է քառակուսիների: Դրանցից յուրաքանչյուրը ծածկված է փոխադարձաբար հատվող զույգ կամարների կոնստրուկտիվ համակարգով: Բացի զույգ մույթերից կամարների համար հենարան են ծառայում յուրաքանչյուր քառակուսու պատերի զույգ որմնամույթերը: Հատումներով առաջացած ու բազմանիստ երդիկներով ավարտվող քառակուսիներից անցումը դեպի կենտրոնական մասի ծածկերը տարբեր է:

Վանքի տարածքում կան ավերակ այլ մատուռներ ու շենքեր, բազմաթիվ խաչքարեր: Կան մի շարք վկայություններ որ վանական համալիրի ճարտարապետը հանդիսացել է Մինաս ճարտարապետը:

2010-2012 թվականների ընթացքում տեղի են ունեցել վերականգանման և բարեկարգման

աշխատանքներ: Մասնավորապես սալապատվել են նախկին թիթեղյա տանիքները, սալարկվել է ողջ տարածքը, իրականացվել են ստորգետյան ջրերի հեռացման համակարգի ներդրում, ինչպես նաև օդորակման արդի համակարգ:

#### **Գոշավանք (Նոր Գետիկ)**

Գտնվում է Դիլիջան քաղաքից 15 կմ դեպի արևելք հեռավորության վրա, Գոշ գյուղում:

Հիմնադրվել է միջնադարի նշանավոր հայ հոգևոր գիտնական, առակագիր և իրավագետ Մխիթար Գոշի կողմից 1196 թ.-ի Գոշավանք (Նոր Գետիկ) Սուրբ Աստվածածին եկեղեցու օծման արարողությամբ: Իր հարդարանքով այս եկեղեցին միջնադարյան Հայաստանի դեկորատիվ արվեստի աչքի ընկնող կոթողներից է՝12-13-րդ դդ. կրոնական, կրթական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկն է եղել:

Երկրաշարժից փլված Գետիկ վանքի փոխարեն 1188 թ.-ին իշխան Իվանե Զաքարյանի աջակցությամբ հիմնադրել է նշանավոր գիտնական, օրենսդիր, դավանաբան, մեկնիչ, առակագիր, մանկավարժ Մխիթար Գոշը (1120-1213)՝ անվանելով Նոր Գետիկ:

Այն գմբեթավոր դահլիճ տիպի կառույց է՝ արևելքից երկու կրկնահարկ խորաններով, արևմուտքից և հյուսիսից՝ մուտքերով: Արևելյան և հարավային պատերը մշակված են «հայկական խորշերով» (եռանկյունաձև կտրվածքի), հաստաբուն թմբուկը երիզված է նախշազարդ գոտիով:

Գավիթը (1197-1203 թթ.) չորս սյուներով կենտրոնակազմ գավիթների հիմնական տիպին է պատկանում: Արևելյան երկու անկյուններում ունի երկհարկանի խորաններ: Գոշավանքի գավիթը ձևով և կառուցվածքային տարրերով, Սանահինից հետո, նշանավորում է իր տիպի զարգացման հաջորդ քայլը՝ նախապատրաստելով Հաղարծնի և Կեչառիսի նույնատիպ կառույցները:

Սուրբ Աստվածածնից հարավ կանգնած է նույնատիպ, բայց ավելի փոքր չափերի Սուրբ

Գրիգոր եկեղեցին (ավարտվել է 1231թ.-ին), որի գմբեթը չի պահպանվել: Գավթի հարավային պատին գրեթե կից է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ թաղածածկ դահլիճ-եկեղեցին (1237-1241թթ.), որը, չնայած փոքր չափերին, իր դեկորատիվ հարուստ հարդարանքով աչքի է ընկնում ընդհանուր առմամբ զուսպ մշակված համալիրի կառույցների շարքում: Այստեղ դեկորատիվ որմնասյունակամարաշարը, որ քողարկում է կառույցի պարզագույն ծավալը, ինքնանպատակ զարդապատում չէ, այլ կերպար և ճարտարապետական նոր բովանդակություն ստեղծող արտահայտչամիջոց:

Գավթից հյուսիս, նրան կամարակապ միջանցքով հաղորդակից է երկհարկանի գրատուն-զանգակատունը: Չտաշված մեծաչափ քարերով, փայտակերտ «վերնահարկերով» գրատունը և արևմուտքից նրա հետ ընդհանուր դռնով միջանցիկ ժամատունը, կառուցվել մինչև 1241թ.-ը:

Շեռագայում գրատան վրա կառուցվել է երկրորդ հարկը (1291 թ., ճարտարապետներ՝ Գրիգոր և Ջաքիոս), որը խորանանման փոքր աղոթարաններով կառույց է: Մուտքը արևմուտքից է, ուր բարձրանում էին երկու կողմից՝ անկյուն կազմող բարձակային քարե աստիճաններով: Ժամատունը հավանականորեն եղել է նաև գրչության սրահ, որտեղ ձեռագրեր են ստեղծվել: Համալիրի բաղկացուցիչ մասն են կազմում գերեզմաններն ու խաչքարերը, որոնց թվում Պողոս վարպետի երեք «ասեղնագործ» խաչքարերն են (Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռի արևմտյան ճակատի մոտ տեղադրված երկու խաչքարերից մեկը 1935թ.-ին տեղափոխվել է Հայաստանի պատմության պետական թանգարան): Ըստ արձանագրության խաչքարերից մեկը (տեղում կանգնած) ստեղծվել է 1291 թ.-ին: Խորանի անկրկնելի վարագույրը պատրաստված է եղել այժի շատ փափուկ աղվամազից: Բարեպաշտ Արզուխաթունը ոչ միայն Նոր Գետիկի, այլև Հաղպատի, Մակարավանքի ու Դաղիվանքի եկեղեցիների համար էլ է պատրաստել վարագույրներ ու ծածկոցներ, քանի որ ըստ Գանձակեցու «չափազանց սիրում էր եկեղեցիները»:

Մխիթար Գոշի մահվանից հետո (1213թ.) վանքը նրա անվամբ կոչվել է Գոշավանք: Այն պատմական աղբյուրներում անվանվել է՝ վարժարան, վարժապետարան, համալսարան, ճեմարան: Ուսուցվել են հայոց և օտար լեզուներ (հունարեն, լատիներեն), քերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն:

Այստեղ են կրթվել և գործել մշակույթի նշանավոր գործիչներ Վանական Վարդապետը և Կիրակոս Գանձակեցին, որոնք հետագայում իրենց հիմնած դպրոցներում շարունակել են

Գոշավանքի ավանդները: Այստեղ պահվել և ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր: Վանքն ունեցել է այգիներ, ջրաղացներ, գյուղեր, վարելահողեր, անտառներ, ամառանոցներ:

Վանքից ոչ հեռու գյուղի հարավային մասում, կան կառույցներ՝ Սուրբ Գևորգ եռախորան գմբեթավոր փոքր եկեղեցին՝ կառուցված 1254-ին Խաչատուր վարդապետի և նրա եղբայր Բարսեղի կողմից, Մխիթար Գոշի բնակարանի մնացորդները, նրա դամբարանը:

1958-ին հայոց մեծագույն վարդապետներից մեկի՝ Մխիթար Գոշի դամբարանի մոտ հուշակոթող է կանգնեցվել, այնուհետև 1972-ին բացվել է Գոշի թանգարանը և բարեկարգվել վանքի տարածքը:

### **Ջուխտակ վանք**

Ջուխտակ վանք անվանումը ժողովրդական է: Ջուխտակն ունի երկու եկեղեցի (որից էլ ստացել է իր անունը՝ «Ջուխտ»՝ նշանակում է զույգ)՝ Սուրբ Աստվածածին եկեղեցի (1201 թ.) և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և շուրջը տարածված գերեզմանոց:

Ջուխտակ վանքը գտնվում է Դիլիջանից 3 կմ հյուսիս-արևմուտք, անտառատ լանջին, երկու գետակների միջև ընկած՝ Լոռին Ղազախից բաժանող կաղնու և հաճարի անտառներով ծածկված Խալ-Խալլու լեռան հարավային փեշին: Վանքից ներքև, գետակներից մեկը թափվում է կարմրագույն գրանիտի մեծ սալի վրա: Հազարամյակների ընթացքում ջուրը այդ սալի մեջ փոս է առաջացրել: Ջուխտակ վանքը հիմնադրվել է 12-13 դարերում:

Բաղկացած է երկու առանձին եկեղեցիներից՝ Սուրբ Աստվածածին և Սուրբ Գրիգոր:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ գմբեթավոր եկեղեցին կառուցվել է 12 դ: Սուրբ Գրիգոր եկեղեցին կենտրոնագմբեթ, որմնամույթերի վրա հենվող 4 կամարով, սրբատաշ քարերով, միջին մեծության (9,7x7,5 մ) շինություն է: Գտնվում է Աստվածածին եկեղեցուց 20 մ արևելք: Նրա ավանդատները ձևավորված են նրբաքանդակ, բարձրաճաշակ զարդանախշերով: Վարպետորեն կերտված եկեղեցու արևմտյան մուտքի բարավորին փորագրված գրերից կարելի է ենթադրել, որ ս. Գրիգորը ավելի վաղ է կառուցվել քան Աստվածածինը:

1201 թ.-ին կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ վանքի առաջնորդ Հայրապետի նախաձեռնությամբ, ճարտարապետ Սարգսի մտահղացմամբ: Այն միանավ, թաղակապ, երկթեք տանիքով եկեղեցի է: Օգտագործված են դեղնավուն, բազմերանգ ֆելզիտի սրբատաշ քարեր: Եկեղեցիների ճակատներին պահպանվել են քանդակներ, վիմագրեր: Նշմարվում են օժանդակ շինությունների հետքեր: Համալիրի շուրջը կան գերեզմաններ: Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1201 թ., վանքի վանահայր Հայրապետի ջանքերով: Շարված է սրբատաշ դեղնավուն քարերով, քառանկյունի հատակագծով, միանավ բազիլիկի տիպի թաղակապ, երկթեք տանի-քով (8,6x6,4 մ) շինություն է:

Հուշարձանների պատերին փորագրված արձանագրություններում հիշատակվում են Պետրոսի վանք և Գիշերավանք անվանումները: Եկեղեցու պատերին կան նաև նվիրատվական մի քանի այլ արձանագրություններ:

1973-77 թ.-ին վանքական համալիրը վերականգնվել է, և բերվել նախկին տեսքին: 1975-1979 թթ.-ին Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության միջոցներով իրականացվել են հուշարձանախմբի վերանորոգման և շրջապատի բարեկարգման աշխատանքները:

### **Մաթոսավանքը**

Այն գտնվում է Դիլիջան քաղաքից 4 կմ արևմուտք, Զուխտակ վանքի դիմացի լեռնալանջին,

Շամախյան գյուղից ոչ հեռու: Համալիրը բաղկացած է միմյանց կից փոքր եկեղեցիներից, գավթից և գրատնից: Հուշարձանախմբից հարավ-արևելք գտնվում է գերեզմանոցը: Եկեղեցին կառուցվել է 1205 թ, կիսամշակ խոշոր քարերով: Թաղակապ ծածկով, փոքր շինություն է, մուտքը արևմտյան կողմից, ճակատակալ քարին փորագրված է հիմնադրման արձանագրությունը: Մուտքի երկու կողմերին ագուցված են քանդակազարդ խաչքարեր: Գավթիքը արևմուտքից կից է եկեղեցուն: Քառակուսի հատակագծով թաղածածկ, կիսամշակ քարերով, ներսից կրաշաղախով սվաղված շինություն է:

Լուսավորվում է արևմտյան պատի լուսամուտից: Կան մի քանի տապանաքարեր: Գրատունը հյուսիսային կողմից հաղորդակից է գավթին: Նույնպես թաղակապ, 4x3,5 մ չափերի շինություն է: Մուտք ունի նաև արևելյան կողմից: Լուսամուտները բացվում են հարավային պատի մեջ: Ունի երկու տաճար և մեկ գավթի: Վանքի համալիրի մեջ մտնում է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցել է Ավագ Զաքարյանը, Իվանե Զաքարյանի որդին, 1247 թ: Այժմ կիսավեր է: Պատերի վրա կան քանդակազարդ խաչքարեր և արձանագրություններ: Երբեմն նաև կոչվում է Պղնձահանք (Պղնձահանքի) Սուրբ Աստվածածին եկեղեցի:

### **«Դիլիջան» միկրոռեզիդենցիայի տարաբնակեցման համակարգի վերլուծություն**

Դիլիջանը գտնվում է Տավուշի մարզում: Արևմուտքից այն սահմանակցում է Լոռու մարզին, հարավ-արևմուտքում՝ Կոտայքի մարզին և հարավից՝ Գեղարքունիքի մարզին: Արևելքից մարզն ընդհանուր սահման ունի Ադրբեջանի, իսկ հյուսիսում՝ Վրաստանի հետ:

Գտնվելով մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևելք մոտ 100 կմ հեռավորության վրա՝ Դիլիջանն իր բնական դիրքի շնորհիվ համարվում է Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից: Քաղաքը սփռված է խիտ անտառներով ծածկված լեռնահովտում և առանձնանում է իր յուրատեսակ «լեռնային» («ալպյան»), ավանդական ճարտարապետությամբ՝ հաճախ

անվանվելով «փոքր Շվեյցարիա»: Դիլիջանն ու Տավուշի մարզը հայաստանի գլխավոր զբոսաշրջային գոտիներից են:

Դիլիջանը գծային քաղաքաշինական կառուցվածք ունեցող քաղաք է, տեղակայված գլխավորապես Աղստևի և Աղստևի վտակների երկարությամբ որին նպաստել են նաև միջպետական նշանակության Մ-4 և Մ-8 մայրուղիների առկայությունը:

Քաղաքի միջով անցնում են երեք միջանցիկ ճանապարհ՝ դեպի Երևան, Թբիլիսի և Վանաձոր, որոնք հատվելով քաղաքի կետրոնում կազմում են բարդ հանգույց:

Քաղաքի տարածք կտրտվածության պատճառով քաղաքի փողոցներն ունեն երկայնական մեծ թեքություններ: Բացառություն է կազմում Դեբեդ գետի երկայնքով ընկած Կալինինի (Մ-8) և գետափնյա փողոցները, ինչպես նաև Թբիլիսյան խճուղին (Մ-4):

Եթե քաղաքի հին կառուցապատման թաղամասերի փողոցները (Մյասնիկյան, Շահումյան, Օրջոնիկիձե, Գայի) ունեն ոչ այնքան մեծ թեքություններ, ապա նոր կառուցապատման թաղամասերի փողոցները կտրուկ թեքություններ ունեն, ինչը շատ դժվարացնում է թե՛ դրանց շահագործումը, և թե՛ պահպանումը:

Դիլիջանով է անցնում Հայաստան-Վրաստանի սահման (Բագրատաշեն մաքսակետ) հիմնական մայրուղին: Բագրատաշեն մաքսակետով սահմանահատումների թիվը 2017թ.-ին կազմել է մոտ 1.2 մլն մարդ, որոնց մեծ մասը՝ մոտ 10%-ը անցել է Դիլիջան համայնքով: Այս հանգամանքով է պայմանավորված արագ սննդի (6), մանրածախ առևտրի (249) և մեքենաների վերանորոգման կետերի (15) մեծ թիվը: Այս կազմակերպությունների թիվը 2015թ.-ի նկատմամբ աճել է 20%-ով:

## **Բնակավայրերի վերլուծություն**

Որպես առողջարան, քաղաքին 1958 թվականին տրվել է հանրապետական ենթակայության քաղաքի կարգավիճակ: 1996 թվականից, որպես վարչական միավոր մտնում է Տավուշի մարզի մեջ:

Դիլիջանի տարածքում կան 2 տասնյակ հանքային աղբյուրներ, որոնք ունեն երկաթ-հիդրոկարբոնատա-քլորիդ-նատրիումակալցիումական բաղադրություն: Աղբյուրներից երկուսը շշալցվում են: Քաղաքի բնապատկերին առանձին հմայք է հաղորդում Աղստև գետն իր վտակներով: Հայաստանում առաջին առողջարանը հիմնադրվել է Դիլիջանում 1921 թ.:

Ներկայումս քաղաքում գործում են շուրջ 3 տասնյակ առողջարաններ և հանգստյան տներ, 5 դպրոցներ, 3 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և բուհերի 2 մասնաճյուղեր: Քաղաքն ունի 3 թանգարան, գրադարանային համակարգ, գեղարվեստի և երաժշտական դպրոցներ:

Քաղաքը զբոսաշրջային և բարեկամական կապեր ունի Լյուքսեմբուրգի Պետանջ, Իտալիայի Ուդինե, Անգլիայի Ուինքոմբ, Ֆրանսիայի միջերկրածովյան հայտնի զբոսաշրջային կենտրոններ Մարսել, էքս-Պրովանս և Սեն Մաքսիմ քաղաքների հետ:

Իրականացվում է քաղաքը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու կառավարության ծրագիրը:

2016 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ն Դիլիջանն ընդգրկել է Ուսումնառու քաղաքների համաշխարհային ցանցում (GNLC):

Ծագումնաբանություն

Մոսկվայի կայսերական հնագիտության ընկերության անդամ՝ պատմաբան Մ. Սմբատյանը իր «Տեղեկագիր Գեղարքունիքի ծովազարդ գավառի» աշխատությունում գրել է.

«Հովհաննեսի թոռ, Տեր-Մաթևոսի որդի Դիլիջանը իր որդիներ Աբրահամի, Սարգսի, Փիրիամզի և իր կին Սիրմայ խաթունի հետ տեղափոխվել է Գավառից Ղշլաղ, ուր և 1544թ-ին կապել է կամուրջ»:

Այս վկայությունից հետո պատմաբանը շարադրում է Մելիք Դիլիջանի ուղիղ խոսքը.

«Ես՝ Դիլիջանս, շինեցի Արծվաքարս /Ղշլաղ/, գնեցի ըստակ /դրամով/ մուլքս /անշարժ գույք/ պարոն Սաղաթելի որդի Շահլուղից դամայ սուլթանից»:

Մելիք Դիլիջանի անունը նշվում է Տաթևի վանքի հարկատուների ցուցակում մելիք Մանուչարի, Շահնազարի, Մելիքջանի և 41-րդ համարի տակ նշվում է Մելիք Դիլիջանի անունները:

Բնակչություն

Դիլիջանի բնակչության փոփոխությունը.

Տարի	1976	1989	1991	2001	2004	2015
Բնակիչ	24056	30433	30400	16202	16100	23700

Տնտեսություն

Դիլիջանում առավել զարգացած են առողջարաններին սպասարկող արդյունաբերության ճյուղերը: Իբրև առողջարանային քաղաք Դիլիջանի համար կենսական նշանակություն ունի նաև գյուղատնտեսությունը, հատկապես անասնաբուծությունը և բանջարաբուծությունը:

1932 թ.-ին շահագործման է հանձնվել ՀԷԿ-ը:

1949 թ-ից գործում է քաղաքի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից մեկը՝ «Դիլիջան» հանքային ջրերի գործարանը:

2010 թ-ին շահագործման է հանձնվել Աղստև-1 ՀԷԿ-ը, որն ունի 2.88ՄՎտ հզորություն: Առողջարաններ

Դիլիջանը լեռնակլիմայական առողջարան է: Քաղաքում գործում են տասնյակ հանգստյան տներ և առողջարաններ: Այստեղ են գտնվում կոմպոզիտորների ստեղծագործական և հանգստյան տունը, «Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային հանգստյան տունը:

1958 թ.-ին քաղաքի մոտակայքում տարածվող անտառահատվածում ստեղծվել է հանրապետության արգելանոցներից մեկը՝ Դիլիջանի արգելանոցը:

Մշակույթ

Ամֆիթատրոն

Արդեն 7-րդ տարին է, ինչ Լեոնիդ Ենգիբարյանի անվան մնջախաղի միջազգային փառատոնը համախմբում է տարբեր երկրներից Հայաստան ժամանած մնջախաղացներին, անհատ ստեղծագործողներին և թատերախմբերին: Օգոստոսի 13-ին, 2019, VII միջազգային փառատոնի թատերախմբերը ելույթ ունեցան Դիլիջանի ամֆիթատրոնում: Միջազգային փառատոնի մասնակից 7 երկրներից դիլիջանյան բեմում հանդես եկան Ճապոնիայից, Արգենտինայից և Իրանից ժամանած թատերախմբերը և անհատ կատարողները:

Դիլիջան համայնքը հանդիսանում է Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը, որտեղ վերջին տարիների ընթացքում իրականացվող նախագծերի արդյունքում նաև զարգանում է կրթական և մշակութային ոլորտները: Ըստ ՀՀ պետական ռեզիստրի տվյալների համայնքում գրանցված է 795 ձեռնարկություն, որոնց թիվը 2013թ.-ի նկատմամբ աճել է 20-ով: Համայնքում գործունեություն են ծավալում 11 ֆինանսական կազմակերպություններ, որոնց թիվը կտրուկ աճել է Ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի և Կենտրոնական բանկի մասնաճյուղի կառուցումից հետո, 2013թ. համայնքում կար 2 բանկի մասնաճյուղ:

Համայնքում գործող կազմակերպությունները ունեն հետևյալ բաշխվածությունը՝

- 795 միկրո ձեռնարկություն

- 78 փոքր ձեռնարկություն
- 1 միջին ձեռնարկություն
- 3 խոշոր ձեռնարկություն

Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը զբոսաշրջությունն է: Գեղեցիկ բնությունը և մեղմ կլիմայի շնորհիվ Դիլիջանը երկար ժամանակ համարվել է պասիվ հանգստի և առողջարանային կենտրոն, սակայն օտարերկրյա զբոսաշրջիկների աճին զուգահեռ սկսել է զարգանալ նաև արկածային, էկո և ագրո տուրիզմի ուղղությունները: Համայնքի տարածքում են գտնվում պատմամշակութային մեծ արժեք ունեցող բազմաթիվ կոթողներ՝ Հաղարծին վանական համալիր, Գոշավանք, Ջուխտակ վանք, Մաթոսավանք, և բնության հուշարձաններ՝ Պարզ և Գոշ լճերը: 2017թ.-ին Դիլիջան համայնք է այցելել մոտ 125,000 զբոսաշրջիկ, որոնց ընդամենը 80%-ը գիշերակացով: Համայնքում գործում են 2 խոշոր հյուրանոցներ՝ այդ թվում միջազգային բրենդներ (Բեսթ Վեսթերն), 36 հյուրանոցային համալիրներ և 45 հյուրատներ, որոնցից 33-ը Դիլիջան քաղաքում, իսկ 12-ը՝ հարակից գյուղերում: Դիլիջանում մասնաճյուղեր են հիմնել նաև Երևանում ճանաչում ունեցող ռեստորաններ՝ Դոլմամա, Քարահունջ և այլն: Ընդամենը համայնքում գործում է 20 ռեստորան և 6 արագ սննդի կետ: 2013թ.-ի համեմատ հյուրանոցների/հյուրատների և ռեստորան/ արագ սննդի կետերի թիվը համապատասխանաբար աճել է 15% և 50%:

Դիլիջանում 2011թ. սկսած հյուրանոցային տնտեսության հասույթները աճել են շուրջ 2.3 անգամ միջին հանրապետական 2.0 անգամ աճի դիմաց: Ընդհանուր առմամբ զբոսաշրջային ոլորտի ծավալը Դիլիջանում գնահատվում է 5 մլրդ դրամ, իսկ ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 1700 մարդ, որնցից 49%-ը կանայք: Զբոսաշրջության ծավալը էական աճել է 2012 թ.-ից հետո հանրային հատվածի աշխատողների համար սոցիալական փաթեթների ներդրումից հետո:

Դիլիջանով է անցնում Հայաստան-Վրաստանի սահման (Բագրատաշեն մաքսակետ) հիմնական մայրուղին: Բագրատաշեն մաքսակետով սահմանահատումների թիվը 2017թ.-ին կազմել է մոտ 1.2 մլն մարդ, որոնց մեծ մասը՝ մոտ 10%-ը անցել է Դիլիջան համայնքով: Այս հանգամանքով է պայմանավորված արագ սննդի (6), մանրածախ առևտրի (249) և մեքենաների վերանորոգման կետերի (15) մեծ թիվը: Այս կազմակերպությունների թիվը 2015թ.-ի նկատմամբ աճել է 20%-ով

Խոշոր կազմակերպությունները հիմնականում գործում են ֆինանսական և կրթական ոլորտներում: Համայնքում 2013թ.-ից գործում է ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը, 2014թ.-ից՝ «Դիլիջան ինտերնեյշնլ սքոլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը: 2017թ.-ին համայնքում բացվեց Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը: Վերը նշված կազմակերպություններում և համայնքում գործող ֆինանսական կազմակերպություններում աշխատում է մոտ 4,000 մարդ, որոնց 60%-ը չի հանդիսացել Դիլիջանի բնակիչ:

Համայնքում թույլ է զարգացած գյուղատնտեսության ոլորտը: Այստեղ գործում է ընդամենը 17 կազմակերպություն, որոնցից միայն մեկն է միջին չափի՝ «Դիլի» ՍՊԸ-ն, որն անասնապահական համալիր լինելուց բացի, զբաղվում է նաև պանրի արտադրությամբ: Այստեղ զբաղված է 16 մարդ: Գյուղատնտեսությունը 2-րդ ամենախոստումնալից ոլորտն է զբոսաշրջությունից հետո: Իրականացվող ծրագրերի արդյունքում աճող մշտական բնակչության և զբոսաշրջիկների թվի աճին զուգահեռ, մեծանում է նաև գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ինչը ներկայումս ապահովվում է այլ շրջանների արտադրանքով:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Տարեկան համեմատաբար մեծ շրջանառությամբ աչքի են ընկնում «Դիլիջան» և «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջրերի գործարանները, «Դիլիջան» գարեջրի գործարանը: Արդյունաբերության ոլորտում գործում է 88 կազմակերպություն, որոնց թիվը 8-ով աճել է 2013թ.-ի նկատմամբ:

Համայնքում գործում է մեկ բժշկական կենտրոն, որի կառավարումը հանձնվել է մասնավոր ընկերության: Բացի բժշկական կենտրոնից, համայնքում գործում են համայնքային ենթակայության 26 ընկերություններ՝ մանկապարտեզ, դպրոց, մշակույթի տուն և այլն: Համայնքապետարանում և նրա ենթակայության տակ գտնվող ընկերություններում աշխատում է 1700 մարդ, որը կազմում է ընդհանուր աշխատունակ բնակչության 21%-ը: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով, որն ունի ավելի քան 50 աշխատակից, համայնքում իրականացվում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ:

Համայնքում գործում են նաև հետևյալ ոլորտներ մի շարք փոքր և միջին կազմակերպություններ՝ հանրային ծառայությունների մատուցում (568), տրանսպորտային ծառայություններ (12), անշարժ գույքի գործակալություններ (14), շինարարական (19), հանքարդյունաբերական և քարի վերամշակման (66) և այլն:

Մարզի զարգացվածությունը անհամաչափ է, մասնավորապես աչքի է ընկնում Դիլիջան համայնքի զարգացման տեմպերը, այստեղ են կենտրոնացված մարզի հիմնական հյուրանոցային հզորությունները, որը կապված է զբոսաշրջության, ֆինանսական կառույցների մասնաճյուղերի բացման և նոր ուսումնական հաստատությունների հիմնադրման հետ: Դիլիջանը համարվում է բնակվելու, աշխատելու և զբոսաշրջության համար գրավիչ վայր: Համայնքի տեղակայման հանգամանքը կարևոր է բիզնեսի զարգացման և նոր բիզնեսների ներգրավման տեսանկյունից: Վերջին տարիներին համայնքը զգալի բարելավել է ենթակառուցվածքները, ավելացրել և խնամել է կանաչապատ տարածքները, կառուցել է թանգարան, ամֆիթատրոն, խաղահրապարակներ: Համայնքում նոր բացված հյուրանոցներն ու հյուրատները, վերակառուցված և նոր տեսք ստացած նախկին գործող հյուրանոցները, համայնքում կազմակերպվող տարբեր միջազգային փառատոնները բերել են զբոսաշրջիկների հոսքի աստիճանական աճի:

Կիրառական արվեստ

հայկական գրություններով դիլիջանական գորգ



Կիրառական արվեստի հայտնի նմուշներից է Հաղարծնի տարածքում հայտնաբերված 1232 թ. պատրաստված պղնձե կաթսան, որը մետաղի գեղարվեստական մշակման եզակի օրինակ է և պահվում է Հայաստանի պատմության թանգարանում: Այն ցուցադրվել է նաև Լոնդոնում: Ինչպես ողջ Հայաստանում այնպես էլ Դիլիջանում կան բարձրարվեստ խաչքարեր, հատկապես մեծ վարպետությամբ է պատրաստված վարպետ Պողոսի խաչքարը (1291 թ.), որը դրված է Գոշավանքում:



Նոր ժամանակներում բնակավայրում զարգացած են եղել գորգագործությունը, ասեղնագործությունը, փայտի գեղարվեստական մշակումը, ձեռարվեստը և այլ ժողովրդական արհեստներ: Հայտնի է Դիլիջանյան կարպետ տեսակը: Ինչպես այդ, այնպես էլ գորգագործության և կարպետագործության շատ հետաքրքիր նմուշներ են պահպանվում Դիլիջանի թանգարանների հավաքածուներում: Փայտագործ վարպետ Գառնիկ Ալիխանյանի ստեղծագործությունները լայն ճանաչում են ունեցել հանրապետության սահմաններից դուրս:

Առանձնապես մեծ արվեստով է պատրաստված տարբեր ծառատեսակների փայտի փոքրիկ կտորներից ստեղծված գորգը: Այդ եզակի ստեղծագործությունը ցուցադրվում է Հայաստանի ժողովրդական թանգարանի Դիլիջանի մասնաճյուղում: Փայտագործ վարպետ Ռևիկ Հովսեփյանի պատրաստած նախշազարդ օրորոցները, ցահերը, փայտե կենցաղային իրերը մեծ արժեք են ներկայացնում: Երիտասարդ վարպետ Գրիշա Հովսեփյանի ստեղծագործություններում ուրույն տեղ են գրավում հայկական ավանադական փայտե աղամանները և խաչքարերը:



#### Դիլիջանի արհեստական լիճը

Զարգացած է նաև ձեռարվեստը, որի գործում մեծ ներդրում են ունեցել արվեստագիտության թեկնածու Սերիկ Դավթյանը հետագայում ժողովրդական վարպետ Նուշիկ Մալխասյանը: Ձեռարվեստի ճանաչված վարպետներից են Ֆլորա Պապյանը, Մարինե Պողոսյանը, Սոֆյա և Նագիկ Պարանյանները, Հրեղեն Գասպարյանը, Թամարա Դավթյանը, Մարիցա Հայրապետյանը և ուրիշներ: Գորգագործության մեջ լուրջ ավանդ ունեն Ջիրավարդ և Թագուհի Ղուլյանները: Կիրառական արվեստի հետաքրքիր նմուշներ են պահպանվում Հայաստանի ժողովրդական թանգարանի Դիլիջանի մասնաճյուղում և «Դիլիջան» պատմամշակութային արգելոց-թանգարանում:



#### Ճարտարապետություն

##### Պատմական Շարամբեյան փողոցը

Դիլիջանի տարածքում և նրա շրջակայքում կան 32 ճարտարապետական հուշարձաններ: Այդ հուշարձաններից առավել նշանավորներն են Հաղարծինը, Գոշավանքը,



Ջուլիստակ Վանքը, և Մաթոսավանքը, որոնք հանդիսանում են միջնադարյան հայ ճարտարապետության արժեքավոր կոթողներ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին երբ ավելի է մեծանում Դիլիջանի առողջարանային համբավը, այստեղ կառուցվող տները իրենց մեջ պարունակում են Հարավային Կովկասի հայ մեծահարուստների ամառանոցների, Դիլիջանի տնաշինական ավանդությունների և 19-րդ դարի 30-ական թվականներից այստեղ ներգաղթած ռուս աղանդավորականների՝ մոլականների տների հարդարման էլեմենտներ: Տարածվում է այսպես կոչված ժողովրդական տների կառուցման «Դիլիջանյան ոճը»:

Քաղաքի վարչական կենտրոնը ձևավորվել է 1960-1980 թթ. 1961 թ. հաստատված քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխան: Այստեղ են գտնվում մշակույթի պալատը (հեղինակներ՝ Ռ. Գևորգյան, Խ. Վաթինյան, Ս. Ավետիսյան) ՀԿԿ քաղկոմի շենքը (ներկայումս՝ քաղաքապետարան, հեղինակներ՝ Խ. Վաթինյան Ս. Ավետիսյան), քաղխորհրդի նախկին շենքը (հեղինակներ Ս. Գյուլգատյան, Կ. Մատինյան), կապի հանգույցի շենքը (հեղինակ՝ Գ. Աջյան), կինոթատրոնը (հեղինակներ՝ Ա. Մակարյան, Լ. Ինցիկյան), քաղաքային գրադարանը (հեղինակ Գ. Առաքելյան), կենտրոնական հանրախանութը (հեղինակներ՝ Ջ. Սարգսյան, Լ. Գասպարյան), հյուրանոցը (հեղինակ՝ Գ. Աջյան): Քաղաքի կենտրոնական հրապարակը վերակառուցվել է 2005 թվականին:

1983 թ.-ին շահագործման է հանձնվել Դիլիջան պատմաճարտարապետական հուշարձան համալիրը, (հեղինակներ Հ. Թելումյան, Թ. Գրիգորյան) Կոմպոզիտորների ստեղծագործական տունը շահագործման է հանձնվել 1963 թ., բաղկացած է վարչական երկհարկանի շենքից և 12 առանձնատներից (ճարտարապետ՝ Է. Ալթունյան): 1984 թ.-ին շահագործման է հանձնվել Բեթհովենի անվան համերգասրահը:

Կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տունը շահագործման է հանձնվել 1984 թ. ճարտարապետ Հ. Պողոսյան, բաղկացած է վարչական շենքից և մենատներից:

Քաղաքի կենտրոնական մասում պահպանվում են XX դարի սկզբին կառուցված ու ազգագրական արժեք ներկայացնող տներ, որոնք կազմում են մի փոքրիկ հին թաղամաս: Դիլիջանից արևմուտք են գտնվում «Ջուլիստակ» վանքը և «Մաթոսավանքը»:

Գեղանկարչություն

18-րդ դարի վերջից սկսած շրջակա 27 գյուղերի բնակչությունն աստիճանաբար սկսեց տեղափոխվել դեպի քաղաք, և արդեն իսկ 19-րդ դարի սկզբում այն ուներ արդեն ավելի քան 60 տուն: Հաջորդ դարի ընթացքում տեղի ունեցած բնակչության աճին առաջին հերթին նպաստեցին քաղաքում առողջապահական համակարգի զարգացումը և քաղաքի՝ որպես առողջարանային կենտրոնի ու հանգստավայրի համբավի տարածումը (տարածքի բնակլիմայական պայմաններով պայմանավորված քաղաքի առողջարանային նշանակությունը հետագայում էլ ավելի աճեց, իսկ 1921թ.-ին այնտեղ բացվեց հանրապետությունում առաջին տոբերկուլյոզային առողջարանը): Բացվեցին թատրոններ, հիմնադրվեց արվեստի և երաժշտության կենտրոնը, և արդեն իսկ 19-րդ դարի վերջին՝ քաղաքում առաջին հիվանդանոցի («Լազարետ») բացման հետ միասին, Դիլիջանը դարձավ Անդրկովկասի կարևոր հանգույցներից մեկը, որի գեղատեսիլ հովտում Թիֆլիսի և Երևանի մեծահարուստները կառուցում էին իրենց ամառանոցները: 20-րդ դարի սկզբին հիմնադրված «Ռոտոնդա» բացօթյա թատրոնում ընդհուպ մինչև 1930-ական թթ. պարբերաբար բեմադրվում էին հայ և այլազգի թատերագրերի հեղինակությամբ ներկայացումներ ականավոր հայ դերասանների մասնակցությամբ: Մոտավորապես այդ ժամանակաշրջանում սկսեցին զարգացում ապրել արվեստն ու ժողովրդական արհեստները՝ գորգագործությունը, գեղարվեստը, փայտի վրա փորագրումը և դաբնությունը: Տարբեր մշակույթների նման միահյուսումը՝ Դիլիջանի յուրատեսակ ճարտարապետական ոգու և նոր ի հայտ եկած աղանդավոր մոլորական ոճի հետ մեկտեղ ձևավորեց ժամանակակից Դիլիջանի ճարտարապետական տեսքն՝ իր լանջավոր տանիքներով, սյունազարդ փորագիր պատշգամբներով և կրով սպիտակեցված պատերով:

Գեղանկարչության զարգացման գործում մեծ ներդրում ունի ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հովհաննես Շարամբեյանը: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է կերպարվեստի դպրոց, որի սաներից շատերը շարունակելով կրթությունը դարձել են շնորհալի նկարիչներ: Դիլիջանցի նկարիչների ստեղծագործությունների մեջ նշանակալի տեղ են գրավում «Հին Դիլիջան» թեմայով գործերը և այժմ Դիլիջանի թանգարանային հավաքածուներում կան հիշյալ թեմային վերաբերվող նկարիչներ Հովհաննես Շարամբեյանի, Ղազարոս Ղազարյանի, Վարազդատ Ամյանի, Համլետ Ասատրյանի, Սերժիկ Դավթյանի, Գևորգ և Համլետ Մակվեցյանների, Էդիկ Հարությունյանի, Սամվել Ֆրանգուլյանի և այլոց շուրջ 100 ստեղծագործություններ:

### **Կրթական հաստատություններ**

Դիլիջան քաղաքում գործում են 1 միջնակարգ՝ Վախթանգ Անանյանի անվան թ.5 դպրոց, 3 հիմնական՝ թ.2, թ.4, թ.6, և 1 ավագ դպրոց՝ թ.1: 2013-ից գործում են նաև Դիլիջանի կենտրոնական դպրոցը և Թումոյի մասնաճյուղը, 2014 թվականի սեպտեմբերից՝ Դիլիջանի միջազգային դպրոցը, իսկ վերջերս բացվեց Դիլիջանի Մոնթե Մելքոնյանի անվան վարժարանը:



1961թ մշակվում է Դիլիջանի նոր գլխավոր հատակագիծը մինչև 1980թ. հեռանկարով, որտեղ ավելի էին զարգացվում քաղաքի հանճատի և առողջարանային ճորձառույթները, սակայն առաջարկվում էր քաղաքի սահմաններից դուրս մերել թոքախտային հիվանդություններով տառապողների համար արողջարանը և հիվանդանոցը: 1971թ. N՝65 որոշմամբ Դիլիջանը հայտարարվեց հանրապետական նշանակության քաղաք-առողջարան:

Վերջին գլխավոր հատակագծի մշակումը 35400 մարդ հաշվարկային մնակչությամբ Լ.Էվազովայի ղեկավարությամբ սկսվել էր 1981թ. և ավարտվել 1985թ:

Գտնվելով մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևելք մոտ 100 կմ հեռավորության վրա՝ Դիլիջանն իր բնական դիրքի շնորհիվ համարվում է Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից: Քաղաքը սփռված է խիտ անտառներով ծածկված լեռնահովտում և առանձնանում է իր յուրատեսակ «լեռնային» («ալպյան»), ավանդական ճարտարապետությամբ՝ հաճախ անվանվելով «փոքր Շվեյցարիա»: Դիլիջանն ու Տավուշի մարզը հայաստանի գլխավոր զբոսաշրջային գոտիներից են:

Նպատակաուղղված լինելով հիմնականում տեղական զբոսաշրջային շուկայի պահանջարկի բավարարմանն՝ այս անտառապատ քաղաք-առողջարանը, որը շրջապատված է Դիլիջանի ազգային պարկով, հյուրընկալել է բազմաթիվ հայ անվանի արվեստագետների, կոմպոզիտորների և կինեմատոգրաֆիստների: Որպես առողջարան Դիլիջանի համաբավն իր գագաթնակետին հասավ Խորհրդային դարաշրջանում՝ 1970-80-ական թթ.-ին՝ իր բուժիչ հանքային ջրերի և հարմարավետ հանգստյան տների շնորհիվ:

Դիլիջանը Հայաստանի 22-րդ խոշոր քաղաքն է և Տավուշի մարզի 5 քաղաքների (Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ և Այրում) շարքում 2-րդ տեղն է զբաղեցնում: Քաղաքը գտնվում է մարզի հարավ-արևմտյան մասում:

Այս հոդվածը ներկայացնում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից[1]: Ցանկում ներառված է ընդամենը 303 հուշարձան (146 միավոր):

Այս հոդվածը ներկայացնում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 303 հուշարձան (146 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Ամրոց «Բերդի դաշ»	Ք.ա. 2-1 հզ, միջնադար	Հաղարծնի վանքից 2 կմ ամ, երկու ձորերի միջև, բլրի վրա, «Բոխուտ թումբ» վայրում	<a href="#">10.3/1</a>	<	ավերված, պահպանվել են պարիսպների հիմքերը	
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հզ	ամրոցից հվ և ատե	<a href="#">10.3/1.1</a>	<		
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	բնակատեղիի մոտ	<a href="#">10.3/1.2</a>	<	ավերված	
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հզ.	Գոլովինո թաղամասից հս, ԴՕՍԱԱՖ-ի շենքից 1.5 կմ հեռու, բլրի հվ-ատե հարթակում	<a href="#">10.3/2</a>	<	ավերված	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	բնակատեղիի տարածքում և մերձակայքում	<a href="#">10.3/2.1</a>	<	ավերված	
Բնակելի տուն	1911 թ.	Աղայան փող. 2	<a href="#">10.3/3</a>	<	երկհարկ, կառուցել է Մ. Սաղաթեյյանը	
Բնակելի տուն	1882 թ.	Աղայան փող. 3	<a href="#">10.3/4</a>	<	երկհարկ, կառուցել է հյուան Ա. Պետրոսյանը	
<a href="#">Բնակելի տուն</a>	19 վերջ դ.	Կալինինի փող. 5	<a href="#">10.3/5</a>	<	եղել է իշխանուհի Մարիամ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
					Թումանյանի ամառանոցը, 1979-ից՝ ժողովրդական արվեստի թանգարանի Դիլիջանի մասնաճյուղի շենք	
Բնակելի տուն	1945 թ.	Կալինինի փող. 6	<a href="#">10.3/6</a>	<		
Բնակելի տուն	1940 թ.	Կալինինի փող. 7	<a href="#">10.3/7</a>	<		
Բնակելի տուն	1934 թ.	Կալինինի փող. 8	<a href="#">10.3/8</a>	<		
Բնակելի տուն	1925-1930 թթ.	Կալինինի փող. 10	<a href="#">10.3/9</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	19 դ. վերջ	Կալինինի փող. 11	<a href="#">10.3/10</a>	S		
Բնակելի տուն	1908 թ.	Կալինինի փող. 12	<a href="#">10.3/11</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	1897 թ.	Կալինինի փող. 15	<a href="#">10.3/12</a>	S		
Բնակելի տուն	1927 թ.	Կալինինի փող. 18	<a href="#">10.3/13</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	1920 թ.	Կալինինի փող. 19	<a href="#">10.3/14</a>	S		
Բնակելի տուն	1957 թ.	Կալինինի փող. 20	<a href="#">10.3/15</a>	<		
Բնակելի տուն	1918 թ., 1960 թ.	Կալինինի փող. 22	<a href="#">10.3/16</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	1919 թ.	Կալինինի փող. 25	<a href="#">10.3/17</a>	S		
Բնակելի տուն	1796 թ.	Կալինինի փող. 26	<a href="#">10.3/18</a>	S		
Բնակելի տուն	19 դ. սկիզբ	Կալինինի փող. 28	<a href="#">10.3/19</a>	<	երկհարկ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Բնակելի տուն	1832 թ.	Կալինինի փող. 34	<a href="#">10.3/20</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 37	<a href="#">10.3/21</a>	S		
Բնակելի տուն	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 41	<a href="#">10.3/22</a>	S		
Բնակելի տուն	1842 թ.	Կալինինի փող. 42	<a href="#">10.3/23</a>	S		
Բնակելի տուն	1830 թ.	Կալինինի փող. 43	<a href="#">10.3/24</a>	S		
Բնակելի տուն	1893 թ.	Կալինինի փող. 45	<a href="#">10.3/25</a>	S		
Բնակելի տուն	1850-ական թթ.	Կալինինի փող. 48	<a href="#">10.3/26</a>	S		
Բնակելի տուն	19 դ. 2-րդ կես	Կալինինի փող. 52 ա	<a href="#">10.3/27</a>	S		
Բնակելի տուն	1830-ական թթ.	Կալինինի փող. 53	<a href="#">10.3/28</a>	S		
Բնակելի տուն	1880-ական թթ.	Կալինինի փող. 56	<a href="#">10.3/29</a>	S		
Բնակելի տուն	1880 թ.	Կալինինի փող. 60	<a href="#">10.3/30</a>	S		
Բնակելի տուն	18 դ. վերջ	Կալինինի փող. 66	<a href="#">10.3/31</a>	S		
Բնակելի տուն	1905 թ.	Կալինինի փող. 72	<a href="#">10.3/32</a>	S		
Բնակելի տուն	1860 թ.	Կալինինի փող. 78	<a href="#">10.3/33</a>	S		
Բնակելի տուն	1930-ական թթ.	Կալինինի փող. 88	<a href="#">10.3/34</a>	S		
Բնակելի տուն	1870 թ	Կալինինի փող. 98	<a href="#">10.3/35</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	1872 թ.	Կալինինի փող. 110	<a href="#">10.3/36</a>	<	երկհարկ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Բնակելի տուն	1901 թ.	Կալինինի փող. 126	<a href="#">10.3/37</a>	Հ	երկհարկ	
Բնակելի տուն	1937 թ.	Կալինինի փող. 135	<a href="#">10.3/38</a>	Հ		
Բնակելի տուն	19 դ. 50-ական թթ.	Կալինինի փող. 162	<a href="#">10.3/39</a>	S		
Բնակելի տուն	20 դ. սկիզբ	Կալինինի փող. 168	<a href="#">10.3/40</a>	S		
Բնակելի տուն	1880-ական թթ.	Կալինինի փող. 170	<a href="#">10.3/41</a>	S		
Բնակելի տուն	1890 թ.	Կալինինի փող. 184	<a href="#">10.3/42</a>	S		
Բնակելի տուն	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 188	<a href="#">10.3/43</a>	S		
Բնակելի տուն	1910 թ.	Հակոբջանյան փող. 15	<a href="#">10.3/44</a>	Հ	երկհարկ, կառուցել է Ն. Պողոսյանը	
Բնակելի տուն	1910 թ.	Հակոբջանյան փող. 19	<a href="#">10.3/45</a>	S		
Բնակելի տուն	1917 թ.	Հակոբջանյան փող. 21 ա	<a href="#">10.3/46</a>	Հ	Ֆրանգույլ անների տունը	
Բնակելի տուն	1908 թ., 1959 թ.	Հակոբջանյան փող. 23	<a href="#">10.3/47</a>	Հ	երկհարկ, կառուցել է Ա. Սիմոնյանը	
Բնակելի տուն	1920 թ.	Հակոբջանյան փող. 28	<a href="#">10.3/48</a>	S		
Բնակելի տուն	1926 թ.	Հակոբջանյան փող. 31	<a href="#">10.3/49</a>	Հ	միահարկ, կառուցել է հյուան Ե. Սիմոնյանը	
Բնակելի տուն	1882 թ.	Հակոբջանյան փող. 32	<a href="#">10.3/50</a>	Հ	երկհարկ, կառուցել է Բ. Ֆրանգույլ անը	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Բնակելի տուն	1890-ական թթ.	Հակոբջանյան փող. 34	<a href="#">10.3/51</a>	S		
Բնակելի տուն	1916 թ.	Հակոբջանյան փող. 36	<a href="#">10.3/52</a>	S	երկհարկ, կառուցել է Բ. Ֆրանգուլյանը	
Բնակելի տուն	1912 թ.	Հակոբջանյան փող. 52	<a href="#">10.3/53</a>	<		
Բնակելի տուն	1882 թ.	Մանթաշյան փող. 3 գ	<a href="#">10.3/54</a>	<	երկհարկ, կառուցել է Դիլիջանի տանուտեր Մովսես Հովհաննիսյանը	
Բնակելի տուն	1860 թ.	Մանթաշյան փող. 4	<a href="#">10.3/55</a>	S		
Բնակելի տուն	1894 թ.	Մանթաշյան փող. 6	<a href="#">10.3/56</a>	<	երկհարկ, կառուցել է սալլագործ Հ. Հակոբյանը	
Բնակելի տուն	1890 թ.	Մյասնիկյան փող. 32	<a href="#">10.3/57</a>	<	երկհարկ, կառուցել է Տ. Բադալյանը	
Բնակելի տուն	1890 թ.	Մյասնիկյան փող. 34	<a href="#">10.3/58</a>	<	երկհարկ, կառուցել է Դ. Ուլիխանյանը	
Բնակելի տուն	1870-ական թթ.	Մյասնիկյան փող. 38	<a href="#">10.3/59</a>	<	երկհարկ, վաճառական Ասլանովների տունը	
Բնակելի տուն	1895-1897 թթ.	Մյասնիկյան փող. 50	<a href="#">10.3/60</a>	<	եղել է ցարական դատարանի շենքը	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Բնակելի տուն («Դավաթի տուն»)	19 դ. վերջ	Մյասնիկյան փող. 54	<a href="#">10.3/61</a>	<	երկհարկ, կառուցել է սափրիչ Սիմոնը, առաջին հարկում եղել է վարսավոր անոց	
Բնակելի տուն	19 դ. վերջ	Մյասնիկյան փող. 56	<a href="#">10.3/62</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն («Լեզգու կամ փռնչոց տուն»)	19 դ. կես	Մյասնիկյան փող. 58	<a href="#">10.3/63</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	1850-1860-ական թթ.	Մյասնիկյան փող. 82	<a href="#">10.3/64</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	1894 թ.	Մյասնիկյան փող. 86	<a href="#">10.3/65</a>	<	երկհարկ	
Բնակելի տուն	1910 թ.	Մյասնիկյան փող. 88	<a href="#">10.3/66</a>	S		
Բնակելի տուն	1930 թ.	Մյասնիկյան փող. 102	<a href="#">10.3/67</a>	<	երկհարկ, կառուցել են Պողոսյանն երը	
Բնակելի տուն	1925 թ.	Մյասնիկյան փող. 102ա	<a href="#">10.3/68</a>	<	երկհարկ, կառուցել են Պողոսյանն երը	
Բնակելի տուն	1930 թ.	Մյասնիկյան փող. 102բ	<a href="#">10.3/69</a>	<	երկհարկ, կառուցել են Պողոսյանն երը	
Բնակելի տուն	1925 թ.	Մյասնիկյան փող. 104	<a href="#">10.3/70</a>	<	երկհարկ, նկուղային մասը կառուցվել է 1873 թ.	
Բնակելի տուն	20 սկիզբ դ.	Մյասնիկյան փող. 110	<a href="#">10.3/71</a>	S		



հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Բնակելի տուն	1933 թ.	Մյասնիկյան փող. 112	<a href="#">10.3/72</a>	S		
Բնակելի տուն	1948 թ.	Մյասնիկյան փող. 118	<a href="#">10.3/73</a>	<		
Բնակելի տուն	1880 թ., 1900 թ.	Օրջոնոկիձեի փող. 1	<a href="#">10.3/74</a>	<	երկհարկ, կառուցել են Ալիխանյան ները	
Գերեզմանոց	19-20 դդ.	Մանթաշյան փող.	<a href="#">10.3/75</a>	S		
Գյուղատեղի	7-13 դդ.	քաղաքից 7 կմ ատ, Աղստևի աջ ափին, <a href="#">Պապուխճ</a> տանող ճանապարհի ձախ կողմում, «Բոյնի դար» վայրում	<a href="#">10.3/76</a>	<	ավերված է, տարածքի մի մասի վրա կառուցվել է կինոգործիչների հանգստյան տունը	
Գերեզմանոց	7-13 դդ.	գյուղատեղիի ատ եզրին	<a href="#">10.3/76.1</a>	<	ավերված է, խաչքարերից մի քանիսը տեղափոխել են նույն հանգստյան տան տարածք	
Եկեղեցի	12-13 դդ.	գյուղատեղիի կենտրոնական մասում	<a href="#">10.3/76.2</a>	S	պահպանվել են հիմքերը	
Գյուղատեղի	7-15 դդ.	քաղաքից 3 կմ հվ-ատ, Աղստևի աջ ափին, անտառում, «Բախտիար» գյուղատեղիից մոտ 2 կմ ամ, «Ղալուխ» վայրում	<a href="#">10.3/77</a>	<	ավերված	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Գերեզմանոց	7-10 դդ.	գյուղատեղիի հվ-ամ եզրին	<a href="#">10.3/77.1</a>	<		
Գերեզմանոց	7-13 դդ.	գյուղատեղիի ատ մասում	<a href="#">10.3/77.2</a>	<		
Խաչքար թևավոր	12-13 դդ.		<a href="#">10.3/77.2.1</a>	<	տեղահանված է, հենած ծառին	
Գյուղատեղի	7-20 դդ.	քաղաքի ամ մասում, Երևան-Դիլիջան մայրուղուց աջ, «Խրտանոց» վայրում	<a href="#">10.3/78</a>	<	ավերված	
Խաչքար	13 դ.	մատուռի մուտքի մոտ, ներքուստ	<a href="#">10.42/38.15.5</a>	<	
Խաչքար	13 դ.	մատուռի հվ պատի մոտ, արտաքուստ	<a href="#">10.42/38.15.6</a>	<	երկատված
Խաչքար	13 դ.	մատուռից հվ	<a href="#">10.42/38.15.7</a>	<	
Խաչքար	13 դ.	մատուռից հս	<a href="#">10.42/38.15.8</a>	<	կանգնեցված է պատվանդանի վրա
Խաչքար	13 դ.	մատուռի մոտ	<a href="#">10.42/38.15.9</a>	<	կանգնեցված է պատվանդանի վրա

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Սեղանատուն	1248 թ.	համալիրի ամ կողմում	<a href="#">10.42/38.16</a>	<	ճարտ.՝ Մինաս և Գրիգորես
Տապանատուն Բագրատունիների	12-13 դդ.	կից է Սբ. Գրիգոր եկեղեցու գավթի հվ պատին	<a href="#">10.42/38.17</a>	<	ավերված, պահպանվել են հիմքերը
Տապանաքար Սմբատ թագավորի	12 դ.		<a href="#">10.42/38.17.1</a>	<	արձանագիր
Տապանաքար	12 դ.		<a href="#">10.42/38.17.2</a>	<	արձանագիր
Քարայր-կացարանների համալիր	10-13 դդ.	վանքից մոտ 250 մ ամ, սար տանող ճանապարհի աջ ժայռալանջին	<a href="#">10.42/38.18</a>	<	բաղկացած է մոտ 10 բնական և արհեստական այրերից
Քարայր-կացարան	10-13 դդ.		<a href="#">10.42/38.18.1</a>	<	երկհարկ
Քարայր-կացարան	10-13 դդ.		<a href="#">10.42/38.18.2</a>	<	
Խաչքար	7 դ.	Քարայր-կացարանների համալիր մտնող կաճանի աջ կողմում	<a href="#">10.42/38.18.3</a>	<	
Խաչքար	7-8 դդ.	Նախորդի մոտ	<a href="#">10.42/38.18.4</a>	<	
Խաչքար	13 դ.	Նախորդի մոտ	<a href="#">10.42/38.18.5</a>	<	երկատված
Քարայր-կացարան	10-13 դդ.	Հաղարծնի վանք տանող ճանապարհի 2.5 կմ-ի վրա, ճանապարհից 300 մ աջ, անտառում	<a href="#">10.42/39</a>	<	

### Հովք գյուղական բնակավայր

**Մակերես**՝ 13,8 քկմ

**Բնակչություն**՝ 413 մարդ

Հովք գյուղը մինչև հայ-ադրբեջանական հակամարտությունը բնակեցված է եղել ադրբեջանցիներով: 90-ական թվականներին այն բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով: Նախկինում գյուղը կոչվել է Հախկխլու, Վուրդուն, իսկ այժմ ստացել է Հովք անունը: Գյուղը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +19 է, ձմռանը՝ -2, բարձրությունը ծովի մակերևույթից 1'190մ: Համայնքի զբաղեցնում է 5'406,3 հա, որից՝ 403,3 հա արոտներ, 152,04 հա վարելահողեր: Բնակչությունը ներկայումս կազմում է 397 մարդ, 189 ընտանիք:

Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է:

Ապահովված է բավարար խմելու և անբավարար քանակի ոռոգման ջրով: Գազիֆիկացված չէ: Գործում է միջնակարգ դպրոցը, համայնքում կա բուժկետ:

### Բնակչություն

Նախնիների մի մասը այստեղ է գաղթել Ադրբեջանից 1988 թ. -ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Հովքի ազգաբնակչության փոփոխությունը

Տարի	<a href="#">1873</a>	<a href="#">1897</a>	<a href="#">1922</a>	<a href="#">1926</a>	<a href="#">1931</a>	<a href="#">1939</a>	<a href="#">1959</a>	<a href="#">1970</a>	<a href="#">1979</a>	<a href="#">1989</a>	<a href="#">2001</a>	<a href="#">2004</a>
Բնակիչ	188	385	306	390	431	578	707	869	748	189	499	481

### Տնտեսություն

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և ծխախոտագործությամբ:

### Հովքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (Տավուշի մարզ)

Այս հոդվածը ներկայացնում է Տավուշի մարզի Հովք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 7 հուշարձան (5 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Ամրոց	միջնադար	գյուղի հվ-ամ կողմում	<a href="#">10.44/1</a>	S	ավերված
Գերեզմանոց	12-14 դդ.	գյուղից մոտ 2 կմ ամ, անտառում, զույգ մատուռների ամ կողմում	<a href="#">10.44/2</a>	S	
Մատուռ «Սուրբ» կամ «Խաչ»	12-13 դդ.		<a href="#">10.44/2.1</a>	S	
Մատուռ «Սուրբ» կամ «Խաչ»	12-13 դդ.		<a href="#">10.44/2.2</a>	S	
Խաչքար	14 դ.	գյուղի մեջ, Հ. Հայրապետյանի տան բակում	<a href="#">10.44/3</a>	S	
Խաչքարեր	12-14 դդ.	գյուղի մեջ	<a href="#">10.44/4</a>	S	
Մատուռ	13-14 դդ.	գյուղի դիմաց, գետի մյուս ափին, ճանապարհից 3-4 կմ հվ-աե, անտառում	<a href="#">10.44/5</a>	S	

### Թեղուտ գյուղական բնակավայր

Մակերեսը՝ 945 քկմ

Բնակչություն՝ 1542 մարդ



Գյուղը հիմնադրվել է 1925թ.-ին, այն սկզբում եղել է նախկին Ջարխեչ (այժմ Հաղարծին) գյուղի թաղամասերից մեկը, հետագայում որպես առանձին գյուղ անվանվել է Հաղարծին, այնուհետև՝ Թեղուտ: Գյուղը առանձին բնակավայրի կարգավիճակ է ստացել 1993թ.-ի Կառավարության որոշմամբ: Որպես Դիլիջանի քաղաքամերձ համայնք, գյուղի բնակիչների զգալի մասը ժամանակին աշխատում էր քաղաքի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում: Այժմ գյուղացիների հիմնական զբաղմունքն անասնապահությունն և հողագործությունն է:

Թեղուտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա են գտնվում Հաղարծին և Ջուխտակ (Դիլիջանի վարչական տարածքում) վանքերը, որոնք հայկական ճարտարապետության լավագույն նմուշներից են:

Համայնքը զբաղեցնում է 248, հա տարածք, ապահովված է ապահովված է խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար, գազիֆիկացված է, ճանապարհների վիճակը՝ բավարար:

Համայնքն ունի՝ դպրոց, բուժկետ, մշակույթի տուն, համայնքային կենտրոն , մանկապարտեզ որը սակայն չի գործում:

Թեղուտ, գյուղ Լոռու մարզում՝ մարզկենտրոն Վանաձորից 70 կմ հյուսիս-արևելք: Գյուղը տեղակայված է Դեբեդի վտակ Շնող գետի աջ ափին, Ալավերդի քաղաքից 18 կմ հեռավորության վրա՝ լեռնային անտառոտ վայրում: Գյուղը հիմնադրվել է հարևան Շնող գյուղի բնակիչների կողմից 20 դարի սկզբին: Բնակիչների նախնիները մասամբ բնիկ լոռեցի են, մասամբ տեղափոխվել են տարածաշրջան Արցախից, Ջավախքից, Սյունիքից, Սևանի ավազանից XVII- XVIII դարերում: Գյուղի անունը կապված է ներկայիս գյուղի կենտրոնական մասում գտնվող հին Թեղուտ գյուղի հետ, որը թալանվել է լեզգիների կողմից, իսկ բնիկ բնակչությունը ոչնչացվել է և գերեվարվել: Շնող գետի ավազանում գտնվող մի շարք այլ հայկական գյուղեր (Ձորիգեղ, Գիլիգեղ, Մանստև, Ախեթք, Դուքանաձոր) նույնպես ոչնչացվել են XVIII դարի լեզգիական ավերիչ արշավանքների հետևանքով:

### **Բնակչություն**

Թեղուտի բնակչության փոփոխությունը.

<b>Տարի</b>	<u>1926</u>	<u>1939</u>	<u>1959</u>	<u>1970</u>	<u>1979</u>	<u>2001</u>	<u>2004</u>
<b>Բնակիչ</b>	288	475	762	861	639	746	693

### **Տնտեսություն**

Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Բնակչության մեծ մասը աշխատում է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում:

### **Օգտակար հանածոներ**

Թեղուտում կան երկնագույն փիրուզի, պղնձի և մոլիբդենի պաշարներ:

### **Պատմամշակութային կոթողներ**

Հիմնական հողված՝ Թեղուտի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (Լոռու մարզ)

Գյուղի շրջակայքում կան միջնադարյան պատմաճարտարապետական կոթողներ՝ “Մանստևի” մենաստանը (13 դ.), Վարդան զորավար կոթողը (13-14 դդ.), 10-17 դդ. եկեղեցիներ, “Բայրել” (10-13 դդ.), “Ձորի գյուղ” (14 դ.) և “Ագեղի” մատուռները:

### **Հասարակական կառույցներ**

Թեղուտն ունի միջնակարգ դպրոց, ակումբ, մանկապարտեզ, գրադարան, կինո և բուժկայան:

Անվան այլ կիրառումների համար տե՛ս՝ Թեղուտի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (այլ կիրառումներ)

Այս հոդվածը ներկայացնում է Տավուշի մարզի Թեղուտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 7 հուշարձան (2 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Գյուղատեղի «Հնդգան»	10-14դդ.	գյուղից 3 կմ հս-աե, համանուն հանդամասում	<a href="#">10.29/1</a>	<	
Գերեզմանոց	10-14դդ.	գյուղատեղիի աե եզրին, անտառում	<a href="#">10.29/1.1</a>	<	
Մատուռ	11-12դդ.		<a href="#">10.29/1.1.1</a>	<	ավերված
Գերեզմանոց	10-14 դդ.	գյուղատեղիի ամ կողմում, «Մորուտա ծորի» աջակողմում	<a href="#">10.29/1.2</a>	<	
Մատուռ	11-12 դդ.		<a href="#">10.29/1.2.1</a>	<	ավերված
Զիթհան	12-14 դդ.	գյուղատեղիի հվ-ամ մասում, «Մորուտա ծորի» ձախակողմում	<a href="#">10.29/1.3</a>	<	ավերված
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 3 կմ հս-աե, Մորուտա գետի ձախ ափին, «Հնդգան» հանդամասում	<a href="#">10.29/2</a>	<	

**Խաչարձան,**

գյուղ Հայաստանի Տավուշի մարզում, մակերեսը 11,1 կմ քառակուսի, մարզկենտրոնից 30 կմ հարավ-արևմուտք, Երևանից՝ 124 կմ, Խաչարձան գետի գետաբերանի մոտ, ծովի մակերևույթից բարձրությունը 1050 մ, գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +20 C է, ձմռանը՝ -2 C:

### Բնակչություն՝ 353 մարդ

Խաչարձանի ներկայիս բնակչությունը այստեղ են բռնագաղթվել 1988-1989 թվականներին, նախկին Ադրբեջանի ԽՍՀ-ի տարբեր շրջաններից և քաղաքներից, մասնավորապես Շամախիի, Դաշքեսանի, Շահումյանի, Իսմայիլի, Ղազախի, Խանլարի շրջաններից, Բաքու, Սումգայիթ և Կիրովաբադ քաղաքներից: Խաչարձան գյուղը մինչև 1988 թվականի հայ-ադրբեջանական ազգամիջյան բախումները կրել է Փոլադ անվանումը և բնակեցված է եղել ադրբեջանցիներով: Փոլադի տնտեսության հետ միևնույն վարչական տարածքում է գտնվել Ադրիլիսա և Մուրթել փոքր գյուղերը (ներկայումս Ճերմակավան և Գեղատափ), որոնք նույնպես ադրբեջանաբնակ են եղել: Գյուղը Խաչարձան է վերանվանվել 1991 թվականի ապրիլի 3-ին: Գեղատափ գյուղը ադրբեջանցիների հեռանալուց հետո բնակեցվել է Շահումյանի շրջանից բռնագաղթվածներով:

Խաչարձանի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1873	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004	2012
Բնակիչ	290	220	362	565	543	755	750	195	383	331	334

### Տնտեսություն

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

### Պատմամշակութային կառույցներ

Խաչարձանի հարավային մասում կա «Խաչի տափ» մատուռ, իսկ 1 կմ հյուսիս՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակների դամբարանադաշտ:

Տավուշի մարզի Խաչարձան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 14 հուշարձան (7 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 2 կմ հս-աե, Դիլիջան-Կարմիր խճուղու ձախ եզրին, Գետիկ գետի աջափնյա լեռան գագաթին	10.36/1	<	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Բնակատեղի	Ք.ա. 1 հզ	գյուղի ատեկողմում, Աղավնավանք գյուղ տանող ճանապարհի աջ կողմում, Գետիկ գետի ձախ ափին	<a href="#">10.36/2</a>	<	
Դամբարանադաշտ	Ք.ա.1 հզ		<a href="#">10.36/2.1</a>	<	
Բնակատեղի	Ք.ա. 1 հզ	գյուղից 1.5 կմ հվ-ամ, «Աղքիլիսա» տանող ճանապարհի ձախ կողմում	<a href="#">10.36/3</a>	<	
Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հզ		<a href="#">10.36/3.1</a>	<	
Գյուղատեղի	10-14 դդ.	գյուղից 4 կմ ամ, «Աղքիլիսա» տանող ճանապարհին, անտառում	<a href="#">10.36/4</a>	<	
Գյուղատեղի	12-15 դդ.	գյուղից 2 կմ ամ, «Աղքիլիսա» գյուղատեղի տանող ճանապարհից աջ, անտառում	<a href="#">10.36/5</a>	<	
Գերեզմանոց	12-15 դդ.	մատուռի շրջակայքում	<a href="#">10.36/5.1</a>	<	
Խաչքար	13 դդ.		<a href="#">10.36/5.1.1</a>	<	երկատված, արձանագիր
Եկեղեցի	14-15 դդ.		<a href="#">10.36/5.2</a>	<	ավերված
Խաչքար	13-14 դդ.	Եկեղեցու ներսում	<a href="#">10.36/5.2.1</a>	<	բեկորոտված, արձանագիր

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Մատուռ	12-13 դդ.	գյուղատեղիի ատե եզրին	<a href="#">10.36/5.3</a>	<	ավերված
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 1 կմ հս, Դիլիջան-Կարմիր խճուղու ձախ եզրին, Գետիկ գետի աջ ափին	<a href="#">10.36/6</a>	<	ավերված
Կամուրջ	12-13 դդ.	գյուղից 2 կմ հս, Գետիկ գետի վրա	<a href="#">10.36/7</a>	<	ավերված

### Աղավնավանք,

#### Բնակչությունը՝ 237 մարդ

12 - 13-րդ դարերի կիսավեր հայկական վանքային համալիր Հայաստանի Տավուշի մարզի համանուն գյուղում: Հայտնի է նաև Անապատ Աք. Աստվածածին և Աղնաբաթի վանք անուններով: Գտնվում է Աղնաբաթ անտառամասում, որն առանձնանում է այստեղ աճող և բարձր գնահատվող կենի (կարմրածառ) ծառատեսակով: Եկեղեցուց մոտ 50 մետր հեռավորության վրա, գետափին, ծառերով շրջապատված զբոսախնջույքի սեղան կա:

Եկեղեցու ճարտարապետությունը

Եկեղեցին փոքրաչափ կենտրոնագմբեթ կառույց է՝ ավանդատներով: Կառուցված է դեղնավուն, սրբատաշ չեչաքարից: Որմնասյուները միացնող կամարներն իրենց վրա պահում են գմբեթը, որն ավարտվում է սրածայր վեղարով: Արևելյան ճակատին փորված է երկու եռանկյունաձև խորշ: Գմբեթի վեղարը և եկեղեցու տանիքը ծածկված են եղել սրբատաշ սալաքարերով, որոնցից մի քանիսն են պահպանվել տանիքին, իսկ վեղարն ամբողջությամբ մերկացել է: Թափվել են նաև քիվի ձևավոր քարերը:

Հուշարձանից դեպի հարավ պահպանվել են բազմաթիվ կառույցների մնացորդներ, որոնք, հավանաբար, եկեղեցու միաբանության բնակելի և տնտեսական շինություններն են եղել: Եկեղեցու վիմագրությունն աղքատիկ է: Ավանդատների արևմտյան ճակատներին փորագրությունների հետքեր կան, որոնց տառաձևերը բնորոշ են 12 - 13-րդ դդ. վիմագրության արվեստին:


Եկեղեցին այսօր


Եկեղեցին գործող չէ, սակայն տարիներ առաջ հրավիրյալ քահանան մկրտության արարողություն է անցկացրել Աղավնավանք գյուղի չմկրտված բոլոր բնակիչների համար: Եկեղեցին այսօր ունի բազմաթիվ այցելուներ, որոնք իրենց ուժերով ձևավորել են խորանը: Այստեղ մշտապես կատարվում է մոմավառություն: Մուտքից մի քանի մետր հեռավորության վրա գտնվող ծառերից մեկն այցելուները վերածել են «երազանքի



ծառի»՝ թաշկինակներ կապելով ճյուղերին և մտքում պահելով երազանք:

Տավուշի մարզի Աղավնավանք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 15 հուշարձան (7 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	պատկեր
Ամրոց «Բերդատեղ»	մ.թ.ա. 2-1 հզ	գյուղից 2 կմ հս-աե, ժայռոտ բարձունքի վրա	<a href="#">10.7/1</a>	<	
Ամրոց «Թփիղաշ»	մ.թ.ա. 2-1 հզ	գյուղի հս եզրին, կլոր ժայռի վրա	<a href="#">10.7/2</a>	<	
Գյուղատեղի	10-14 դդ.	գյուղից 2.5 կմ հս-աե, ձորի մեջ, գետակի աջ ափին, «Աղնաբաղ» անտառամասում	<a href="#">10.7/3</a>	<	
<a href="#">Եկեղեցի Աբ. Աստվածածին (Անապատ)</a>	11-12 դդ.		<a href="#">10.7/3.1</a>	<	
Գյուղատեղի	11-18 դդ.	գյուղից 10 կմ հս-ամ, անտառի բացատում, «Գոգարչին» վայրում	<a href="#">10.7/4</a>	<	
Գերեզմանոց	11-18 դդ.	սարահարթի թերթության վրա	<a href="#">10.7/4.1</a>	<	
Խաչքար	11 դ.		<a href="#">10.7/4.1.1</a>	S	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան	պատկեր
Խաչքար	14-15 դդ.		<a href="#">10.7/4.1.2</a>	S	
Գյուղատեղի	17-18 դդ.	գյուղից 3 կմ հս, Գոգարչին տանող ճանապարհին, ձորի մեջ, առվակի երկու կողմում	<a href="#">10.7/5</a>	S	
Գերեզմանոց	17-18 դդ.	Գոգարչին տանող ճանապարհից ձախ, անտառի բացատում	<a href="#">10.7/5.1</a>	S	<a href="#">քեռնել պատկեր</a>
Կամուրջ	12-13 դդ.	գյուղի հվ մասում, Գետիկ գետի վրա	<a href="#">10.7/6</a>	<	<a href="#">քեռնել պատկեր</a>
Մատուռ	12-13 դդ.	գյուղից 1 կմ ատ, Գետիկ գետի աջ ափին, խճուղու եզրին, ժայռի տակ	<a href="#">10.7/7</a>	<	<a href="#">քեռնել պատկեր</a>
Խաչքար	9-10 դդ.	մատուռի մուտքի մոտ	<a href="#">10.7/7.1</a>	<	<a href="#">քեռնել պատկեր</a>
Խաչքար	12-13 դդ.	ագուցված է մատուռի ամ պատի հվ մասում, արտաքուստ	<a href="#">10.7/7.2</a>	<	<a href="#">քեռնել պատկեր</a>
Խաչքար	12-13 դդ.	ագուցված է մատուռի ամ պատի հվ մասում, արտաքուստ	<a href="#">10.7/7.3</a>	<	<a href="#">քեռնել պատկեր</a>

## Կրթական ենթակառուցվածքներ

Դիլիջանում բնակվում են թվով 1100 նախադպրոցական տարիքի երեխաներ՝ երկուսից վեց տարեկան հասակի: Քաղաքում գործում է համայնքային բյուջեից ֆինանսավորվող վեց պետական նախադպրոցական ուսումնադաստիարակչական հաստատություն՝ 563 սաներով: Դրանցից հինգն ապահովված են կենտրոնական ջեռուցման համակարգերով և գործում են լիարժեք: Մանկապարտեզներն ունեն վերանորոգման կարիք, անհրաժեշտ են նոր խաղահրապարակներ:

Քաղաքում գործող միակ մասնավոր մանկապարտեզը հիմնադրվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ բանկի աշխատակիցների երեխաների համար, որոնց հաճախումն անվճար է:

### 1.4. Միկրոռեգիոնի համայնքների ընդհանուր բնութագիրը

Մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վերլուծությունն ի հայտ է բերել հետևյալ հիմնական ընդհանրությունները:

1.4.1.

#### Համայնքի խնդիրները

Համայնքի արդի վիճակի վերլուծությամբ ի հայտ են բերվել գրեթե բոլոր բնակավայրերում առկա միանման խնդիրների համալիրը: Բոլոր բնակավայրերում առկա ընթացիկ խնդիրները ևս կարելի է խմբավորել հետևյալ հիմնական խմբավորումներով<sup>1</sup>.

Ըստ ծրագրով սահմանված համայնքի զարգացման տեսլականի՝

Դիլիջան համայնքը միջազգային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման կենտրոն է, բարձր կենսամակարդակ և զբաղվածություն ունեցող բնակչությամբ: Համայնքը տարածաշրջանային ֆինանսական, կրթական կենտրոն է, որտեղ մատուցվում են հանրային որակյալ ծառայություններ:

Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանել է հիմնական նպատակներ, այն է՝

4. Էկոտուրիզմի զարգացման ենթակառուցվածքների ստեղծում և նոր պրոդուկտների ձևավորում
5. Աշխատուժի հմտությունների զարգացում և համապատասխանեցում շուկայի պահանջներին
6. Զբոսաշրջային պրոդուկտների ներկայացում և առաջնորդում միջազգային հարթակներում

Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը զբոսաշրջությունն է: Գեղեցիկ բնությունը և մեղմ կլիմայի շնորհիվ Դիլիջանը երկար ժամանակ համարվել է պասիվ հանգստի և առողջարանային կենտրոն, սակայն օտարերկրյա զբոսաշրջիկների աճին զուգահեռ սկսել է զարգանալ նաև արկածային, էկո և ագրո տուրիզմի ուղղությունները: Գործողությունների, աշխատանքների ստեղծման և ներդրումային հնարավորությունների առումով Դիլիջանի տնտեսական ներուժի գնահատումը ցույց է տալիս քաղաքի զարգացման թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների և վտանգների ընդհանուր պատկերը՝ բացահայտելով քաղաքային ենթակառուցվածքների բացերը և կարիքները՝ բարձրացնելով նրա գրավչությունը, մասնավորապես տնտեսության և տուրիզմի զարգացման համար: Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծությունը, հանգեցնում են հնարավոր գործողությունների բացահայտմանը: Հիմնվելով համայնքի տնտեսության վերլուծության վրա, ՏՏԶ պլանի նպատակն է բարելավել բնակչության ապրուստի պայմանները՝ խթանելով համայնքի տնտեսական և տուրիստական զարգացումը: Զարգացնել գյուղական բնակավայրերը, վերածելով գյուղական տուրիզմի կենտրոնների:

<sup>1</sup> Համայնքի զարգացման պլան <http://www.dilijancity.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects>



SSՁ պլանը առանձնացնում է ներդրումային հնարավորություններն այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ տուրիզմը, կրթությունը, ինչը կարևոր խթան կհանդիսանա տեղական տնտեսության զարգացման հարցում: Այս տնտեսական ճյուղերին ինստիտուցիոնալ աջակցությունը համարվում է համայնքի հիմնական զարգացման կայուն ռազմավարություն: Ընտրված ռազմավարական ենթակառուցվածքային ծրագրերի ընտրությունն ու իրագործումն անհրաժեշտ են՝ բարելավելու՝ տուրիզմի զարգացման համար:

#### 1.4.2. Ռազմավարական նպատակներ

Համայնքի տնտեսությունը կառուցված է երեք հիմնական բաղադրիչներից՝ փոքր համայնքային ձեռնարկություններ, մեծ և միջին ձեռնարկություններ և գյուղատնտեսություն՝ փոքր ու մեծ ֆերմերային տնտեսություններ: Համայնքի տնտեսությունը, բացի աշխատատեղեր և ընդհանուր բարեկեցություն ապահովելուց, ունի մեկ այլ հիմնական գործառույթ՝ ապահովել բավարար միջոցներ սոցիալական հատվածի համաչափ զարգացման (կրթություն, առողջապահություն և այլն), ենթակառուցվածքների անխափան վիճակի (ճանապարհներ, գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարում և այլն) համար, ինչպես նաև հնարավորություն տալ բարելավելու էկոլոգիական իրավիճակը:

Դիլիջան համայնքն ընդգրկում է Դիլիջան քաղաքային և 6 գյուղական բնակավայրեր: Դիլիջան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում, որի միջով անցնում է Երևան-Վրաստանի սահման միջպետական մայրուղին: Մայրաքաղաքից հեռավորությունը **99 կմ** է: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 63,317 հա է, որից ավելի քան 50 տոկոսը «Դիլիջան ազգային պարկի» անտառային հողերն են: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը կազմել է 26,700 մարդ, որոնց 70%-ը քաղաքային բնակչությունն է, իսկ 30%-ը գյուղական: Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 18670 մարդ, որոնցից 50.8% տղամարդիկ են և 49.2%-ը՝ կանայք: Պաշտոնական գործազրկության մակարդակը կազմում է 6.4%, իսկ իրական գործազրկությունը 15.7% է: 2017 թ. դրությամբ Դիլիջանում գրանցված աշխատողների թիվը 8296 է, որի 33%-ը՝ հանրային ոլորտում: Բնակչության միջին տարիքը ըստ սեռի հետևյալն է. տղամարդիկ՝ 37 տարեկան, կանայք՝ 33 տարեկան: Դիլիջան համայնքի բնակչությունը 2013 թվականի համեմատ աճել է 15%-ով, ինչը պայմանավորված է մի շարք խոշորամասշտաբ նախագծերի իրականացմամբ, մասնավորապես, ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական կենտրոնի, «Դիլիջան ինտերնեյշնլ սքոլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցի և «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցի գործունեությամբ: 2017 թ.-ից գործում է նաև Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը, ինչը նույնպես դրական ազդեցություն կունենա բնակչության թվի վրա:

#### Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն

Դիլիջան համայնքը հանդիսանում է Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը, որտեղ վերջին տարիների ընթացքում իրականացվող նախագծերի արդյունքում նաև զարգանում է կրթական և մշակութային ոլորտները: Ըստ ՀՀ պետական ռեզիստրի տվյալների համայնքում գրանցված է 795 ձեռնարկություն, որոնց թիվը 2013թ.-ի նկատմամբ աճել է 20-ով: Համայնքում գործունեություն են ծավալում 11 ֆինանսական կազմակերպություններ, որոնց թիվը կտրուկ աճել է Ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի և Կենտրոնական բանկի մասնաճյուղի կառուցումից հետո, 2013թ. համայնքում կար 2 բանկի մասնաճյուղ:

Համայնքում գործող կազմակերպությունները ունեն հետևյալ բաշխվածությունը՝

- 795 միկրո ձեռնարկություն
- 78 փոքր ձեռնարկություն

- 1 միջին ձեռնարկություն
- 3 խոշոր ձեռնարկություն

Խոշոր կազմակերպությունները հիմնականում գործում են ֆինանսական և կրթական ոլորտներում: Համայնքում 2013թ.-ից գործում է ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը, 2014թ.-ից՝ «Դիլիջանի ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը: 2017թ.-ին համայնքում բացվեց Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը: Կերը նշված կազմակերպություններում և համայնքում գործող ֆինանսական կազմակերպություններում աշխատում է մոտ 4,000 մարդ, որոնց 60%-ը չի հանդիսացել Դիլիջանի բնակիչ:

Համայնքում թույլ է զարգացած գյուղատնտեսության ոլորտը: Այստեղ գործում է ընդամենը 17 կազմակերպություն, որոնցից միայն մեկն է միջին չափի՝ «Դիլի» ՍՊԸ-ն, որն անասնապահական համալիր լինելուց բացի, զբաղվում է նաև պանրի արտադրությամբ: Այստեղ զբաղված է 16 մարդ: Գյուղատնտեսությունը 2-րդ ամենախոստումնալից ոլորտն է զբոսաշրջությունից հետո: Իրականացվող ծրագրերի արդյունքում աճող մշտական բնակչության և զբոսաշրջիկների թվի աճին զուգահեռ, մեծանում է նաև գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ինչը ներկայումս ապահովվում է այլ շրջանների արտադրանքով:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Տարեկան համեմատաբար մեծ շրջանառությամբ աչքի են ընկնում «Դիլիջան» և «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջրերի գործարանները, «Դիլիջան» գարեջրի գործարանը: Արդյունաբերության ոլորտում գործում է 88 կազմակերպություն, որոնց թիվը 8-ով աճել է 2013թ.-ի նկատմամբ:

Համայնքում գործում է մեկ բժշկական կենտրոն, որի կառավարումը հանձնվել է մասնավոր ընկերության: Բացի բժշկական կենտրոնից, համայնքում գործում են համայնքային ենթակայության 26 ընկերություններ՝ մանկապարտեզ, դպրոց, մշակույթի տուն և այլն: Համայնքապետարանում և նրա ենթակայության տակ գտնվող ընկերություններում աշխատում է 1700 մարդ, որը կազմում է ընդհանուր աշխատունակ բնակչության 21%-ը: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով, որն ունի ավելի քան 50 աշխատակից, համայնքում իրականացվում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ:

Համայնքում գործում են նաև հետևյալ ոլորտներ մի շարք փոքր և միջին կազմակերպություններ՝ հանրային ծառայությունների մատուցում (568), տրանսպորտային ծառայություններ (12), անշարժ գույքի գործակալություններ (14), շինարարական (19), հանքարդյունաբերական և քարի վերամշակման (66) և այլն:

#### 1.4.3. Կենսաբազմազանությունը /4, 5, 6/

##### 1.4.3.1. Բուսական աշխարհ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 5-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստև գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 27

տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (պահպանական գոտում դրանք 22-ն են): Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են:

Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ազարիկալ սնկերին, 124-ը՝ աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնա-ունկ (*Lactarius*), սարդոստայնասունկ (*Cortinarius*), թելիկասունկ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունկ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Աբեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից:

176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքելուց և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

#### 1.4.3.2. Կենդանական աշխարհ

‘Դիլիջան’ ազգային պարկի տարածքում հանդիպում են Փափկամարմինների (*Mollusca*) 69 և Հոդվածոտանիների (*Arthropoda*) 1431 տեսակներ: Վերջիններս պատկանում են Միջատների (*Insecta*) դասին: Նշված տեսակներից 6-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են ‘Դիլիջան’ ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pal.:

#### Սողուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Մողեսներ (*Lacertilia*) – 12 տեսակ.
- Օձեր (*Serpentes*) – 6 տեսակ.
- Կրիաներ (*Testudines*) - 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

#### Կաթնասուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (*Insectivora*) – 9 տեսակ.
- Կրծողներ (*Rodenti*) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (*Logomorpha*) – 1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (*Chiroptera*) – 7 տեսակ.
- Գիշատիչներ (*Carnivora*) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (*Artiodactyla*) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 7-ը՝ եր-կարականջ (ականջեղ) ոզնի, Եվրոպական լայնականջ ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և վայրի կատուն:

#### 1.4.3.3. Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Ծառա-թփային բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով, նախագծման ընթացքում ջրատարների ուղեգծերը ընտրվել են այնպես, որ նրանք չհատվեն ծառերի հետ:

#### 1.4.3.4. **Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ**

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարների կառուցման ընթացքում պայթեցման և ամենախնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ- մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանի-ներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

#### 1.4.4. **Տարածքի բնական միջավայրի գնահատումն ըստ տեխնածին ազդեցության ընկալունակության /7/**

Տարածքի տնտեսական օգտագործման ռեժիմը զգալիորեն կախված է բնական միջավայրի ինքնամաքրման պոտենցիալից, որը ներառում է մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), ջրավազանների ինքնամաքրման պոտենցիալը (ՋԻՊ) և հողերի ինքնամաքրման պոտենցիալը (ՀԻՊ):

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), որը բնորոշում է դիտարկ-վող շրջանի մթնոլորտային օդի ինքնամաքրման ունակությունը կազմել է 1.17, որի դեպքում խառնուրդների ցրման պայմանները գնահատվում են որպես ոչ այնքան բարենպաստ:

Ջրային օբյեկտների ինքնամաքրման պոտենցիալը (ՋԻՊ) գնահատվում է ամռանը ջերմաստիճանային ռեժիմի անալիզի և ջրահոսքի հիդրոլոգիական բնութագրի հիման վրա: ՋԻՊ-ը գնահատվել է Աղստև գետի համար: Գետի ինքնամաքրման ջերմաստիճանային ցուցանիշի և գետի ջրի 8.22 մ<sup>3</sup>/վրկ բազմ-ամյա միջին ծախսի դեպքում ՋԻՊ-ը գնահատվում է որպես ցածր:

Հողի ինքնամաքրման պոտենցիալը (ՀԻՊ) որոշվում է ըստ հողերի հիգիենիկ ակտիվության գործակցի, բուսական ծածկի տիպի և օրգանական նյութի քայքայման արագության: Դիտարկվող տարածքի համար հողի ինքնա-մաքր-ման ունակությունը գնահատվում է որպես բարձր:

## 7. **Թափոնների կառավարում**

### 7.1 **Աղբավայրեր**

Դիլիջանի գործող աղբավայրն այլևս չի բավարարում քաղաքի կարիքները, քանի որ արդեն իսկ հասել է իր տարողության առավելագույն մակարդակին: Առաջարկվում է փակել աղբավայրը և կատարել տարածքի սանիտարական մշակում: Բնապահպանական հսկողությունը գործող աղբավայրում գտնվում է ոչ բավարար մակարդակի վրա, ուստի

փակումը թույլ կտա որոշ չափով լուծել տեղանքի բնապահպանական խնդիրները, մասնավորապես՝ դադարեցնելով գետի աղտոտումն աղբավայրից ներթափանցող կենցաղային թափոններով: Համաճարակների առաջացումը և շրջակա միջավայրի աղտոտումը բացառելու համար աղբավայրերը պետք է փակվեն և մեկուսացվեն: Օրենքով սահմանված պահանջները Դիլիջանում լիարժեք չեն կատարվում, և չվերահսկվող աղբաթափությունը ստեղծում է լուրջ բնապահպանական խնդիրներ՝ վտանգելով տարածքի բնապատկերն ու հանրային առողջությունը:

Դիլիջան համայնքում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 993960 մ<sup>2</sup> մակերես: Համայնքում աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված ճանապարհով, հատուկ մասնագիտացված ձեռնարկության կողմից: Այդ նպատակով բնակելի շենքերին հարող տարածքներում տեղադրված է 65 միավոր աղբահավաք կոնտեյներ, որոնցից 35-ը հնամաշ են և ունեն վերանորոգման կարիք: Պահանջվում է ևս 50 միավոր կոնտեյներ: Կոնտեյներների մեծ մասը հարթակներ չունեն, որի հետևանքով կենցաղային աղբը տարածվում է բնակելի շենքերի բակերով:

Դիլիջան համայնքում գտնվում են 114 բարձրահարկ շենքեր 207 աղբամուղով, որոնցից 14-ում աղբախցերի վրա բացակայում են դռները: Հաճախակի են աղբամուղերի խցանումը և աղբի կուտակումը հենց շենքերի բակերում:

Աղբահավաք կոնտեյներները, աղբանոթները, աղբահավաք խցերը չեն լվացվում և ախտահանվում: Աղբատար փախադրամիջոցների թափքերը, համապատասխան անհրաժեշտ պայմաններ չլինելու պատճառով, նույնպես չեն լվացվում և ախտահանվում:

Հիգիենիկ և համաճարակային տեսչության Դիլիջանի տարածքային կենտրոնի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

- Հատկացված տարածքը (1 հա), որը գտնվում է համայնքի վարչական սահմաններից 2 կմ հեռավորության վրա, կենցաղային կոշտ թափոնների տեղափոխման, վնասազերծման, վերամշակման կազմակերպությունների և կառույցների հողամասերի և դրանց սանիտարական պահպանման գոտիների չափերով չի համապատասխանում 'Արդյունաբերական կազմակերպությունների նախագծման սանիտարական նորմեր' ՍՆ թիվ 245-71 և 'Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում' 30.01.2014 ՍՆ և Կ պահանջներին: Տարածքը պարսպապատված չէ, անբարեկարգ է, չկան համապատասխան պայմաններ կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման և ախտահանման համար: Տարածքում կուտակված աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված են, ուստի այդ ժամանակավոր աղբավայրը ենթակա է կոնսերվացման:

Բնակչության թիվը կազմում է 19300 ըստ մարզպետարանի տվյալների: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 3860 տ/տարի:

**Ըստ մարզպետարանի տրամադրած տեղեկատվության.** աղբահանության աշխատանքների բարեփոխման նպատակով անհրաժեշտ ենք համարում մարզում ստեղծել ժամանակակից չափանիշներին համապատասխան երկարաժամկետ և հեռանկարային, տարածաշրջանային աղբավայր՝ իր բոլոր ենթակառուցվածքներով, որը նպաստավոր պայմաններ կստեղծի աղբի վերամշակման արտադրություն հիմնելու համար:

Մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ նպատակահարմար է այն կազմակերպել և իրականացնել միասնական օպերատորի ինստիտուտ ստեղծելու միջոցով, որի շրջանակներում ստեղծվելիք կառույցը կարող է հենված լինել "Պետություն-մասնավոր" փոխգործակցության վրա: Այն կարող է լինել միջհամայնքային ընկերություն, որի միջոցով կլուծվի մարզի համայնքներում աղբի կուտակման, տեղափոխման և միասնական

կանոնավոր շահագործվող աղբավայրում տեղադրման խնդիրը: Պետական հիմնարկը և ընկերությունը պայմանագրային սկզբունքով, ըստ պարտավորությունների և պատասխանատվության, կկազմակերպեն աղբավայրի շահագործումն /աղբի հավաքում, տեղափոխում, տեղադրում և անհրաժեշտության դեպքում՝ վերամշակում/ ու բնակիչներից ծառայությունների մատուցման վարձավճարների գանձումը: Ըստ որում առաջին պարտականությունը կկատարի մասնավոր ընկերությունը, երկրորդը՝ պետական հիմնարկը /տվյալ դեպքում համայնքապետարանը/: Արդյունքում կբարելավվի ծառայությունների մատուցման որակը և կբարձրանա սպասարկման մակարդակը, կլուծվի աշխատանքների կազմակերպման գործընթացի տեխնիկական հագեցվածության խնդիրը, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կբարձրանա աղբահանության եկամուտների ծավալը և ոլորտում ներգրավված աշխատակիցների աշխատավարձը:

Մարզում աղբահանության ոլորտի աշխատանքները աստիճանաբար կկազմակերպվեն ինքնաձախսաձածկման սկզբունքով:

### **Տարածքի վերլուծություն և համալիր գնահատական**

#### **Շրջակա միջավայրի քաղաքաշինական-էկոլոգիական վիճակի վերլուծություն**

Դիլիջանի բնութունը քաղաքի բարձրագույն և հաստատուն արժանիքներից է, որն այն դարձնում է տարածաշրջանի ամենագեղատեսիլ վայրերից մեկը:

Փարթամ կանաչ շրջակայքը և բնակլիմայական պայմանները՝ մաքուր օդի, գեղեցիկ տեսարանների և բացօթյա ժամանցի բազում տեսակների առումով, նպաստավոր են քաղաքի հյուրերի և զբոսաշրջիկների համար:

2006 թ.-ին հաստատված Դիլիջանի գլխավոր հատակագծի համաձայն, Դիլիջանի առողջարանային քաղաք լինելու կարգավիճակին առաջին հերթին նպաստում են դրա միջին և բարձրադիր լեռնային կլիման, բարենպաստ թթվածնային պայմանները և գեղեցիկ բնությունը:

Առաջարկվող քաղաքաշինական միջոցառումների նպատակը քաղաքաշինական կայուն գործունեության ապահովումն է շրջակա ջրային և ցամաքային էկոհամակարգերի, այդ թվում՝ Աղստև և Գետիկ գետերի ավազանների, «Դիլիջան» ազգային պարկի և շրջակա միջավայրի կենսաբազմազանության վրա նվազագույն ազդեցությամբ: Նախագիծը նաև կոչված է ապահովել ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ անտառային օրենսգրքով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված պահանջների ապահովումը քաղաքի տարածքում:

Բացի այդ, Հայաստանն անդամակցում է ՄԱԿ-ի մի շարք բնապահպանական կոնվենցիաների, որոնցով որոշ պարտականություններ են սահմանում ՀՀ կառավարության համար: Այդ կոնվենցիաների թվում են «Կլիմայի փոփոխության մասին» մասին շրջանակային կոնվենցիան, «Կենսաբազմազանության մասին» և «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիաները: Դիլիջանի շրջակա միջավայրի պաշտպանության համակարգի պահպանումն ու կատարելագործումը կնպաստի այդ կոնվենցիաներով սահմանված նպատակների իրականացմանը:

Դիլիջանի շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված առաջին քայլը 1958 թ.-ին Դիլիջանի արգելոցի ստեղծումն էր: Սրան հետևեց 2002 թ.-ին «Դիլիջան» ազգային պարկի հիմնադրումը:

Դիլիջանի 2006 թ. գլխավոր հատակագծի համաձայն, 1993 թ. իրականացվել են անտառաշինական աշխատանքներ, որոնց արդյունքում պարզվել է, որ Դիլիջանի շրջակա անտառային տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 26.800 հա՝ այդ թվում՝ անտառաձածկ մակերեսը՝ 24.600 հա: Ներկայումս պարկը զբաղեցնում է 28.002 հա տարածություն, այդ թվում անտառաձածկ՝ 26.010 հա:

### **Դիլիջան քաղաքային բնակավայրի քաղաքաշինական զարգացման վերլուծությունը**

Հաշվի առնելով Դիլիջանում ներկայումս տեղի ունեցող արագ քաղաքաշինական զարգացումները՝ անհրաժեշտություն է առաջացել համայնքի գլխավոր հատակագծում առանձնացնել քաղաքաշինական հատուկ կարգավորման գոտի, որը կներառի Աղստև գետին զուգահեռ միջանցքը՝ ընդգրկելով նորակառույց միջազգային դպրոցի տարածքը, Գետափնյա և Կալինինի փողոցների, ինչպես նաև քաղաքի կենտրոնական մասի կառուցապատված գոտիները:

Քաղաքի հետագա զարգացման տեսլականից ելնելով քաղաքին անհրաժեշտ է նշված տարածքի մանրամասն գոտիավորման նախագիծ՝ քաղաքաշինական հստակ սահմանված չափորոշիչներով, ոճային առանձնահատուկ ուղղություններով, կոմունալ ենթակառուցվածքների հետագա բարեփոխման կարիքների նկատառումներով և այլն, ինչը կնպաստի համայնքի քաղաքաշինական կանոնակարգված զարգացմանը:

#### **Տարածքի գործոնային գնահատականն ըստ բնական պայմանների**

##### **Կլիմայական պայմաններ**

Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակ ամբողջ տարվա ընթացքում: Օդի միջին սեզոնային ջերմաստիճանի տատանումներն ավելի ցածր են, քան Երևանում՝ կազմելով  $-2.0^{\circ}\text{C}$  հունվարին մինչև  $18.2^{\circ}\text{C}$  հուլիսին (Երևանում՝ համապատասխանաբար  $-4.1^{\circ}\text{C}$  և  $26.2^{\circ}\text{C}$ ), սակայն միջին տարեկան ջերմաստիճանն ավելի ցածր է, քան Երևանում (համապատասխանաբար՝  $8.1^{\circ}\text{C}$  և  $12^{\circ}\text{C}$ ): Դիլիջանին բնորոշ է խոնավ լեռնային կլիմա: Տեղումների տարեկան առավելագույն քանակը տատանվում է (35) տոկոսից գարնանը մինչև (12)տոկոս ձմեռային ամիսներին: Մայիսին տեղումների քանակը հասնում է շուրջ (100) մմ-ի, իսկ հունվարին՝ (12) մմ-ի: Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է (593) մմ՝ երեք անգամ ավելին, քան Երևանում ((200) մմ): Արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 2091 ժամ (Երևանում՝ (2480) ժամ), իսկ օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 73%: Ձյունածածկույթի միջին բարձրությունը (18) սմ է (Երևանում՝ (2.5) սմ), իսկ առավելագույնը՝ (39) սմ (հյուսիսային լանջերին): Գերակայում են արևելյան ((17) տոկոս) և հյուսիս-արևելյան ((46) տոկոս) քամիները՝ (2) մ/վրկ միջին տարեկան արագությամբ (նույնն, ինչ Երևանում): Ամպրոպներով օրերի քանակը տարվա ընթացքում կազմում է (15)-(20) (Երևանում՝ (50) – (60)):

##### **Օդերևութաբանակլիմայական պայմանները**

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանակլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում, վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

Շրջանի կլիման բարեխառն է: Բնութագրվում է մեղմ ամառներով (բացարձակ մաքսիմումը հասնում է  $+34^{\circ}\text{C}$ ), համեմատաբար ցուրտ ձմեռներով (բացարձակ մինիմումը ոչ ցածր քան  $-23^{\circ}\text{C}$ ): Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է  $5.3^{\circ}\text{C}$ , ամենաշոգ՝ օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը՝  $+20.6^{\circ}\text{C}$ , ամենացուրտ ամսվանը՝ հունվար՝  $-8.5^{\circ}\text{C}$ : Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է (637) մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ (109) մմ, նվազագույնը հունվարին՝ (27) մմ: Ձյան տեսքով թափվող տեղումների քանակությունը (67) մմ է: Նոյեմբերի 5-ից դիտվում է կայուն ձնածածկ, որը վերանում է ապրիլի 18-ին: Ձյան ծածկույթի առավելագույն շերտի բարձրությունը (74) սմ է, նվազագույնը՝ (3) սմ:

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է (73) տոկոս: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է (3.1) մ/վրկ:

##### **Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը**

Ֆոնային կլիմայական բնութագիրն իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից
- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակում:



*Աղյուսակ 1.4.1 Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները*

Կլիմայի գործոնները	Հարմարավետությունը	Անհարմարավետություն	
		գերտաքացում	սառեցում
Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	30-35, 1.5 մ/վրկ, 25, 2.0 մ/վրկ, -15, 3.5 մ/վրկ քամու դեպքում,
Քամու արագությունը, վ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
Հարաբերական խոնավությունը, %	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Դիլիջան քաղաքային բնակավայրի օդերևութաբանական պարամետրերը վերցված են Հայիդրոմետի տվյալներից և բերված են ստորև աղյուսակներում:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը հունիս-օգոստոս ամիսներին չի գերազանցում 24°C: Գերտաքանցման փաստը Դիլիջանում չի նկատվում ամբողջ տարվա ընթացքում:

12-14°C գերազանցման դեպքերը նկատվում են հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին:

Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից հունվարից-ապրիլ և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները դիտարկվում են որպես հարմարավետ, (80) տոկոսից բարձր խոնավություն չի արձանագրվել:

(70) տոկոսից բարձր խոնավություն նկատվում է մայիսից-հոկտեմբեր ամիսների ընթացքում: (3.0) մ/վրկ-ից մեծ քամու արագություն դիտարկվում է հունվարից-մայիս և հոկտեմբերից-դեկտեմբեր ամիսներին:

Նոյեմբերից-մարտ ժամանակահատվածում օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտարկվում է -15°C-ից բարձր, սակայն նշված ամիսներին քամու արագությունը գտնվում է (3.3)-(4.2) մ/վրկ-ի սահմաններում:

*Աղյուսակ 1.4.2 Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը*

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Դիլիջան քաղաքային բնակավայր	-5.1	-4.4	-1.3	5.0	9.4	12.4	15.1	14.7	11.5	7.1	2.2	-2.6	5.3

*Աղյուսակ 1.4.3 Միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը (%)*

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Դիլիջան քաղաքային բնակավայր	69	70	70	68	74	77	79	79	77	72	69	69	73

*Աղյուսակ 1.4.4 Քամու միջին ամսական և տարեկան ազդեցությունը (մ/վրկ)*

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Դիլիջան քաղաքային բնակավայր	4.2	3.9	3.3	3.5	3.1	2.6	2.6	2.3	2.5	3.0	3.3	3.9	3.1



ամիսներին բնորոշ է շատ շոգ և շատ չոր եղանակների բացակայությունը: Թթվածնի կշռային քանակը (235) գ/ մ3:

Աշնան ամիսներին գերակշռում են արևոտ, չափավոր խոնավ եղանակները, կայուն է նաև եղանակային ռեժիմը: Նոյեմբերի երրորդ տասնամյակում առաջանում է ձյան ծածկույթ:

Կլիմայաբուժության սեզոնը ձգվում է հունիսից մինչև հոկտեմբեր, որի ընթացքում կլիմայաբուժության (օդաբուժություն, արևաբուժություն) կոմֆորտային պայմանները առավելագույնն են: Քամու ազդեցությունը ((1.9)-(2.0) մ/վրկ) համապատասխան միջոցառումներով վերացնելուց հետո ավելի կմեծանան կլիմայաբուժության պայմանները:

Կլիմայաբուժության պայմանները բարենպաստ են նաև ձմռան ամիսներին: Հունվար-փետրվար ամիսներին (27)-(23) օր առանց սահմանափակման կարելի է կազմակերպել կլիմայաբուժություն:

Թեք ռելիեֆը, սահքերի առկայությունը, ձյան կայուն ծածկույթի բացակայությունը փոքրացնում է ձմեռային սպորտով զբաղվելու հնարավորությունը:

Դիլիջանի տեղամասն աչքի է ընկնում մթնոլորտային տեղումների առատությամբ ((563) մմ տարեկան) և հարաբերական խոնավության մեծ տոկոսով ((70)-(75) տոկոս):

Ձմեռը կարճ է, տևում է (6)-(7) շաբաթ: Եղանակի ռեժիմը անկայուն է, գերակշռում են արևոտ, ձնհալքային եղանակները: Ձմռանը մեծանում է թթվածնի կշռային քանակը՝ հասնելով (283) գ/մ3, բացի դրանից նրա քանակը փոփոխական է ((15)գ/մ3), չափավոր սառնամանիքային և արևոտ, չափավոր խոնավ եղանակների անցման ժամանակ, որը սահմանափակող գործոն է կլիմայաբուժության համար:

Գարնան առաջին կեսը բնորոշվում է ավելի ցուրտ, իսկ երկրորդ կեսը՝ տաք, երբեմն շոգ եղանակներով: Եղանակային պայմանների կտրուկ փոփոխություն դիտվում է մարտ-ապրիլ ամիսներին և կազմում է (27) տոկոս: Փոքրանում է նաև թթվածնի կշռային քանակը ((260)-(270) գ/մ3):

Ամառը սկսվում է մայիսից և շարունակվում է մինչև սեպտեմբեր՝ արևոտ, չափավոր խոնավ եղանակների գերակշռությամբ: Հուլիս և օգոստոս ամիսներին (4)-(5) օր դիտվում է շատ շոգ և շատ չոր եղանակներ, իսկ հուլիսին՝ (8)-(10) օր շոգ և չոր եղանակներ, այսինքն հաճախակի է եղանակների կոնտրաստային փոփոխությունները: Օդի բարձր ջերմաստիճանի և բացարձակ խոնավության մեծացման հետ փոքրանում է թթվածնի կշռային քանակությունը՝ հասնելով (251) գ/մ3:

Աշունը սկսվում է հոկտեմբերի առաջին տասնօրյակից՝ արևոտ, չափավոր խոնավ եղանակների գերակշռությամբ: Եղանակների կոնտրաստային փոփոխություններ դիտվում են մինչև (10) օր: Աշնանը թթվածնի կշռային քանակը մեծ է՝ (260) գ/մ3:

Կլիմայաբուժության կոմֆորտային պայմանները (էէՋ 16-23օ) սկսվում են մայիս ամսից ((12) օր):

Գարնանը փչող քամիների ազդեցությունը ((1.5)-(1.7) մ/վրկ) համապատասխան կարգավորող միջոցառումներով վերացնելուց հետո, կլիմայաբուժության կոմֆորտային օրերի թիվը կարելի է հասցնել 19-20 օրվա: Հունիս ամսից մեծանում է կոմֆորտային օրերի թիվը՝ հասնելով 19-ի (58 %): Հունիսի վերջին առաջանում են գերտաքացման (էէՋ>23օ C) պայմաններ ((3օր)-(10) տոկոս), որը հուլիսին հասնում է (35) տոկոսի:

Ընդհանուր առմամբ, հուլիս-օգոստոս ամիսներին գերակշռում են կլիմայաբուժության կոմֆորտային պայմանները՝ հասնելով (45) տոկոսի: Այդ ամիսներին հետկեսօրյա ժամերին ստեղծվում են գերտաքացման պայմաններ: Այդ պատճառով առաջարկվում է արևաբուժությունը կազմակերպել առավոտյան և երեկոյան ժամերին:

Սեպտեմբեր ամսին (20) օր դիտվում է կլիմայաբուժության կոմֆորտային ((16)-(23)օ C) պայմաններ, որը հոկտեմբերին փոքրանում է՝ հասնելով (5)-(6) օրվա: Բայց քամու ազդեցությունը վերացնելուց հետո կոմֆորտային օրերի թիվը կարելի է հասցնել (10) օրվա: Ավելի ցուրտ օրերին կլիմայաբուժությունը կարելի է կազմակերպել տաղավարներում:

Ձմռան ամիսներին գրեթե բոլոր օրերը բարենպաստ են կլիմայաբուժության համար:

Ամռան ամիսներին Դիլիջանի տեղամասում կարելի է կազմակերպել ջրաբուժություն (թալասոթերապիա)՝ օգտագործելով Աղստև գետի ջրերը:

Տեղամասում ձյան փոքր ծածկույթը հնարավորություն չի տալիս ձմեռային սպորտի ձևերի կազմակերպման համար:

Բերդի տեղամասում ձմեռային եղանակների ռեժիմը աչքի է ընկնում սառնամանիքային եղանակների բացակայությամբ (միջին օրական ջերմաստիճանը  $-(12.5)$  մինչև  $-(22.50)$  C), իսկ չափավոր սառնամանիքային եղանակները դիտվում են ամսական (3)-(5)օր: Ձյան կայուն շերտ առաջանում է դեկտեմբերի վերջին, բայց ծածկույթի փոքր հզորությունը թույլ չի տալիս կազմակերպել ձմեռային սպորտի տարբեր ձևեր:

Ամառային սեզոնում կլիմայաբուժության պայմանները սկսվում են մայիսից և շարունակվում մինչև հոկտեմբեր: Մայիս-հունիս ամիսներին (17) օր ստեղծվում են կոմֆորտային պայմաններ օդաբուժություն կազմակերպելու համար: Ամռանը կեսօրին (ժ. 13) առաջանում են գերտաքացման պայմաններ ( $էէՋ > 230$  C): Հանձնարարվում է օդաբուժությունը, հատկապես արևաբուժությունը կազմակերպել առավոտյան և երեկոյան ժամերին կամ օգտագործել հատուկ սարքեր՝ ուլտրամանուշակագույն ճառագայթման փոքրացման համար:

### Շրջակա միջավայրի գոյություն ունեցող իրավիճակի գնահատականը

Քաղաքային միջավայրի համալիր անտրոպոգեն տեխնածին բեռնվածությունը բաղկացած է գործոնային ցուցանիշներից, միջավայրի հիմնական գործոնների քանակական բնութագրից, որոնք որոշիչ են մարդու օրգանիզմի վրա իրական բեռնվածությամբ՝ մթնոլորտային օդի և հողերի, աղմուկի մակարդակների, ջրի քիմիական և կենսաբանական աղտոտվածության ցուցանիշներից:

Որոշվող համալիր բեռնվածությունը օրգանիզմի վրա (KH) բաղկացած է հաշվի առնվող նշված գործոնների (տվյալ պայմաններում գոյություն ունեցող) գումարից:

Հաշվի առնվող նշված գործոններից յուրաքանչյուրը քանակապես որոշվում է հիգիենիկ նորմատիվներին վերաբերվող ցուցանիշներով:

Նշված դեպքում թույլատրելի է համարվում այն մեծությունը, որը հավասար է (1)-ի:

Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարահիգիենիկ իրավիճակի անալիզը.

Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները ( $մգ/մ^3$ ), վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի կողմից (ըստ բնակչության քանակի) և բերված են աղյուսակում:

#### Աղյուսակ 1.6.1 Աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները $U_x = 7մ/վրկ$

№№ ը/հ	Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՍԹԽ, մգ/մ <sup>3</sup>	Ֆոնային կոնցենտրացիաները	
			մգ/մ <sup>3</sup>	միավոր ՍԹԽ
1	002 Փոշի	0.5	0.3	0.6
2	701 Ծծմբի երկօքսիդ	0.5	0.05	0.1
3	200 Ազոտի օքսիդներ	0.2	0.015	0.075
4	322 Ածխածնի օքսիդ	5.0	0.8	0.16

Ինչպես երևում է աղյուսակից, Դիլիջան համայնքի տարածքում վնասակար նյութերի կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատումը կատարվել է «İâðîäë-âñêêâ ôéâçâîëÿ ïï ñâîëòàðîïîð ïââçîðð â ðâëîïïë ïëâîëðîäëâ - İ. İëîçâðââ ÑÑÑÐ, 1990» համապատասխան:

Աղտոտվածության համալիր ցուցանիշը հաշվարկվում է

$$P = \sqrt{\sum_{i=1}^n K \cdot i^2}$$

բանաձևով, որտեղ

K - նյութի նորմավորված III դասի բերման գործակիցն է

i - փաստացի խտությունների գերազանցումն է ՍԹԿ-ն:

Աղտոտվածության համալիր ցուցանիշի հաշվարկման համար ելակետային տվյալները բերված են աղյուսակում:

Աղյուսակ 1.6.2 Աղտոտվածության համալիր ցուցանիշի հաշվարկման համար ելակետային տվյալները

Աղտոտող նյութի անվանումը	Վտանգավորության դասը	Միջին օրական կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ <sup>3</sup>	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, ՍԹԿ միջ.օր, մգ/մ <sup>3</sup>	Գերազանցում է միջին օրական կոնցենտրացիան	Վտանգավորության III դասի բերման գործակիցը, իզոէֆեկտիվության գործակից, K
1	2	3	4	5	6
Փոշի	III	0.12	0.15	0.8	1
Ծծմբի երկօքսիդ	III	0.02	0.05	0.4	1
Ազոտի օքսիդներ	II	0.006	0.04	0.15	1.3
Ածխածնի օքսիդ	IV	0.32	3	0.11	0.87

Օդի աղտոտվածության համալիր ցուցանիշը՝ P-ն կլինի.

$$P = \sqrt{(1 \cdot 0.8)^2 + (1 \cdot 0.4)^2 + (1.3 \cdot 0.15)^2 + (0.87 \cdot 0.11)^2} = 0.92:$$

Ստացված տվյալներից ելնելով, երբ n=4 և p=0.92 մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը գնահատվում է թույլ աղտոտված:

Օդային միջավայրի աղտոտվածության համալիր գնահատականը տրված է ըստ հողմագծի աղտոտման աղբյուրից դեպի բնակելի գոտին փչող քամու արագության միջին տարեկան կրկնելիության (տոկոս) պայմաններում (P):

Մի հողմագծի քամիների ուղղության կրկնելիության տոկոսը քամիների շրջանային փնջագրի դեպքում՝ P<sub>0</sub>

$$P_0 = 100 : 8 = 12,5 \text{ տոկոս}$$

Քամու արագության միջին տարեկան կրկնելիությունը (գերակայում են հյուսիս-արևմտյան ուղղությամբ փչող քամիները) կազմում է 32տոկոս:

Օդային միջավայրի աղտոտվածության գնահատականը տրված է

$$K_{\text{մթն}} = \left( \frac{C_1}{N_1 \cdot \text{ՍԹԿ}_{C_1}} + \frac{C_2}{N_2 \cdot \text{ՍԹԿ}_{C_2}} + \dots + \frac{C_n}{N_n \cdot \text{ՍԹԿ}_{C_n}} \right) \cdot t$$

որտեղ

C<sub>1</sub>, 2...n - աղտոտվածության առանձին բաղադրիչների միջին օրական կոնցենտրացիան է մգ/մ<sup>3</sup>,

N1 - գործակից, որի մեծությունը կախված է աղտոտող նյութերի վտանգավորության դասից՝ I դաս - 1, II դաս - 1.5, III դաս - 2, IV դաս - 4

t - C1, C2 ... Cn - աղտոտող նյութերի գումարային ազդեցության ցուցադրանքն է  
t=P/P0

$$t=32:12.5=2.56$$

ՄԹԿC1, Cn - առանձին բաղադրիչների միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է

Դիլիջան համայնքի համար ստացվել են հետևյալ արդյունքները.

$$K_{\text{մթն}} = \left( \frac{0.12}{0.15} + \frac{0.02}{2 \cdot 0.05} + \frac{0.006}{1.5 \cdot 0.04} + \frac{0.32}{4 \cdot 3} \right) \cdot 2.56 = 1.86$$

Հաշվարկից հետևում է, որ տարվա 32% ժամանակահատվածում՝ (116) օր, Դիլիջան համայնքում նկատվում է մթնոլորտային օդի աղտոտվածության թեթևակի բարձրացում մոտ 50%-ի չափով: ((0.92)-ից դառնալով (1.86)): Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը մնում է թույլ աղտոտված:

Նշում: Նախկինում համայնքում կատարվել է մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի չափումներ, որոնց արդյունքները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

### **Շրջակա միջավայրի ներկա իրավիճակը**

### **Տարածքի բնական միջավայրի գնահատումն ըստ տեխնածին ազդեցության ընկալունակության**

Տարածքի տնտեսական օգտագործման ռեժիմը զգալիորեն կախված է բնական միջավայրի ինքնամաքման պոտենցիալից, որը ներառում է մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), ջրավազանների ինքնամաքման պոտենցիալը (ՋԻՊ) և հողերի ինքնամաքման պոտենցիալը (ՀԻՊ):

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), որը բնորոշում է դիտարկվող շրջանի մթնոլորտային օդի ինքնամաքման ունակությունը, կազմել է 1.17, որի դեպքում խառնուրդների ցրման պայմանները գնահատվում են որպես ոչ այնքան բարենպաստ:

Ջրային օբյեկտների ինքնամաքման պոտենցիալը (ՋԻՊ) գնահատվում է ամռանը ջերմաստիճանային ռեժիմի անալիզի և ջրահոսքի հիդրոլոգիական բնութագրի հիման վրա: ՋԻՊ-ը գնահատվել է Աղստև գետի համար: Գետի ինքնամաքման ջերմաստիճանային ցուցանիշի և գետի ջրի 8.22 մ<sup>3</sup>/վրկ բազմամյա միջին ծախսի դեպքում ՋԻՊ-ը գնահատվում է որպես ցածր:

Հողի ինքնամաքման պոտենցիալը (ՀԻՊ) որոշվում է ըստ հողերի հիգիենիկ ակտիվության գործակցի, բուսական ծածկի տիպի և օրգանական նյութի քայքայման արագության: Դիտարկվող տարածքի համար հողի ինքնամաքման ունակությունը գնահատվում է որպես բարձր:

Բնական միջավայրի ինքնամաքման պոտենցիալի գնահատումը կատարվել է «Նախնական գնահատում»-ի մեթոդով՝ ըստ հետևյալ բանաձևի՝

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ) բնորոշվում է մթնոլորտում աղտոտող նյութերի կուտակման կամ ցրման գերակայությունը և որոշվել է ըստ հետևյալ բանաձևի՝

$$ՄՕՊ = P_w + P_d / P_w + P_d$$

P<sub>w</sub> - քամու արագությունների կրկնողությունը (0-1.0 մ/վրկ), տոկոս

P<sub>d</sub> - մառախուղով օրերի կրկնողությունը, տոկոս

P<sub>w</sub> - (0.5) մմ տեղումներով օրերի կրկնողությունը, տոկոս

P<sub>d</sub> - 6մ/վրկ և ավելի քամու արագությունների կրկնողությունը, տոկոս

Արժեքներն ընդունվում են ըստ աղյուսակների (1.4.1-1.4.4) տվյալների:

$$P_3 = (58.3) \%$$

$$P_4 = 9.8\%$$

$$P_{\text{տ}} = 33.7\%$$

$$P_p = 24.4\%$$

$$UO\Gamma = \frac{58.3+9.8}{33.7+24.4} = 1.17 > 1$$

UO $\Gamma$ -ի ստացված արժեքի դեպքում խառնուրդների ցրման համար պայմանները գնահատվում են որպես ոչ այնքան բարենպաստ, քանի որ մթնոլորտի ինքնամաքմանը նպաստող գործընթացների կրկնելիությունը ավելի ցածր է, քան վնասակար նյութերի կուտակմանը նպաստող գործընթացների կրկնելիությունը:

Ջրային օբյեկտների ինքնամաքման պոտենցիալը /ՋԻՊ/ որոշվում է ըստ ջրահոսքի ինքնամաքման ջերմաստիճանային ցուցանիշի մեծության:

$$K = \frac{N}{365}$$

Որտեղ N - տարվա ընթացքում 16°C և ավելի ջրի ջերմաստիճանով օրերի թիվն է:

$$N=56$$

$$K = \frac{56}{365} = 0.15$$

Եթե  $K=0.15$  և ջրի միջին բազմամյա ծախսը (8.22) մ<sup>3</sup>/վրկ, ապա ՋԻՊ-ը գնահատվում է որպես ցածր, իսկ խառնուրդների նոսրացման համար պայմանները՝ անբավարար:

Հողերի ինքնամաքման պոտենցիալը /ՀԻՊ/ մեթոդիկային համապատասխան գնահատվել է ըստ տվյալ շրջանի համար բնորոշ բնական բուսական համակեցությունների տիպի և տվյալ տիպի համար բնորոշ թափված տերևների քայքայման ամենամյա ժամանակի:

Թափվածքներում ասիմիլացված էներգիան – (784.5) կալ-սմ<sup>2</sup>/տարի:

Տարվա ընթացքում թափվածքը քանակը – (210) գ/հա:

Թափվածքի էներգիայի հարաբերական քանակը – (21.2):

Վերգետնյա թափվածքը – (120) գ/հա տարվա ընթացքում:

Տապաստի պաշարը – (100) գ/հա տարվա ընթացքում:

Հողի մեջ օրգանական նյութերի քայքայման ժամանակը – (0.7) տարի:

Համաձայն մեթոդակարգի, եթե թափվածքի ասիմիլացված էներգիան մեծ է (300) կալ-սմ<sup>2</sup>/տարի և նյութերի քայքայման ժամանակը (տարի) տարածվում է (0.5)-(2)-ի սահմաններում, ապա հողերի ինքնամաքման պոտենցիալը գնահատվում է բարձր:

### **Շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցությունը**

Դիլիջանի քաղաքային համայնքի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, բնակկոմունալ սեկտորի և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկայուն օգտագործումը, որը համայնքի շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոնների թվին են դասվում սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

### **Մթնոլորտային օդը**

Ներկայումս Դիլիջանի քաղաքային համայնքի մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման

անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով: Դիլիջանի արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասերին: Արտադրական գումարային արտանետումները աննշան են և կազմում են 9.0 տ/տարի, որոնց դեպքում, համաձայն մեթոդակարգի, հաշվի չեն առնվում մթնոլորտի գետնամերձ շերտի աղտոտվածության մակարդակներում: Դիլիջան քաղաքային բնակավայրի ֆոնային աղտոտվածությունը՝ աղտոտող բոլոր նյութերով, զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՄԹԿ):

Ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի և փայտի ծախսից ելնելով և բերված են աղյուսակում.

- Գազով ջեռուցում – (70) տոկոս,
- Փայտով ջեռուցում – (30) տոկոս:

Ավտոտրանսպորտի վնասակար արտանետումների հաշվարկները կատարվել են համաձայն Կալինինի փողոցի (5) հատվածներում կատարված երթևեկության ինտենսիվության հաշվարկի և Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծի տվյալների: Վնասակար արտանետումների հաշվարկները բերված են աղյուսակում:

Աղյուսակ 1.6.4 Վնասակար արտանետումների հաշվարկները

Անվանումը	Վտանգավորության դասը	Արտանետումները, տ/տարի			
		Դիլիջան քաղաքային բնակավայրում		Այդ թվում ավազներ՝ ափամերձ	
		Ներկա դրությամբ	Հեռանկարում	Ներկա դրությամբ	Հեռանկարում
<b>I Ջեռուցում</b>					
Կախյալ մասնիկներ	3	0.063	-	0.0225	-
Ծծմբային անհիդրիդ	3	0.378	-	0.135	-
Ածխածնի օքսիդ	4	35.004	64.1	12.523	22.87
Ազոտի օքսիդներ	2	14.112	25.96	5.044	9.26
<b>Ընդամենը</b>		49.557	90.06	17.7245	32.13
<b>II Ավտոտրանսպորտ</b>					
Ածխածնի օքսիդ	4	1059	1377	386.3	502.19
Ազոտի օքսիդներ	2	170	220	61.33	79.7
Ածխաջրածիններ	4	129.3	167.8	43.69	56.8
<b>Ընդամենը</b>		1358.3	1765.4	491.32	638.7
<b>Հանրագումար</b>		1407.857	1855.46	509.0445	670.83

Հեռանկարում նախատեսվում է բնակչության թվի աճ (19 300) դառնալով (25 000) մարդ: Համապատասխանաբար ավելանում է նաև օգտագործվող բնական գազի ծախսը և ավտոտրանսպորտի քանակը: Մթնոլորտ վնասակար արտանետումների մասին



տեղեկությունները և տնտեսությանը հասցված վնասի արժեքները բերված են ստորև աղյուսակներում:

Մթնոլորտ վնասակար արտանետումները ջեռուցումից և ավտոտրանսպորտից ավելանում է՝ հասնելով (1855) տ/տարի, այդ թվում քաղաքի ափամերձ տարածքից՝ մինչև (670.83) տ/տարի:

Մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է տարեկան (67)-(88) մլն. դրամ:

*Աղյուսակ Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակը և հասցված տնտեսական վնասները (Դիլիջան քաղաքային բնակավայր)*

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման տոկոս		Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի	
	Ներկա դրությամբ	Հեռանկարում	Ներկա դրությամբ	Հեռանկարում
1	2	3	4	5
1. Բնակարանների ջեռուցում	<u>49.557</u> 3.5	<u>90.06</u> 5	2.204	4.0
2. Ավտոտրանսպորտ	<u>1358.3</u> 96.5	<u>1765.4</u> 95	64.9	84.4
Ընդամենը՝	<u>1407.857</u> 100	<u>1855.46</u> 100	67.104	88.4

*Աղյուսակ Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները և հասցված տնտեսական վնասները (գոյրիավորման տարածք)*

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %		Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի	
	Ներկա դրությամբ	Հեռանկարում	Ներկա դրությամբ	Հեռանկարում
1	2	3	4	5
1. Բնակարանների ջեռուցում	<u>17.7245</u> 3.5	<u>32.13</u> 4.8	0.79	1.03
2. Ավտոտրանսպորտ	<u>491.32</u> 96.5	<u>638.7</u> 95.2	38.7	50.3
Ընդամենը՝	<u>5090.0445</u> 100	<u>670.83</u> 100	39.49	51.33

**Մակերևութային ջրահոսքեր**

Կոյուղաջրերն ու այլ կեղտաջրերն առանց մաքրվելու ուղղակիորեն թափվում են որոշ գետերը, ինչը խիստ բացասական ազդեցություն է գործում ջրի որակական հատկությունների վրա: Գետերի ջրում օրգանական նյութերի բարձր պարունակության պատճառով թթվածնի կենսաբանական պահանջը (ԹԿՊ) դրանց ստորին հոսքում՝ Դիլիջան, Իջևան, Ճամբարակ

քաղաքների, ինչպես նաև Հաղարծին և Թեղուտ գյուղերի մոտակայքում վերին հոսքի համեմատ 5 անգամ բարձր է:

Կեղտաջրերով Աղստև գետ թափվող աղտոտող նյութերի քանակը բերվում է ստորև՝ աղյուսակում:

*Աղյուսակ Դիլիջան համայնքում կեղտաջրերով Աղստև գետ թափվող աղտոտող նյութերի քանակը*

Կեղտաջրերի ծավալը, հազ. մ <sup>3</sup>	ԹԿՊ րիվ, տ	Կախյալ նյութեր, տ	Նավթամթերքներ, տ	Ազոտ ամոնյակային, տ	Քլորիդներ, տ	Սուլֆատներ, տ	Պղինձ, կգ	Ցինկ, կգ
795.5*	47.7*	44.7*	0.02	0.95	27.0	19.9	2.0	6.0

\*Աղտոտող նյութերի քանակը գերազանցում է սահմանային թույլատրելի արտահոսքը (ՍԹԱ):

Աղբյուր՝ «Հաշվետվություն ջրօգտագործման մասին», ՀՀ բնապահպանության նախարարություն, 2014թ.

Վերջին տարիներին Աղստև գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում, քաղաքի հատվածում զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը:

Աղստև գետ թափվող հոսքաջրերի հետևանքով շրջակա ջրային ավազանին հասցված տնտեսական վնասը ներկա դրությամբ գնահատվում է տարեկան (11.98) մլն. դրամ:

Աղստև գետի համար ստացված ինքնամաքման  $K=0.15$  ցուցանիշի դեպքում, խառնուրդների նորացման համար պայմանները գնահատվում են որպես անբավարար, իսկ գետի ինքնամաքման պոտենցիալը՝ ցածր:

Աղստև գետի աղտոտվածության ցուցանիշները բերված են աղյուսակում:

*Աղյուսակ Աղստև գետի աղտոտվածության ցուցանիշները ՍԹԿ-ն գերազանցող նյութերի համար*

ՍԹԿ-ն աղտոտիչ անվանումը	գերազանցող նյութերի	Վնասակարության ցուցանիշ	Միջին տարեկան կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից
Ամոնիում իոն		սանիտարական ռեժիմ	3
Ֆոսֆատ իոն		սան. թունավոր	2

Աղբյուրը՝ Հայէկոմոնիտորինգ, տեղեկանք ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիտորինգի արդյունքների մասին Երևան, 2015թ.:

Աղստև գետի աղտոտվածության աստիճանի հիգիենիկ դասակարգումը կատարվել է ըստ վնասակարությունը սահմանափակող ցուցանիշների, և բերված է աղյուսակում:

Աղստև գետը (1.2) կմ ք. Դիլիջանից վերև հատվածում դասվում է (2)-րդ դասին (լավ որակ), իսկ (0.5) կմ ք. Դիլիջանից ներքև՝ որակի (3)-րդ դասին (միջակ): Նկատվում է ամոնիում և ֆոսֆատ իոնների կոնցենտրացիաների գերազանցում թյուլատրելի նորմերից:

*Աղյուսակ Աղստև գետի աղտոտվածության աստիճանի հիգիենիկ դասակարգումը*

Ջրավազանի անվանումը	Վնասակարարությունը սահմանափակող ցուցանիշ ՎՍՑ $ՎՍՑ = \sum(d_i - 1) + 1$			Աղտոտման աստիճանը		
	սանիտարական ռեժիմ	զգայարանական	թունաբանական	Սանիտարական-ռեժիմ	զգայարանական	Թունաբանական
Աղստև	1	1	4	1	1	>3.0<10.0

գետ				թույլատրելի	թույլատրելի	բարձր
-----	--	--	--	-------------	-------------	-------

1. *Լձ՛ժԻԶԵ-Ճ՛ՏԵՁԱ ԾձԵՐԻՐԻՁձՁՅԵՆ ԻԾՁԱԲԻԾԵՆ ԳՐԻՄՈՒ* , *ՕՁԾՁԵՕՁԾԵՇՕԲՍԵՕ ՌՁԵՕՁԾՐՁ Ռ՛ՏԻՉՐԻՁՁ ԱՐԻՄՈՒ ԻԱՍՅԵՐԻ, Ռ ՕՁԵՍՐ ԻՐԾՁԱՅԵՐԵՅ ԶԵՅԵՐԵ-Ճ՛ՏԵՐԵ ԿՕՁՁԵՕԵՕԵՁՁՐՈՅ ԱՐԻՄՈՒԾԱՐԻՄՈՒ ԻՁԾՐԻԾԵԿՅՕԵԸ. Լ՛ՏԵՁԱ. ԼԵՐՇԱԾՁԱ Ծ՛ՆՕՆԻ. 1983ձ.*
2. *Լձ՛ժԻՁԱ ԶԵՅԵՐԵ-Ճ՛ՏԵՐԵ ԿՕՁՁԵՕԵՁՁՐՈՅ ԱՐԻՄՈՒԾԱՐԻՄՈՒ ԻՁԾՐԻԾԵԿՅՕԸ. Լ՛ՏԵՁԱ. ԼԵՐՇԱԾՁԱ Ծ՛ՆՕՆԻ. 1989ձ.*

Դիլիջան քաղաքային բնակավայրի սահմաններում, Աղստև գետի ջրերի աղտոտվածության մակարդակը գնահատվում է՝

- ըստ սանիտարական ռեժիմի - թույլատրելի,
- Ըստ զգայարանական ցուցանիշների - չափավոր թույլատրելի,
- Ըստ սանիտարա-թունաբանական ցուցանիշների - բարձր:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ գոյություն ունեցող պայմաններում Դիլիջան քաղաքային բնակավայրի սահմաններում բացառվում է ռեկրեակցիոն նպատակով գետի օգտագործումը:

Հեռանկարում, բնակչության աճի հետ մեկտեղ, կավելանա նաև Աղստև գետ թափվող տնտեսակենցաղային կեղտաջրերի քանակը, ինչն իր հերթին կհանգեցնի գետի աղտոտվածության ավելացմանը: Ահրաժեշտ է Դիլիջան քաղաքային բնակավայրի կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

Աղտոտում կոչտ թափոններով

Իջևանի և Դիլիջանի աղբավայրերից ազոտային միացությունները գետ են ներթափանցում անձրևաջրերի հետ և քամու ազդեցությամբ: Գետավազանի երկայնքով գտնվող մի շարք խոշոր համայնքներում կոչտ թափոններն ուղակիորեն թափվում են գետը և աղտոտում այն, այդ թվում՝ ազոտային միացություններով:

Սննդի արդյունաբերության ձեռնարկությունների արտահոսքեր

Սննդի արդյունաբերության ձեռնարկություններից արտանետվող կեղտաջրերը ջրային ավազաններ են թափվում Իջևանի գինու գործարանի ջրահեռացման համակարգի միջով և խիստ վտանգի տակ են դնում գետի ջրի որակը: Տվյալ հատվածում բարձր են ազոտի և ֆոսֆորի միացությունների պարունակությունները:

**Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը**

Տավուշի մարզում հիվանդացության և մահացության մակարդակները բարձր են սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով, նորագոյացություններով և շաքարային դիաբետով հիվանդների հաշվին (աղբյուրը՝ տեղեկատվություն ՀՀ Տավուշի մարզպետի կողմից իրականացված աշխատանքների /2012թ./ առողջապահության ոլորտ:

Հիվանդությունների տարածման մասին վկայող տվյալները ցույց են տալիս, որ մարզում վերջին տարիներին մեծ տարածում ունեն դիաբետի (հատկապես ինսուլինաանկախ) բարդություններով հիվանդությունները, «սրտանոթային հիվանդությունները, նորագոյացությունները: Բացի դրանից, մարզի համար լրջագույն խնդիր են սոցիալական հիվանդությունները՝ տուբերկուլյոզը, հոգեկան խանգարումները, ինչպես նաև մինչև 1 տարեկան երեխաների հիվանդացությունը՝ հատկապես անեմիայով, որոնց հայտնաբերման բարելավման արդյունքում այդ հիվանդությունները բնութագրող ցուցանիշներում թվացյալ աճ է գրանցվել (աղբյուրը՝ Հավելված ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 383 - Ն որոշման ծրագիր Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 2012-2015 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման:

**Աղբահանություն**

Կոչտ կենցաղային թափոնների հեռացում. Դիլիջանի համար հատկապես կարևոր խնդիր է հանդիսանում կոչտ թափոնների հավաքումն ու հեռացումը: Աղբահանությունն իրականացվում է համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից: Ներկայումս մարզի աղբավայրերում կշեռքներ տեղադրված չեն: Քանի որ ոչնչացումից առաջ աղբի կշռում

չի կատարվում, համայնքի կամ մարզի մակարդակով արտադրվող թափոնների ծավալի վերաբերյալ հստակ վիճակագրական տվյալները բացակայում են:

Դիլիջանում վերամշակման ենթակա աղբի համար նախատեսված հատուկ արկղեր տեղադրված չեն: Վերամշակման հնարավորություններ ստեղծելու շնորհիվ կարող է կրճատվել բնակչության կողմից արտադրվող թափոնների ծավալը և բարձրացվել մարդկանց իրազեկվածությունը բնապահպանական խնդիրների վերաբերյալ:

Դիլիջանի գործող աղբավայրն այլևս չի բավարարում քաղաքի կարիքները, քանի որ արդեն իսկ հասել է իր տարողության առավելագույն մակարդակին: Առաջարկվում է փակել աղբավայրը և կատարել տարածքի սանիտարական մշակում: Բնապահպանական հսկողությունը գործող աղբավայրում գտնվում է ոչ բավարար մակարդակի վրա, ուստի փակումը թույլ կտա որոշ չափով լուծել տեղանքի բնապահպանական խնդիրները, մասնավորապես՝ դադարեցնելով գետի աղտոտումն աղբավայրից ներթափանցող կենցաղային թափոններով: Համաճարակների առաջացումը և շրջակա միջավայրի աղտոտումը բացառելու համար աղբավայրերը պետք է փակվեն և մեկուսացվեն: Օրենքով սահմանված պահանջները Դիլիջանում լիարժեք չեն կատարվում, և չվերահսկվող աղբաթափությունը ստեղծում է լուրջ բնապահպանական խնդիրներ՝ վտանգելով տարածքի բնապատկերն ու հանրային առողջությունը:

Դիլիջանի համայնքում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է (993960) մ<sup>2</sup> մակերես: Համայնքում աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված ճանապարհով, հատուկ մասնագիտացված ձեռնարկության կողմից: Այդ նպատակով բնակելի շենքերին հարող տարածքներում տեղադրված է (65) միավոր աղբահավաք կոնտեյներ, որոնցից (35)-ը հնամաշ են և ունեն վերանորոգման կարիք: Պահանջվում է ևս (50) միավոր կոնտեյներ: Կոնտեյներների մեծ մասը հարթակներ չունեն, որի հետևանքով կենցաղային աղբը տարածվում է բնակելի շենքերի բակերով:

Աղբահավաք կոնտեյներները, աղբանոթները, աղբահավաք խցերը չեն լվացվում և ախտահանվում: Աղբատար փոխադրամիջոցների թափքերը, համապատասխան անհրաժեշտ պայմաններ չլինելու պատճառով, նույնպես չեն լվացվում և ախտահանվում:

Դիլիջանի քաղաքային բնակավայրում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը և տարեկան քանակը բերված է աղյուսակում: Բնակչության թիվը կազմում է 18675 մարդ՝ ըստ մարզպետարանի տվյալների (01.01.2015 դրությամբ):

Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է (3860) տ/տարի:

*Աղյուսակ ԿԿԹ-ի կազմը և տարեկան քանակը*

ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %	Թափոնների քանակը, տ/տարի
Աննդային թափոններ	21.3	822.18
Թուղթ	13.3	513.38
Փայտանյութ	6.9	266.34
Պլաստմասաներ	19.4	748.84
Ռետին և կաշի	2.0	77.2
Տեքստիլ	2.8	108.08
Ապակի	5.4	208.44
Երկաթ և նրա համաձուլվածքները, Գունավոր մետաղներ	1.9	73.34
Այլ թափոններ	27.0	1042.2
ԸՆԴԱՄԵՆԸ	100	3860

Կոշտ թափոնների հեռացման և ոչնչացման համակարգի մշակումը պահանջում է պետական-մասնավոր գործընկերության վրա հիմնված մոտեցման կիրառում: Առաջին հերթին անհրաժեշտ է ձեռք բերել աղբահանող տեխնիկա և կատարել գործող աղբավայրի սանիտարական մշակում: Ներկայումս քննարկվում է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի հետ համատեղ ծրագիր նախաձեռնելու հնարավորությունը, որի տեխնիկական գնահատումն ու ֆինանսավորումը կիրականացվի գերմանական «KfW» բանկի կողմից: Առաջին նախագծով նախատեսվում է գործող աղբավայրի փակում և կոշտ թափոնների հավաքման ու փոխադրման կայանի կառուցում:

**Արդյունաբերական թափոններ**

Դիլիջանի արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասերին: Արդյունաբերական թափոնները քաղաքային են:

Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են ՀՀ Առողջապահության նախարարության Տավուշի մարզի Առողջապահական պետական տեսության կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Չօգտագործված թափոնների քանակը կազմում է (1200) տ/տարի:

Արդյունաբերական թափոնների կազմը բերված է աղյուսակում:

*Աղյուսակ 1.7. Արդյունաբերական թափոնների կազմը և տարեկան քանակները*

Արդյունաբերական թափոնների բաղադրիչները	Ընդհանուր տ/տարի	քանակը	Ընդհանուր բաժնեմասը, %	քանակից
1	2		3	
Օգտագործման ենթակա թափոններ՝ յուղեր, թեփեր	4.5		0.138	
Տկուցքներ, կնճեռներ	2000		61.43	
Շինարարական օգտագործելի թափոններ	51		1.57	
Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական, մետաղական, օգտագործված տարաներ	1200		36.86	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3255.5</b>		<b>~100</b>	

**Օրգանական ծագման թափոններ**

Թափոններ առաջանում են նաև առողջապահության բնագավառի հաստատություններում:

Թափոնները դասակարգվում են /19/ հետևյալ կերպ՝

- A. Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների ~90) տոկոս: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, ստվարաթուղթ, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է (1)-(2) տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀ-ի կողմից հատկացված

աղբավայր:

В. Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է (15)-(20) կգ/օր:

Սրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

N 1 կարգ - մարդու անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):

N 4 կարգ - առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):

N 6 կարգ - Օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):

I կարգի թափոնները ներկա իրավիճակում այրվում են հրկիզման վառարանում, (15)-(20) կգ/օր արտադրողականության ծավալով:

Այրման համար օգտագործվում է դիզելային վառելիք: Այրման գործընթացում առաջացած վնասակարար նյութերը արտանետվում են մթնոլորտ՝ ստեղծելով մթնոլորտային օդի լրացուցիչ աղտոտվածություն:

Դիլիջան քաղաքային բնակավայրի առողջապահական հիմնարկների համար անհրաժեշտ է մշակել վարակիչ թափոնների վարակազերծման, ինչպես նաև մարդու անատոմիական թափոնների ոչնչացման ժամանակակից տեխնոլոգիաներ: Այս առաջարկը քաղաքի գլխավոր հատակագծում բացակայում է:

Անատոմիական և օրգանական թափոնների մասին տեղեկատվությունը տրվում է համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 4 մարտի 2008թ. 03-Ն հրամանի՝ «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին:

Թափոնների այրման վառարանները նախատեսվում են առողջապահական ձեռներկություններում առաջացած կենսաբանական թափոնների վնասազերծման (այրման) համար: Բնապահպանական և սանիտարական օրենսդրական պահանջները, ինչպես նաև համաշխարհային առողջապահական կազմակերպությունների (ՀԱԿ) երաշխավորագրերը ուղղված են բժշկական թափոնների ջերմային վնասազերծման օպտիմալ տեխնոլոգիաների կիրառմանը:

Ջերմային վնասազերծման տեխնոլոգիաները կիրարկվում են Բ և Գ դասին պատկանող բժշկական թափոններին, որոնք կենսաբանական հեղուկներով աղտոտվածության պատճառով կարող են համաճարակային ռիսկ ներկայացնել:

Վնասազերծման տեխնոլոգիաներին վերաբերվող հիմնական պահանջներն են՝

Վարակային աղբյուրների հեռացման երաշխիք,

Բժշկական թափոնների ծավալի փոքրացում,

Բժշկական թափոնների (ասեղներ, ներարկիչներ, ճկափողեր, դեղորայք և այլն) ոչ արտոնված օգտագործման բացառում:

Վնասազերծման տեխնոլոգիաներ կարող են հանդիսանալ այն տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն կտան հասնել թափոնների այս կամ այն աստիճանի սանացիայի՝ թափոնների վարակազերծում կամ ստերիլիզացիա, կամ այրում:

Առաջարկվում է բժշկական թափոնների այրումն իրականացնել բարձր ջերմաստիճանային վակուումային հորիզոնական էլեկտրական վառարանում՝ 900-1300 °C ջերմաստիճանում:

Այրման վառարանի հզորությունը 70-100կգ/օր:

Շինության հեռավորությունը հարակից շենքերից (սանիտարա-պաշտպանիչ գոտի) պետք է լինի 500մ:

Բժշկական թափոնների այրման վառարանը հորիզոնական էլեկտրական վակուումային վառարան է՝ 2.7x1.2x2.2մ չափերով:

Մնող ցանցի նոմինալ լարումը՝ Վ – 380:

Հզորությունը՝ ԿՎՏ – 70:

Վակուումը ստեղծվում է վակուում-պոմպի միջոցով:

Սահմանային վակուումը (սառը վիճակում) մմ սնդիկի սյուն – 8.10-4:

Վառարանի սառեցումն իրականացվում է ջրով:

Ջրի ծախսը կազմում է 1.8մ<sup>3</sup>/ժամ:

Սովորաբար ներդրվում է շրջադարձ ջրամատակարարման համակարգ:

Բժշկական կենսաբանական թափոնները տեղում (բժշկական հաստատություններ) վարակազերծվելուց հետո, հատուկ տարաներով բերվում են հրկիզարան, որտեղ կշռվում են և տրվում հրկիզման վառարան: Այրման ժամանակը տևում է 30 րոպե:

Հրկիզման ժամանակ առաջացած թեթև մոխիրը և գազերը վակուումի միջոցով հեռացվում են վառարանից, կլանվում են ջրով:

Կենսաբանական թափոնները դասվում են թափոնների առաջին կարգին, որոնց համար բարձրաստիճանային այրումը երաշխավորում է կողմնակի թունավոր ածխաջրածինների առաջացման հնարավորության բացառումը:

Այրման գործնթացի ավարտից հետո առաջացած մոխիրը պարբերաբար հեռացվում է վառարանի հատակից: Մոխրի քանակը կազմում է այրված թափոնների 1/1.15%-ը: Ենթակա են թաղման ՀՀ առողջապահության նախարարության կողմից նախատեսված վայրում:

## 1.2. Ֆիզիկա-աշխարհագրական և տեխնածին պայմանները

Հետազոտվող տարածքը գտնվում է Դիլիջան քաղաքային բնակավայրի հարավ-արևմտյան եզրամասում, Աղստև գետի միջին հոսանքում և աչքի է ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով: Այն ներկայացված է տեսածիրային քարտեզի վրա: Քաղաքի տարածքում և դրա շրջակայքում լայն տարածում են գտել սողանքային երևույթները, սելավները, փլզումները և այլ վտանգավոր երկրաբանական երևույթներ, որոնք բավական մեծ վնաս են պատճառում քաղաքի տնտեսությանը և ռեկրեացիոն համալիրին:

Տարածքային տեսանկյունից Դիլիջան քաղաքային բնակավայրը, այդ թվում նաև ուսումնասիրված տեղամասը, զբաղեցնում է Աղստև գետի միջին հոսանքի ավազանը: Հարավից նա շրջապատված է Փամբակի և Արեգունի լեռնաշղթաներով, իսկ հյուսիսից՝ Գուգարքի լեռների համակարգով: Տարածքի ռելիեֆը կտրատված է և ունի բլրա-ալիքային մակերես:

Մորֆոստրուկտուրային տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը համարվում է Դիլիջանի իջվածքի հյուսիսային թևի մասը, որն իրենից ներկայացնում է Դիլիջանի գրաբենի հյուսիսային լանջը՝ ունենալով դեպի հարավ նշանակալի թեքություն:

Ուսումնասիրվող տարածքի հյուսիսային մասը սահմանափակվում է Աղստև գետի հյուսիսային վերողողահունային դարավանդներով: Տեղանքի ժամանակակից ռելիեֆի միջին թեքությունը կազմում է 15<sup>0</sup>-25<sup>0</sup>: Տարածքում լայն տարածում ունեն սողանքավտանգ տեղամասերը: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են (1270) մ-ից մինչև (1380) մ:

Տարածքի գեոմորֆոլոգիական բնութագիրը հիմնականում պայմանավորված է Աղստև գետի հովիտով, որի կառուցվածքը սիմետրիկ է և ունի մոտ ութ դարավանդներ: Ուսումնասիրված տարածքը գտնվում է գետից մինչև (70) –(80)մ բարձրության վրա, որտեղ տեղակայված է գետի հինգերորդ դարավանդը: Առաջին դարավանդը զբաղեցնում է գետի ավալին մասը (ողողադաշտը) և ունի մինչև 1մ բարձրություն: Երկրորդ դարավանդի բարձրությունը գետի մակարդակից բարձր է մոտ (10)-(15) մ, երրորդ, չորրորդ և հինգերորդը համապատասխանաբար ունեն (20)-(40), (40)-(60) և (60)-(80) մ բարձրություններ:

Դարավանդների առկայությունը և նրանց ռելիեֆների ձևավորումը պայմանավորված է երկրաբանական գործընթացներով, որոնք տեղի են ունեցել սկսած Էոցենից մինչև ժամանակակից դարաշրջանը ներառյալ: Տարածքում տեղի են ունեցել ակտիվ տեկտոնական պրոցեսներ (վերին օլիգոցեն-ներքին միոցեն), որի ժամանակ առաջացել են զգալի ծալքաձևավորումներ և հզոր հրաբխային ժայթքումներ: Տարածքի ռելիեֆի հետագա ձևավորումը հիմնականում պայմանավորված է էկզոգեն պրոցեսներով: Վերջնականորեն էնդոգեն և էկզոգեն գործոնների բարդ փոխազդեցությունը ձևավորել է տարածքի ներկա ռելիեֆի տեսքը, որտեղ զգալի են նաև սողանքային երևույթների հետևանքները:

Երկրաբանական պայմանները, ուսումնասիրվող տարածքը պատկանում է Կրասնոսելսկ-Դիլիջան սինկլինալային գոտուն, գտնվում է Ձկնագետ-Ֆիոլետովո-Վերին Չիչխան անտիկլինալից հյուսիս և հանդիսանում է Շիրակ-Սևան սինկլինորիումի խոշոր կառուցվածքային տարրերից մեկը: Սինկլինալի առանցքային գիծն ունի հյուսիս-արևմտյան տարածում:

Երկրաբանական կառուցվածում (վերևից ներքև) հանդիպում են չորրորդական և ժամանակակից գետային նստվածքներ: Առաջին հերթին դրանք դարավանդային նստվածքներն են, որոնք զբաղեցնում են գետահովտի տարածքը:

Ավելի խորը հանդիպում են երրորդական (էոցենի) հասակի հրաբխածին ապարներ, որոնք ներկայացված են հիմնականում տուֆաբեկչիաներով, անդեզիտներով և պորֆիրիտներով: Այստեղ լայն տարածում ունեն այդ ապարների փոփոխված, հողմնահարված և ճեղքավոր տարատեսակները: Ուսումնասիրված տեղամասում ավելի խորքային ապարները Աղստև-Բլրբան գետերի ջրբաժան հատվածներում ներկայացված են ինտրուզիվ ապարներով, որոնք հասում են էոցենի հրաբխածին համալիրը և ներկայացված են պորֆիրիտներով նրանց տուֆերով և տուֆաբեկչիաներով:

Տեկտոնական տեսանկյունից ուսումնասիրված տարածքն ունի բավականին բարդ կառուցվածք: Առանձին մասնագետներ նշում են, որ Աղստև գետի ուսումնասիրված հատվածը պատկանում է լայնածավալ սինկլինալի և կազմված է հիմնականում էոցենի հրաբխածին ապարներից: Փաստերի առկայությունը, ինչպիսիք են հին դարավանդների տեղակայումը համեմատաբար բարձր նիշերի վրա, առանձին տեղերում հին թաղված լճային նստվածքները (որոնք տեղակայված են թաղված գոգավորություններում) թույլ են տալիս անել եզրահանգում տեղամասի զգալի տեկտոնական շարժումների վերաբերյալ:

Դրանք տեղի են ունեցել հիմնականում չորրորդական ժամանակահատվածում: Շրջանում հայտնի է նաև զգալի խախտումների համալիր ցանց, որի հիմնական ուղղությունը հանդիսանում է հյուսիս-արևմուտք - հարավ-արևելք ուղղությունը:

#### 1.2.1. **Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները**

Ուսումնասիրված տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական հետևյալ էլեմենտները՝ այլուվիալ պրոլյուվիալ ակումուլյատիվ հարթավայր, մակերևույթի թեքությունը չի գերազանցում 10° թեք լանջեր, ձորակներ, ողողահուններ, սելավատարներ:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևույթային համատարած լվացումով մակերևույթային տեղումներով: Մակերևույթային էռոզիան լավ նկատելի է թեք լանջերի վրա: Գարնանային և աշնանային անձրևների ժամանակ առաջանում են հեղեղատներ:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը ըստ նախկինում տարբեր կազմակերպությունների կողմից փորված հորատանցքերի տվյալների ներկայացված է հետևյալ շերտերով

շերտ թիվ 1. Ավազակավային գրունտ խճավազի պարունակությամբ (10)-(20) տոկոս, կիսապինդ և ձիգ պլաստիկ թանձրության: Հզորորությունը տատանվում է (1.2) - (2.8) մետր:

շերտ թիվ 2. Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև (35) տոկոս քարակտորների պարունակությամբ, փոշենման



ավագի ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային, տարածքում կավավազները ներկայացված են նաև գերնստող տարատեսակով:

Հզորությունը տատանվում է (1.8) – (4.3) մետր:

Չերտ թիվ 3. Ճալաքարա-կոպճային գրունտ, մանրագլաքարերի պարունակությամբ, ավազային և կավավազային լցոնով մինչև (10)-(30) տոկոս:

Չերտ թիվ 4. Էճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև (30)-(35) տոկոս, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով: Հզորությունը տատանվում է (2.3) – (4.5) մետր:

Չերտ թիվ 5. Բեկորախճային գրունտ տեղ-տեղ թույլ և միջին հղկվածության ճալաքարակոպճային կազմով, կապտականաչավուն և մոխրագույն ավազակավային լցոնով մինչև (10)-(30) տոկոս, խիտ և միջին խտացվածության, թույլ խոնավ: Բացահայտված հզորությունը (15.0) մետր:

Չերտ թիվ 6. Մանրախճային, խճավազային գրունտ կավավազային լցոնով մինչև (20)-(30) տոկոս, որոշ մասերում առանձին մանրաբեկորներով:

Չերտ թիվ 7. Պորֆիրիտ մոխրագույն, ճեղքավորված:

Գրունտային ջրերը փորված հորատանցքերով Աղստև գետի հովտում բացահայտվել են (12.0)-(3.0) մ խորություններում, լանջերի վրա՝ (10.0)-(15.0) մ խորություններում:

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ուսումնասիրման համար օգտագործվել են Տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների հետևյալ տարատեսակները.

Կավային գրունտներ (Չերտեր թթ. 1, 2)

Կոպճային գրունտներ (Չերտեր թ. 3, 4)

ժայռային գրունտներ (Չերտ թ. 5)

Գրանցումները կատարվել են սեյսմիկ զոնդավորման մեթոդով երկայնական առաձգական ալիքների տարածման արագությունների որոշման նպատակով:

Տարածքի գրունտային պայմանների գնահատման հիմնական մեթոդներից մեկն է հանդիսանում սեյս-միկ կոշտությունների մեթոդը: Գրունտների սեյսմիկ կոշտությունները որոշելու համար անհրաժեշտ է որոշել երկայնական ալիքների տարածման արագությունները ուսումնասիրված տարածքը բնորոշող գրունտային պայմանների համար:

Տարածքի (27) կետերում կատարվել են սեյսմիկ զոնդավորման գրանցումներ, որոնց համար որոշվել են երկայնական սեյսմիկ ալիքների տարածման արագությունները:

Գործիքային գրանցումներով գրանցված կետերի տեղադիրքը ներկայացված է գրաֆիկական հավելված (1)-ում:

Կիրառվել է բեկված ալիքների գրանցման եղանակը: Սեյսմիկ ալիքները հարուցվել են (20) կիլոգրամանոց մուրճի օգնությամբ:

Աշխատանքների արդյունքները

Գործիքային գրանցումների արդյունքներով որոշվել են շերտերում առաձգական ալիքների տարածման արագությունները, հաշվարկվել են առաձգական ալիքների տարածման միջին արագությունները, որոնք օգտագործվել են սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների հաշվարկներում:

Հաշվարկներն իրականացվել են հետևյալ բանաձևով՝

$$a = 10^{(0.3 \times IR - 3.1)}$$

որտեղ՝ IR - ն ինտենսիվությունն է բալերով

a - ն հորիզոնական արագացումն է g - ի մասերով

Գրունտային պայմաններից կախված սեյսմիկ բալականության փոփոխության մեծությունը գնահատվել է սեյսմիկ կոշտությունների մեթոդով:

Հաշվարկներն իրականացվել են հետևյալ բանաձևով՝

$$\Delta l = 1.67 \lg (V_{0\rho_0} / V_{i\rho_i}),$$

որտեղ՝  $V_{0p0}$  - էտալոնային գրունտի ակուստիկ կոշտությունն է;

$V_{ip}$  - ուսումնասիրվող գրունտի ակուստիկ կոշտությունն է;

Գրունտային ջրերի հաշվին սեյսմիկ ազդեցության ուժգնության փոփոխությունը բալերով գնահատվել է հետևյալ բանաձևով՝

$$\Delta I_{.c} = Ke^{-0.04h+h},$$

որտեղ՝

$h$  - գրունտային ջրերի տեղադրման խորությունն է երկրի մակերևույթից հաշված:

$K$  - լիթոլոգիական կազմից կախված գործակից:

Ուսումնասիրված տարածքի համար հաշվարկներում գրունտային ջրերի մինիմալ խորությունը, Աղստև գետի ափամերձ հարթավայրային տարածքների համար, ընդունվել է (5) մ, լանջերի վրա՝ (10)մ:

Հաշվարկների համար, որպես էտալոնային ընդունվել է  $V_0^0=1050$  ակուստիկ կոշտությունը:

Այսպիսով ելակետային սեյսմիկ ազդեցության ուժգնությունը բալերով հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$I = \Delta I + I_0 + \Delta I_{.c},$$

Սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների հաշվարկների համար տարածքի ելակետային սեյսմիկ վտանգը համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթի գնահատվել է (0.4) g:

Հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակում:

*Աղյուսակ*

ՍՁ-12	20 0	520 0	210 0	6,7	5, 7	17, 6	1,35	1,4 7	1,8 4	1,6 6	569	945	9	0,07 6	9,0 9	0,0 09	0,4 2
ՍՁ-13	20 0	58 0	200 0	6,6	4, 9	18, 5	1,35	1,5 1	1,8 2	1,6 7	590	983	9	0,04 8	9,0 6	0,0 09	0,4 1
ՍՁ-14	45 0	125 0	210 0	5,8	6	18, 2	1,64	1,7 8	1,8 4	1,7 9	113 6	202 9	9	- 0,48	8,9 5	0,42 6	0,3 8
ՍՁ-15	19 0	58 0	200 0	6,8	5, 2	18	1,34	1,5 1	1,8 2	1,6 6	560	928	9	0,09	9,1	0,0 09	0,4 3
ՍՁ-16	20 0	79 0	195 0	7,7	5, 7	16, 6	1,35	1,6 2	1,8 1	1,6 6	552	915	9	0,1	9,11	0,0 09	0,4 3
ՍՁ-17	46 0	135 0	200 0	4,9	5, 1	20	1,65	1,8	1,8 2	1,7 9	122 7	2195	9	- 0,53	8,8 9	0,42 6	0,3 7
ՍՁ-18	41 0	120 0	210 0	6,3	2, 7	21	1,61	1,7 6	1,8 4	1,7 8	108 6	1935	9	- 0,44	8,9 8	0,42 6	0,3 9
ՍՁ-19	45 0	96 0	195 0	4,5	4, 9	20, 6	1,64	1,6 8	1,8 1	1,7 6	116 8	2061	9	- 0,49	8,9 4	0,42 6	0,3 8
ՍՁ-20	20 0	56 0	200 0	6,5	6	17, 5	1,35	1,4 9	1,8 2	1,6 5	575	952	9	0,07 1	9,0 8	0,0 09	0,4 2
ՍՁ-21	48 0	145 0	195 0	6,4	5, 2	18, 4	1,6	1,8 3	1,8 1	1,7 8	114 0	2031	9	- 0,48	8,9 5	0,42 6	0,3 8
ՍՁ-22	45 0	98 0	200 0	5,5	5, 7	18, 8	1,64	1,6 9	1,8 2	1,7 6	109 5	1929	9	- 0,44	8,9 8	0,42 6	0,3 9
ՍՁ-23	45 0	115 0	195 0	4,6	5, 7	19, 7	1,64	1,7 5	1,8 1	1,7 7	118 4	209 9	9	-0,5	8,9 2	0,42 6	0,3 8
ՍՁ-24	18 0	62 0	200 0	7,4	4, 9	17, 7	1,32	1,5 3	1,8 2	1,6 5	518	854	9	0,15	9,1 6	0,0 09	0,4 4

ՍՁ-25	20 0	570	200 0	7,3	6	16, 7	1,35	1,5	1,8	1,6	543	892	9	0,11 8	9,13	0,0 09	0,4 3
ՍՁ-26	18 5	63 0	190 0	7	5, 2	17, 8	1,33	1,5 4	1,8	1,6 4	540	888	9	0,12 1	9,13	0,0 09	0,4 4
ՍՁ-27	25 0	110 0	195 0	7,1	5, 7	17, 2	1,43	1,7 3	1,8	1,7 1	705	1203	9	-0,1	8,9 1	0,0 09	0,3 7
ՍՁ-12	20 0	520	210 0	6,7	5, 7	17, 6	1,35	1,4 7	1,8	1,6 6	569	945	9	0,07 6	9,0 9	0,0 09	0,4 2
ՍՁ-13	20 0	58 0	200 0	6,6	4, 9	18, 5	1,35	1,5 1	1,8	1,6 7	590	983	9	0,04 8	9,0 6	0,0 09	0,4 1
ՍՁ-14	45 0	125 0	210 0	5,8	6	18, 2	1,64	1,7 8	1,8	1,7 9	113 6	202 9	9	- 0,48	8,9 5	0,42 6	0,3 8
ՍՁ-15	19 0	58 0	200 0	6,8	5, 2	18	1,34	1,5 1	1,8	1,6 6	560	928	9	0,09	9,1	0,0 09	0,4 3
ՍՁ-16	20 0	79 0	195 0	7,7	5, 7	16, 6	1,35	1,6 2	1,8	1,6 6	552	915	9	0,1	9,11	0,0 09	0,4 3
ՍՁ-17	46 0	135 0	200 0	4,9	5, 1	20	1,65	1,8	1,8	1,7 9	122 7	2195	9	- 0,53	8,8 9	0,42 6	0,3 7
ՍՁ-18	41 0	120 0	210 0	6,3	2, 7	21	1,61	1,7 6	1,8	1,7 8	108 6	1935	9	- 0,44	8,9 8	0,42 6	0,3 9
ՍՁ-19	45 0	96 0	195 0	4,5	4, 9	20, 6	1,64	1,6 8	1,8	1,7 6	116 8	2061	9	- 0,49	8,9 4	0,42 6	0,3 8
ՍՁ-20	20 0	56 0	200 0	6,5	6	17, 5	1,35	1,4 9	1,8	1,6 5	575	952	9	0,07 1	9,0 8	0,0 09	0,4 2
ՍՁ-21	48 0	145 0	195 0	6,4	5, 2	18, 4	1,6	1,8 3	1,8	1,7 8	114 0	2031	9	- 0,48	8,9 5	0,42 6	0,3 8
ՍՁ-22	45 0	98 0	200 0	5,5	5, 7	18, 8	1,64	1,6 9	1,8	1,7 6	109 5	1929	9	- 0,44	8,9 8	0,42 6	0,3 9
ՍՁ-23	45 0	115 0	195 0	4,6	5, 7	19, 7	1,64	1,7 5	1,8	1,7 7	118 4	209 9	9	-0,5	8,9 2	0,42 6	0,3 8

Հաշվարկների արդյունքներով կազմվել է Դիլիջան քաղաքային բնակավայրի գետափնյա հատվածի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը:

Կազմված սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզից երևում է, որ Դիլիջան քաղաքային բնակավայրի գետափնյա հատվածի տարածքի համար սպասվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են (0.37) g – (0.44) g տիրույթում:

### **Եզրակացություններ և առաջարկություններ**

Դիլիջան քաղաքային բնակավայրի գլխավոր հատակագծի մշակման ժամանակ սեյսմիկ վտանգի գնահատման համար որպես հիմք անհրաժեշտ է ընդունել կից գծագրերում ներկայացված սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզում ներկայացված արժեքները:

Քարտեզը չի կարող հիմք ծառայել առանձին տեղամասերում շենքերի նախագծման աշխատանքների համար:

### **Տեխնածին գործունեության հետևանքների ուսումնասիրություն:**

Անկախ նշված տեղամասերի ուսումնասիրության և բարդության աստիճանից անհրաժեշտ է գնահատել դրանց վրա տեխնածին գործունեության հետևանքները: Դրանք են.

- Նախատեսվող շինարարական տարածքներում փոստրակների առկայությունը, որոնք կարող են անձրևաջրերի և հալոցքային ջրերի համար ծառայել որպես մակերևութային ջրերի կուտակման տեղամասեր:
- Լանջերի, տարբեր ժամանակներում և տարբեր նպատակներով կտրումը և մեծածավալ գրունտների տեղափոխումը:
- Լանջերի կայունության վրա տարբեր բնույթի դինամիկ, վիբրացիոն պրոցեսների հնարավոր ազդեցությունների բացահայտումը, երկարաժամկետ ոռոգման տարածքների առկայություն և օգտագործվող ջրերի խորքային ներթափանցման հնարավորությունների պարզաբանումը:

#### Հանձնարարականներ

Այսպիսով, որպես նախատեսվող ուսումնասիրությունների ընդհանուր եզրակացություն և հետագա նախագծային փուլերի մշակման նախանախագծային աշխատանքների հանձնարարականներ հարկ է նշել հետևյալը.

- Համալիր ուսումնասիրությունների (ինժեներա-երկրաֆիզիկական, ինժեներա-երկրաբանական, այդ թվում հորատման և լաբորատոր-գետոտեխնիկական, ջրաերկրաբանական) արդյունքում կատարվելու է կառույցների տարածքների պիտանիելիության գնահատում, հաշվի առնելով շինարարության հետևանքով հնարավոր փոփոխությունները:
- Ինժեներական նախնական միջոցառումների բնույթի որոշում, որոնք անհրաժեշտ են տարածքներում շինարարական լուծումներ տալու համար:
- Հիմնատակի գրունտների ընտրություն և դրանց պիտանիելիության գնահատում:
- Նախագծվող շենքերի և կառույցների հնարավոր նստվածքների կանխատեսում:
- Սողանքավտանգ տեղամասերի կայունության գնահատում, այդ թվում տարբեր շինարարական բեռնվածքների պայմաններում:

#### **Դիլիջան համայնքում շահագործվող ՀԷԿ-երը**

Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով ծրագրի շրջանակներում փորձագիտական խումբը այցելեց «Աղստև 1» փոքր ՀԷԿ: «Աղստև 1» փոքր ՀԷԿ-ը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի վարչական տարածքում, կառուցված է անդրսահմանային Աղստև գետի վրա (գետի երկարությունը՝ 133 կմ: Հայաստանի տարածքում գետի երկարությունը 99 կմ է: Այն թափվում է Քուռի մեջ): ՓՀԷԿ-ը շահագործում է «Էլէնէքս ՍՊԸ-ն»:

Մոնիտորինգի արդյունքում փորձագիտական խումբը պարզեց.

- ՓՀԷԿ-ը շահագործման է հանձնվել 2010թ-ին:
- ՓՀԷԿ-ի ջրառի վայրը «Դիլիջան» ազգային պարկի Շամախյան տեղամասում է՝ Ֆիոլետովո համայնքից մեկ կմ ներքև, Աղստև գետի հոսանքի ուղղությամբ:
- Ձկնանցարանը կառուցված է կիսալաբիրիինթոսային մոդելի հիման վրա: Նման կառուցվածքը բավարար է գետում բնակվող խոշոր և միջին չափերի ձկների տեղաշարժի համար, սակայն որոշ դժվարություններ կարող է հարուցել մանր ձկնատեսակների բնականոն կենսագործունեության համար:
- Կա ձկնապաշտպան ցանց, որի մաքրումը կատարվում է ավտոմատացված կերպով, իսկ կուտակված աղբն անմիջականորեն լցվում է գետի չոր հուն, որտեղից վարարումների ժամանակ կարող է ջուրը քշել գետ:

- Դիտարկման պահին գետի նախկին հունը ջրառից հետո գրեթե ամբողջությամբ չորացած էր, իսկ ձկնացարանով հոսող ջուրը բավարար ծավալներ չէր կարող ապահովել գետի ստորին հոսանքից դեպի վեր ձվադրման բարձացող ձկնատեսակների համար եւ գետային էկոհամակարգի պահպանման համար:
- Տեսողական զննումով բնապահպանական ելքը ձկնուղում 2-3 անգամ պակաս էր նախատեսվածից:
- Աղստև գետի այս տեղամասում հանդիպում են հետևյալ հիմնական ձկնատեսակները՝ կարմրախայտ *Salmo fario*, Կուրի բեղաձուկ *Barbus cyri*, արևելյան տառեխիկ *Alburnoides eichwaldii*, Սևանի կողակ *Capoeta sevangi* /գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում/:
- ՓՀԷԿ-ի համար բնապահպանական թողքը ՓՀԷԿ-ի կառուցման նախագծով սահմանված է 0.14խմ/վ, իսկ Ջրօգտագործման թույլտվությամբ՝ 0.28 խմ/վ:
- Ջրօգտագործման թույլտվություն ՓՀԷԿ-ը ներկայացրել է երկարացման:
- «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի տվյալներով՝ 2014թ-ին ՓՀԷԿ-ը աշխատել է 12 ամիս՝ արտադրելով 7919708 կՎտ էլեկտրաէներգիա:
- ՓՀԷԿ-ի շենքում տեղադրված են երկու չինական արտադրության ագրեգատներ: 2-ն էլ աշխատում էին:
- Կայանային հանգույցում գործում է ավտոմատ կառավարման համակարգ:
- Ջրառում ջրի մակարդակի ավտոմատ կառավարման համակարգը բացակայում է:
- Ցանկապատված է տրանսֆորմատորային ենթակայանը:
- 2 տրանսֆորմատորները կահավորված են յուղորսիչ համակարգով:
- Ջրառի կետում ջրաչափական դիտակետ չկա, ինչի համար ՓՀԷԿ-ը 2015թ-ին բնապահպանական տեսչության կողմից տուգանվել է 200 հազար դրամի չափով:
- Կայանային հանգույցի տարածքում ՓՀԷԿ-ին ներկայացվող պահանջներին և նախագծային լուծումներին համապատասխան իրականացվել է կառուցապատման, բարեկարգման և բավարար կանաչապատման միջոցառումներ: Տնկվել են պտղատու և սոճազգի ծառատեսակներ:
- Ըստ նախագծի՝ կենցաղային կեղտաջրերի հեռացումը պետք է իրականացվեր մաքրման կայանի միջոցով, իրականում կառուցվել է անջրթափանց հոր:
- Ըստ ընկերության՝ դերիվացիոն խողովակաշարի երկարությունը 5750 մ է, իսկ ըստ նախագծի՝ 5428մ: Խողովակաշարն անցնում է «Դիլիջան» ազգային պարկի Շամախյան տեղամասով:
- Ըստ ՓՀԷԿ-ի կառուցման նախագծի՝ պետք է հասվեր 270 ծառ և 1130 մանր թփուտ: Սակայն ընկերության տնօրենի պնդմամբ ծառահատում չի կատարվել:
- Նախագծով նախատեսված է 400 ծառի և 1200 թփի տնկում: Ըստ ընկերության՝ տնկվել է մոտ 20 ծառ:
- Հողի բերրի շերտի պահպանմանը եւ օգտագործմանը ներկայացվող պահանջները կատարված են:
- Լանդշաֆտի խախտում, սողանքային երեւոյթներ չկան:
- Ազատ ջրօգտագործման պահանջները կատարվում են:

#### Առաջարկություններ՝

- Ջրառում տեղադրել ջրաչափական սարք եւ ջրառի ավտոմատ կառավարման համակարգ:
- Ծշտել ՓՀԷԿ-ի համար օգտագործվող ջրաքանակը և սահմանված բնապահպանական ելքի չափաքանակը և անհրաժեշտության դեպքում վերանայել ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակները:
- Ձեռնարկել միջոցառումներ աղբի հեռացման համար:





«Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտա գործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում փորձագիտական խումբը այցելեց «Խաչարձան» փոքր ՀԷԿ: «Խաչարձան» փոքր ՀԷԿ-ի կայանը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան համայնքի վարչական տարածքում, իսկ գլխամասը՝ «Դիլիջան ազգային պարկում: ՓՀԷԿ-ը կառուցված է Խաչարձան գետի վրա (գետի երկարությունը՝ 18կմ): ՓՀԷԿ-ը շահագործում է «ԳՈՇ ՀԷԿ ՍՊԸ-ն:

Մոնիտորինգի արդյունքում փորձագիտական խումբը պարզեց.

- ՓՀԷԿ-ը շահագործման է հանձնվել 2009թ-ից:
- Ըստ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովի 2015թ-ի հունվարի 1-ի տեղեկանքի՝ ՓՀԷԿ-ի հաշվարկային ճնշումը 54.6մ, ՓՀԷԿ-ի կողմից օգտագործվող հաշվարկային ելքը՝ 1.5մ<sup>3</sup>/վ է, դրվածքային հզորությունը 650 կՎտ է, էլեկտրաէներգիայի փաստացի օգտակար առաքումը՝ 1.3500625 մլն.կՎտ.ժամ է, լիցենզիայի ժամկետը՝ 23.12.2009- 23.12.2024թթ., ջրօգտագործման թույլտվության ժամկետը՝ 17.12.2009-17.12.2012թթ.:
- Գլխամասում առկա է 9 աստիճաններով ձկնացարան: Ձկնացարանի կառուցվածքը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում գետում բնակվող ձկների՝ հատկապես փոքր չափեր ունեցող Կուրի բեղաձկանի և արևելյան տառեխիկի սեզոնային տեղաշարժերի համար: Ձկնացարանի ամենավերին մասում առկա էին ավազով լցված տոպրակներ, որոնցով կարող էին փակել ձկնանցարանի մուտքը վերևից, որի արդյունքում գետի ջուրը կհոսեր միայն դեպի խողովակաշարը: Ընդհանուր առմամբ, գլխամասի ձկնանցուղին լիարժեք չի կարող ապահովել գետում բնակվող ձկների բնականոն տեղաշարժը:
- Առկա է ձկնապաշտպան ցանց:
- Խաչարձան գետում՝ ՓՀԷԿ-ի գլխամասի տարածքում կարող են հանդիպել հետևյալ տեղաբնակ ձկնատեսակները՝ կարմրախայտ *Salmo fario*, Կուրի բեղաձուկ *Barbus cyri*, արևելյան տառեխիկ *Alburnoides eichwaldii*: Կարմիր գրքում գրանցված ձկնատեսակներ չկան:
- Բնապահպանական թողքը «Խաչարձան» ՓՀԷԿ-ի նախագծով սահմանված է 0.06խմ/վ, իսկ Ջրօգտագործման թույլտվության մեջ բնապահպանական թողքի չափաքանակ սահմանված չէ: Ջրօգտագործման թույլտվության մեջ նշված չէ, թե քանի ամիս ՓՀԷԿ-ը կարող է ջրառ իրականացնել: Նշված է, որ տարեկան ՓՀԷԿ-ը կարող է վերցնել 19360.0 հազար խմ ջուր:
- Դիտարկման պահին բնապահպանական ելքի անցումը դեպի գետ ապահովված էր ձկնանցարանով, սակայն տեսողական զննումով այն պակաս էր ընդունված բնապահպանական թողքի չափաքանակից և բավարար չէր ինչպես ձկների տեղաշարժի, այնպես էլ գետի /որը համարվում է հատուկ պահպանվող տարածքի գետ/ էկոհամակարգի պահպանման համար:
- «Խաչարձան» ՓՀԷԿ-ի 1740 մ երկարությամբ ճնշումային խողովակաշարի մոտ 1600 մետրն անցնում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքով: Այն նախագծով պետք է լիներ ստորգետնյա: Սակայն իրականում յուրաքանչյուր 700մմ տրամագծով 1740 մետր երկարությամբ 2 խողովակաշարները ամբողջովին վերգետնյա են, ինչի արդյունքում աղավաղվել է հատուկ պահպանվող տարածքի բնական լանդշաֆտը: Խողովակաշարն իր ամբողջ երկարությամբ խոչնդոտում է վայրի կենդանիների բնական տեղաշարժին:
- Խաչարձան գետի վրա կառուցված «Խաչարձան» ՓՀԷԿ-ի դերիվացիայի երկարության (1740մ) տոկոսային հարաբերությունը գետի (18կմ) երկարության հետ կազմում է 9.66%:
- ՓՀԷԿ-ի շենքում, նախագծային լուծումներին համապատասխան, տեղադրված են տեղական արտադրության երեք ագրեգատներ, սակայն աշխատում էր մեկը: Համաձայն ՓՀԷԿ-ի ղեկավարության՝ երեք ագրեգատներն աշխատում են միայն ապրիլ-մայիս ամիսներին:
- «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի տվյալներով՝ «Խաչարձան» ՓՀԷԿ-ը 2014թ-ին աշխատել է 12 ամիս՝ արտադրելով 844658 կՎտ էլեկտրաէներգիա:

- Ցանկապատված է միայն ՓՀԷԿ-ի տրանսֆորմատորային ենթակայանը, որտեղ տեղադրված է մեկ տրանսֆորմատոր: Այն կահավորված է յուղահավաք համակարգով:
- Կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախագծին համապատասխան տեղադրված է անջրթափանց հորով զուգարան:
- Ըստ նախագծի՝ նախատեսված է 15 հատ փշատերև ծառի տնկում և սիզամարգով կանաչապատում, ինչը չի արվել: ՓՀԷԿ-ի կայանի հարեանությամբ գտնվում են Խաչարձան համայնքի արոտավայրերը:
- Ազատ ջրօգտագործման պահանջը չի կատարվում, քանի որ ՓՀԷԿ-ի վերգետնյա խողովաշարը փակել է գետ մոտենալու մուտքը:
- Ջրառում տեղադրված է քանոն, որն, ըստ ընկերության ներկայացուցիչների, կնքված է:
- Համապատասխան բնապահպանական մարմնի կողմից կնքված ջրաչափիչ սարք ջրառում չկար:
- Կայանային հանգույցում գործում է կիսավտոմատ կառավարման համակարգ:
- Ջրառում ջրի մակարդակի ավտոմատ կառավարման համակարգը բացակայում է:
- ՓՀԷԿ-ը 2015թ-ին բնապահպանական տեսչության կողմից տուգանվել է 200 հազար դրամի չափով:

### **Առաջարկություններ**

- Համապատասխանեցնել ձկնացարանի կառուցվածքն այդտեղ բնակվող ձկների կենսական պահանջներին:
- Վերանայել ՓՀԷԿ-ի հաշվարկային և բնապահպանական ելքերի չափաքանակները և ըստ այդմ ՋԹ-ում սահմանել և բնապահպանական թողքը, և ամսական ՓՀԷԿ-ին հատկացվող ջրաքանակը:
- Գլխամասից հեռացող վերգետնյա խողովակները /2 հատ 720 մմ-ոց/ լրացուցիչ արգելքներ կարող են ստեղծել «Դիլիջան» ազգային պարկում ապրող կաթնասունների և այլ կենդանիների ազատ տեղաշարժի համար: Ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված գետային և ցամաքային էկոհամակարգերի պահպանմանը /համապատասխան մասնագետների խորհրդատվությամբ, կամ մասնակցությամբ/:
- Ջրառում տեղադրել համապատասխան բնապահպանական մարմնի կողմից կնքված ջրաչափիչ սարք եւ ջրի մակարդակի ավտոմատ կառավարման համակարգ:
- Կայանային տարածքում իրականացնել կանաչապատման աշխատանքներ:





### **Աղստև գետի մաքրման աշխատանքներ**

Աղստևը Հայաստանի խոշորագույն գետերից է եւ համարվում է Տավուշի մարզի ջրային զարկերակը: Սակայն Իջևան քաղաքի եւ տարածաշրջանի մի շարք համայնքների համար ծառայում է որպես աղբավայր, որի մեջ է թափվում ինչպես կենցաղային, շինարարական, այնպես էլ օրգանական ու ու քիմիական թափոններ:

Հարակից շենքերի բնակիչներն աղբը գետն են նետում հենց պատուհաններից, գետաբերանին կառուցված հասարակական սննդի օբյեկտների և շուկաների աշխատակիցները սննդի մնացորդները, մորթած անասունների ներքին օրգաններն ու արտաթորանքը լցնում են գետը, հույսները դնելով հեղեղումների վրա, մտածելով, որ գետի վարարումների ժամանակ ջուրն այդ ամենը կքշի կտանի դեպի հարեւան Ադրբեջան:

Մի շարք գյուղական ու քաղաքային համայնքների կոյուղաջրերը առանց մաքրման լցվում են գետը, ու սա աղտոտման միակ պատճառը չէ: Գետի երկայնքով կառուցված են հասարակական մի շարք օբյեկտներ, գետաբերանին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակիչները, մսի պասաժների տերերը իրենց շինարարական աղբը, մորթած անասունների մորթիներն ու ներքին օրգանները թափում են անմիջապես Աղստևի մեջ: Ունենալով նման խոշոր գետ ու չօգտագործել գետի ջուրը ոռոգման նպատակով, հնարավոր չէ: Մանավանդ, որ գետը մի շարք գյուղերով է անցնում:



### **Հանքավայրեր**

Ըստ ՀՀ ընդերքի վարչության տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք, Խաչարձան և Հովք համայնքների վարչական սահմանների տարածքներում պարփակված հանքավայրերի վերաբերյալ տեղեկություններ՝

1. Դիլիջան համայնք՝ Պապանինո-Շամախյանի կավի հանքավայր:
2. Հաղարծին համայնք՝ Հաղարծինի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի մի մասը, Կոյբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի Աջի-Յալ տեղամասը և Կարմիր ճալայի հանքային ներկերի հանքավայր:
3. Թեղուտ համայնք՝ Զուխտակվանքի տուֆի հանքավայր և Հաղարծինի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի մի մասը:
4. Գոշ համայնք՝ Կոյբիշևի տուֆի, Գոշի պորֆիրիտների և Գոշի տուֆի հանքավայրեր:
5. Հովք համայնք՝ Հովքի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամաս, Հովքի և Աղստևի ավազակոպճային խառնուրդի հանքավայրեր:

Հաղարծին համայնքի Կոյբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի Աջի-Յալ տեղամասը շահագործվում էր «Դավիթ» ՍՊ ընկերության կողմից, որի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2018 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի N 177-Ա հրամանով:

Հովք համայնքի Հովքի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը  
շահագործվում է «Աղստևի հովիտ» ՍՊ ընկերության կողմից:  
Խաչարձան և Աղավնավանք համայնքներում հանքավայրեր հաշվառված չեն: